

ԴԱՅԼԵՏ


89

ԷՂԱՐԻԱԾԻՆ



Դ
2001

AM 146




ԾԷ ՏՄՒԻ

ՀԱՅՈՒԹՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՍՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՄՐԲՈՅ ԷՇԽԱԾՆԻ

Լ Կ Ր Ե Լ
2001



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<p>Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատրամը Սուրբ Յարութեան փոնի առիթով</p> <p>Փրկչի Հրաշափառ և Սուրբ Հարության փոնի առթիվ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետի և քոյլ Եկեղեցիների, Հայ Եկեղեցու նվիրապերական Վրոռ- ների պետքերի, պերական պաշտոնական անձանց միջև փո- խանակված ողջունի և բարեմաղթանքների նամակներն ու հեռազերք</p> <p>Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց Եկեղեց 86-րդ դարեկանից առիթով</p> <p>Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամանայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ արդասանված Կրեմի համագումարների պալատում</p> <p>Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ավելաման փոնի և Մայրության ու գեղեցկության օրվա առիթով</p> <p>ԱՄԵՆԱՅՆ ՇԱՅՈՅ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը «Նոգեշնորի Տ. Եզրաս Վարդապետ Ներսիսյանին Ռուսակա- նի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ նշանակելու մասին»</p> <p>ԱՄԵՆԱՅՆ ՇԱՅՈՅ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը «Խիստ Պիտեճին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին»</p> <p>Հայրապետական պարգևաբաշխություններ</p>	<p>3</p> <p>7</p> <p>10</p> <p>13</p> <p>15</p> <p>16</p> <p>18</p> <p>20</p>
---	---

ՊԱՇՏՈՆԱԿԱՔ

<p>ԴԵՏՐՈՍ Դ. ՇՈՎՃԱՆ ՆԻՍՅԱՆ - Վեհական Հայրապետի ուխտագնացությունը Դեր Զոր</p> <p>Մայր Աթոռ Ս. Էջմիածնում փեղի ունեցալ «Գանձարան հայ ին բանասրեղծության» գրքի շնորհանդեսը</p>	<p>21</p> <p>38</p>
--	---------------------

Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի պաշտպանության նախարարին	39
Գարեգին Բ Կաթողիկոսը խորապես ցավակցում է Հինարարությունում զոհված բանվորի ընդունիքին	40
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Համահայկական խաղերի կոմիտեի անդամներին	40
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Էսպոնիայի ԱԳ նախարարին	41
Գարեգին Բ Կաթողիկոս. «Զորանանք հավապոլ և զորացնենք աշխարհասփյուռ ազգային մեր կյանքը»	42
Նոր նշանակումներ Նայ Առաքելական Եկեղեցու թեմերում	43
Ապրիլի 21-ին Գարեգին Բ Կաթողիկոսը կմեկնի Մոսկվա	44
Ապրիլի 24-ին Դեր Զորի Ս. Նահարակաց Եկեղեցում պարագագելու է Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը	44
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Կողեկիրիկ անվլանգության պայմանագրի անդամ պետությունների Անվլանգության խորհրդի քարոզութանքին	45
Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց Սիրիայի դեսպանին	46

ՄԱՅՐ ԱԹ-ՈՒ-ՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Ավագ շաբաթը Մայր Աթոռում	48
Հաղորդագրություն	53

ԱՊՐԻԼ 24

ՏԻՐԱՆ ԼՈՔՄԱԳՅՈԶՅԱՆ - «Ակոս» թերթի գրեսությունը Հայկական ցեղասպանության մասին	55
ԴԱՎԻԹ-ՔԵՐԹՄԵՆՅՅԱՆ - Էջեր իմ օրագրից (գրախոսություն)	63
ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Մագիստրական կոթողային աշխարհանք	65

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԳԵՎՈՐԳ ՄԲԵՂԱ ՍԱՐՈՅԵԱՆ - Գրիգոր Խալաբեցու	
Հայսմավորքը	70
ՀԱՍՏԻԿ ԲԱԴԱՅՅԵԱՆ - Սկլուայի վանքը 12-14-րդ դարերում և	
մեզ հասած ձեռագրական ժառանգությունը	81
Դ. ԹՈՐՈՍՅԵԱՆ - Մայր Աթոռի Վերահասրավումը Էջմիածնում	
և Կաթողիկոսության գործունեությունը 15-րդ դ.	92
ԶՈՒԼԻԵՏԱ ՇՈՎՃԱՆՆԻՍՅԵԱՆ - Բելցիի հայոց նկեղեցու	
կառուցման պարմությունը	101

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱՄԻԿ ԶԵՅԹՈՒՅՆՅԵԱՆ - «Էջմիածին» ամսագիր	
մագիստրոսական թեմ. լուրեր	104
ԵԿԵԼԵԳԱԿԱՆ ՔԵՄ. ԼՈՒՐԵՐ	119
«Էջմիածն» օֆիցիալնայի յարագագաթ Էջմիածնի Կաթոլիկոսաւուն	122
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	125

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՄՆՐԱՄԻԿ ԶԵՅԹՈՒՅՆՅԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷԶՄԻԱՏԻՆ
«ԷԶՄԻԱՏԻՆ» ԱՄՍԱԳԻՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻՉ 77764


ՀՐԱՄԱՆԱԴԻ

S. S. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՄՐԲԱՉԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՅԻ

ՀԱՅՈՅԻ

1909



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԺՈՂՄԱԾԻ ՊԱՏԳԱԾԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹ-ԱՎ

«Ես իսկ եմ Յարութիւն և կեանք...»:
(Յովհ. ԺԱ 25)

Սիրելի բարեպաշտ հայադացեալներ.

Բարի առաօտք է բացուել աշխարհին՝ Յարութեան, կեանքի յաղթութեան առաօտք: Խինդ կայ մեր հոգիներում, հաւադ և յոյս, քանզի այսօր հրեշտակը թափուր գերեզմանի դիմաց վերսպին Քրիստոսի Յարութիւնն է աւելում «Չէ ասք, այլ յարեա»:

Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի, քանզի այսօր քո լոյս խորաններից շնորհն է բաշխւում Յարութեան և կեանքի:

Զուարձացիր, Եկեղեցի Նայաստանեայց, այսօր բացուել են երկնքի դռները, և Յարուցեալ Փրկչի սիրառադ հայեացըն է ուղղուած քեզ, որ փօնախմբում ես հայոց պետքութեան՝ ի Քրիստոս մկրտութեան 1700-ամեան:

Դայձառացիր և ցնծա, Եկեղեցի Քրիստոսի, քանզի Յարութեան կեանք պարզեւող շնորհներով լուսաւորուած են աշխարհի բոլոր հորիզոնները, և երրորդ հազար-ամեակի այգաբացին քրիստոնեական բոլոր Եկեղեցիները՝ ձայնակից միմեանց ու հրեշտակներին երկնքում, միասնաբար փառաբանում են Մարդացեալ Աստուծոյ ամենափրկիչ Յարութիւնը: Քրիստոնեայ բոլոր ազգերը այսօր օրինաբանում են Արարջին փիեզերիք, Ով աշխարհը հաշվեցրեց Իր հետ ու կուեց մարդկանց հաշվութեան խօսքը՝ Յարութեան Սուրբ Աւելքարանը Քրիստոսի:

Արդ. «Արասուր գոն ցնծութեամբ նորոգեալը ի հնութենէ մեղաց՝ ատելով Քրիստոս յարեա ի մեռեց», «Փա՛ռք Քրիստոսի ամենազօր Յարութեան»:

Յարութեան յաղթական երգը Մեր շորթին՝ Սայր Արոռ Սուրբ Էջմիածնից եղայրական ողջոյն ենք յուս Հայաստանեայց Եկեղեցու նուիրապելութեան Աթոռների Գահակալներին, Յարութեան լոյս աւերիսով Մեր օրինութիւնն ենք քերում Հայոց պետքական աւագանուն՝ ի գլուխ Հայաստանի Համրապելութեան Նախազահի, օպարերերեայ դիւնագիւններին Հայաստանում, Հայ Եկեղեցու ուխտապահ ողջ հոգինոր դասին և աշխարհական հաւաքանոր ու բարեպաշտ հանուր մեր զաւակներին ի Հայաստան, յԱրցախ և ի սփիռու:

Միրոյ ողջոյն եւ խնդրութեան աւելիս փոխանցենք միմեանց՝ օրիններգելով. «Այսօր յարեա ի մեռեց փեսայն անման և երկնաւոր»:

Քրիստոս Յարութիւն առա վաղ առաօդեան: Աստրուեց Նրա մարդկային կեանքի պարմութիւնը: Ակիզբ առա Աստրուածային փառով Վերակենդանացեալ և յաւերժ փառառեալ անվախճան կեանքի պարմութիւնը Յարուցեալ Փրկչի: Ազաբացի հետք մարդկութեանը ծագեց Լոյսն Իմանալի, որ երկու հազարամետ նորոգում է մարդկային հոգինները և վերափոխում աշխարհը Աստրուածային ճշմարգութեան ճանաչողութեամբ:

Միրեկի ժողովուրդ հայոց Յարութեան Վարդապելութիւնը քրիստոնեական մեր հաւաքի հիմքն ու եռթիւնն է, քանզի «Եթէ Քրիստոս ջեց յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են և հաւաքըն ձեր» (Ա. Կորնի. ԺԵ. 14):

Հրաշափառ Իր Յարութեամբ Ասպուծոյ Որդին լրումին հասցրեց փրկազրծական Իր առաքելութիւնը: Մեղքի դիմաց խաչուց Ինքն Անմահութիւնը, որպեսզի յարաբեն նորոգուի Աստրուածակերպ պարկերը խաթարուած մեր հոգու: Քրիստոս աշխարհ եկա որպէս Մեր ու սեր սերմանեց, ողորմութիւն ուսուցանեց, հաշութիւն դարձաւ և խաղաղութիւն ու կեանք պարգևեց, քանզի Ինքն իսկ է Յարութիւն և կեանք: Արդ. Քրիստոսի խաչով ներուած են մեզ մեր մեղքերը ու Նրա Յարութեամբ՝ լուսաւորուած դէպի Ասպուծ մեր ճանապարհը:

Միրեկի ժողովուրդ հայոց ի սփիռու աշխարհի. 2000 դարի «Մենք իսկ ականաւիս եղանք Նրա մեծութեանը» (Բ. Պետր. Ա. 16), Նրա ապրու ու ապրեցնող զօրութեանը: 2000 դարի Յարուցեալ Քրիստոս քայլում է մեր հողում, մարմին առնում մեր արարումներում, ազաբութեան բաղծանքում, խաղաղութեան երազում, բարիք սպենդելու ծգութումներում: Որպէս քրիստոնեայ առաջին պելութիւն և ազգ՝ 17 դար մեր ժողովուրդը Յարութեան լոյսը դարձել է համազգային իր կեանքի փարոսը, Յարութեան յոյսով զինական՝ նստարկել խոթերի ու որոգայթների միջուն, Յարութեան հաւաքով կոփել խստարը մերժելու, մահեր յաղթելու իր կամքը: 1700 դարի, սիրելիներ մեր, Սուրբ Էջմիածնի Յարուցեալ Փրկչի Էջի խորիքով շաղախն է հայոց միաբանութեամ:

Այսօր, երբ 2001 թուականի յորեկեանազարդ դարին փարին փառապսակ թագաղուում է Յարութեան շնորհանորոց խորիքով, Միածնի Էջի Սուրբ Սեղանի առջև աղօթա-

բար հոգով, յանուն աշխարհասփիս մեր ժողովրդի աներկրայ վկայում ենք. Տեր, մենք պահեցինք մեր հաւաքարմութիւնը Քեզ, տկարացանք, բայց չուրացանք, նոյնիսկ երբ մահուան ու չարիքի դէմ յանդիման թում էր, թէ մոռացել ես մեզ:

Փա՞ռք Քեզ, Տեր, և Յարուցեալ Զօրութեանը Քո, որ նախախնամող Քո կամքով եւ ամենախնամ օրինութեամբ նոր հազարամեակ ենք թեւակրիսում լաւադեսութեամբ ու հոգեւոր-ազգային մեր կեանքի վերարթնութեան ու վերաշինութեան, ազգային մեր նուիրական իդերի իրականացման յոյսերով:

Փա՞ռք Քեզ, որ պարզեւեցիր մեզ քրիստոնեայ առաջին պետութիւնը լինելու շնորհն ու պատիկը և համայն քրիստոնեայ աշխարհի ենք այսօր ապրելու Քո Յարուցեալ ներկայութիւնը և երկրպագելու բարեբանելի Սուրբ Անունը Քո:

Երից Փա՞ռք Քեզ՝ Աստուածային Քո Սիրոյ, Կենդանարար Յոյսի և Յարութեան Հաւափի պարզեւի համար, որ պայմանն ու իմաստն են դիեզերի գոյութեան ու մարդկային կեանքի:

Ցիրափի, ոչինչ այնպէս չի վերափոխել աշխարհը, որքան Յարութեան հաւադը, որ շնորհեց մարդկութեանը մեղքի կապանքներից ազադ լինելու հնարաւորութիւնը: «Ուր հոգի Տեառն է, անդ ազադութիւն է» (Բ. Կորնթ. Գ. 17): Քրիստոս ազադութեան իր հոգին պարզեւեց մարդկութեանը. ազադութիւն՝ ճշմարդութիւնը ճանաչելու, ազադութիւն՝ ճշմարդութեան հերեւորդը լինելու, ազադութիւն՝ ճշմարդութիւնը պաշտպանելու մէջ չվարանելու:

301 Թուականին չվարանեցինք քրիստոսահալած հեթանոս աշխարհում պետքականորէն պարզել Քրիստոսի ազադութեան խաչանիշ դրօշը, որ երբէք չի խոնարհուել մեր հոգիներում, երբ անգամ կորցրել ենք ազգային մեր պետքականութիւնը: Խաչանիշ այդ դրօշով ընդամենը մէկ ու կէս դարում կերպեցինք հայոց ինքնահանաչման, ինքնարքայայրման ու ինքնահասդարման Աստուածզեաց դպրոցը, ուր ուսուցանում է Յարուցեալ Երկնային Վարդապետը: Խաչանիշ այդ դրօշով ապրեցինք՝ ժառանգականութեան կենդանի կապով հաղորդ ու հաւաքարիմ Լուսաւորի, Ներսէս Սեծի և Սահակ-Մաշտոցի՝ հայ հոգու, սրբի ու մտքի լուսաւորութեան, Քաջն Վարդանանց՝ հայ ոգու յաղթութեան անմաս դպրոցին:

Հայոց Դարձի 1700-ամեակի փօնակարարութեան նշանակալի այս փարում, սիրելի հայորդիներ, ուխտենք մեր հոգիներում արթուն պահել յաղթական այդ դպրոցի գօրաւոր ոգին, ապրենք Յարուցեալ Փրկչի ներկայութիւնն այնպէս, ինչպէս Յարութեան հաւափին Վստահած մեր նախնիք, որպէսզի մեր խօսքը չնչի դպրակլ ու անփեղի, եւ մեր գործը չինի արժեզուրկ ու աննապարակ, այլ ծառայի հայրենական մեր կեանքի շինութեանը, քայլ աւելացնի անկախ մեր Հայրենիքի հզօրութեան կատոյցին, շաղախի հայոց միաբանութեանը, լոյս՝ պայծառութեանը Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Հայոց Դարձի 1700-ամեակի խորհրդով լեցուն՝ հաւաքով խոսքովանենք մեր պատրկանելութիւնը Աստուածակառոյց Հայ Եկեղեցուն, որպէսզի այն, գօրաւոր մեր

հաւաքարմութեամբ, շարունակի առաջնորդել համագգային մեր երթը դէալի Ասդ-
ուած: Զօրանանք հաւաքով և զօրացնենք աշխարհասկիւս ազգային մեր կեանքը:

Գործեր ձեռնարկենք Յարութեան Վստահութեամբ՝ լեցուն միմեանց հանդեպ Յա-
րուցակի սիրով, որ չափ երկմարտիւն ու երկիւղ, սէր, որ չի նախանձում, չի ամբար-
դականում, չար բան չի խորհում, անիրասութեան վրայ չի ուրախանում, այլ միշտ
հաւաքում է ու միշտ յուսադրում: Անպարբեկի, արարող այդ սիրով հաւաքանք ա-
զար մեր Հայրենիքի լուսաւոր գալիքին: Խաչաղողաշ կիֆով մեր հոգու, խաչանիշ
պետական դրօշով ազգովի՝ ի Հայաստան, յԱրցախ և ի սփիւս միաբան, զինուրա-
գունենք ու բանակ դատնանք՝ ամրապնդենք մեր ձեռքբերումները, մեր նուաճումները,
համագեղ կառուցենու հայոց այսօրն ու վաղուայ նոր օրը:

Սիրելի բարեալաշտ ժողովուրդ հայոց ի սփիւս աշխարհի:

Քրիստոսի Տիեզերական Եկեղեցու բոլոր զաւակների հետ միասնաբար այսօր՝
նոր հազարամեակի արշալոյսին, աղօթենք առ Սիածին Փրկիչը և հայցներ. «Լսելի
արա մեզ, Տէր, զայն աւելաւոր իրեշտակին...» և Յոյսով, Հաւաքով ու Սիրով
պատկեալ Ձո Յարութեան լոյս խորհուրդը հասպատիր մեր հոգիներում:

Խաղաղութիւն ու օրինութիւն բաշխիր, Տէ՛ր, համայն աշխարհին և Սուրբ Հոգու
շնորհները բոլոր ազգերին՝ ապրելու եղբայրաբար, աշակից միմեանց, որպէսզի
ըրիակոնւական համելքայրութիւնը, հասպատուած Ձո Սուրբ Յարութեան հաւաքի
ճշմարիդ արմադին, բարի պատուներ պարզենի աշխարհին, և հացն ու գինին յա-
րաբեն բաշխուեն ի հաղորդութիւն Յարութեան և կեանքի:

Քրիստոս Յարեա ի մեռնեց:

Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի:

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱԾ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱԹԵՒԿ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՔՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՋՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ,
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՇԱՏՅ ՄԻԶԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂԶՈՒՅՆԻ ԵՎ
ԲԱՐԵՄԱՂԵԱՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ
ՀԵՌԱԳՐԵՐ

Հոռմեական Կաթողիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՄՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊ (Հռոմ)
Կոսդանդնուայոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք,
Նորին Սրբություն
ԲԱՐԴՈՒՅՄԵՇՈՍ (Սփամբուլ)
Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻ Բ (Մոսկվա)
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թքիլիսի)
Ղպփի Ռուսակառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲՈ ՇՆՈՒՉԱ Գ (Կահիրե)
Ասորական Արևելյան Եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարք, Նորին Սրբություն
ԽԱՄԱՆԻԱ ՄԱՐԴԻՆԿԱ Դ (Իլինոյս)
Անփիոքի և Համայն Արևելքի Ասորի Ռուսակառ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՆ ԶԱՔԶԱ Ա ԽՎԱՍ (Դամասկոս)
Ռումին Ռուսակառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՂԿՏԻՍ (Բուխարեստ)
Սերբիայի Ռուսակառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԱՎԼԵ (Բելգրադ)

Արենքի և Համայն Հունաց Արքայիսկոպոս, Նորին Սրբություն
ԽՐԿՍՈՂՈՒԽՈՍ (Արենք)

Վարշավայի և Համայն Լեհասպանի Միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ՍՊՎՎԱ (Վարշավա)

Կիալռոսի Արքայիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԿՍՈՂՈՒԽՈՍ (Կիալռոս)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ-Պապրիարք, Նորին Սրբություն
ՊԵՏՐՈՍ Է (Ալեքսանդրիա)

Մինսկի և Ալուգի Միտրոպոլիտ, Համայն Բելոռուսի Պապրիարք,
Նորին Սրբություն
ՖԻԼԱՐԵՏ (Մինսկ)

Տանն Կիլիկիո Կաթողիկե հայոց Կաթողիկոս-Պապրիարք
ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ (Բեյրութ)

Պրագայի Արքայիսկոպոս, Եվրոպայի Կաթողիկ Եպիսկոպոսների
Եղբայրակցական Միության Նախագահ
ՄԵԼՈՍԼԱՎ ԿԱՐԻԿԱՌ ՎԱԿ (Պրագա)

*
* * *

ՎԱՅՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹ-ՈԹՆԵՐԻՑ

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Նորին Սուրբ Օծություն

ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Պապրիարք Հայոց Երոսաղեմի, Նորին Ամենապարվություն

Ա-ՈՐԳՈՍ ԱՐՁԵՂԻՍԿՈՂՈՍ (Երոսաղեմ)

Պապրիարք Հայոց Կ. Պոլսի, Նորին Ամենապարվություն

ՄԵՍՐՈՊ ԱՐՁԵՂԻՍԿՈՂՈՍ (Սփամբու)

Փրկչի Հրաշավառ Ս. Հարության փոնի առթիվ Ամենայն Հայոց Կաթողիկոս,
Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ-ի անունով շնորհավորական հեռազեր, բացիկներ և նա-
մակներ են սրբացվել նաև Հայ և օդար Եկեղեցիների թեմակալ առաջնորդներից:
Խոգևորականներից, թեմական խորհուրդներից:

*
* *

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության նախագահ, վեմաշուր

ՈՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի

նախագահ, մեծահարգ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետ.

մեծահարգ

ԱՌԴՐՄԱԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Սահմանադրական դատարանի նախագահ,

մեծահարգ

ԳԱԳԻԿ ՇԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

նախագահ, վեմաշուր

ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

վարչապետ, մեծահարգ

ԱՌՈՒՇԱՎԱՐ ԴԱՄԱԿԵԼՅԱՆ

Շնորհավորականներ են սպացվել նաև Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական, համալսարանական հաստատություններից, իրավագետներից և քաղաքական գործիչներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից և հասարակական կազմակերպություններից, Միջազգային Կարմիր Խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային դաշտային միավորներից, ԱՄԵՐԻԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ Համահայկական Դիմադրամից, ՀԲՀՄ-ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Հայկական Համագումարից, Կյուլպենկյան հաստափությունից, Կարազյոզյան հիմնարկությունից, Ավյուղահայ մի շարք այլ կառույցներից և հաստափություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Ավստրրալիայի Ազգային Եկեղեցիների Խորհրդից, Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստափությունների ներկայացուցիչներ, արդասահմանյան երկրներում ՀՀ արքակարգ և լիազոր դեսպանները, սիյուռնում գործող հասարակական և համայնքային կազմակերպություններ:

**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ S.S. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐքԻ ԵՎ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՅ
ԿԱԹՈՆԻԿՈՄԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՅ ԵՂԵԶՄՆԻ 86-ՐԴ
ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹ-ԱՎ**

(Տեր Զոր, 24 ապրիլի 2001 թ.)

«Որ զանձինս իրեւանց քեզ. Նայր, ըն-
ծայեցին և Որդույ քում Քրիստոսի եղին
խաչակիցը»:

Այսինքն եկանք՝ Մեր հոգու հայացքի առջև ունենալով Արևմբյան Հայաստանի օրինակ հողը. Սուրբ Մասյաց փեշերին այրվող այգեստաններ, խողխողված մանուկ ու ծեր, դեակի անսապար քջվող անզեն ու փանջահար ժողովուրդ: Անցանք ափերով Եփրափի. որի ջրերը կյանք բաշխելու փոխարեն Նայոց լուսաշխարհից դիակ ու արյուն էին բերում 86 փարիներ առաջ և սարսափ էին գուժում ու մահ: Արազընթաց մերենաներով կվրեցինք անեզր փափաստանը, որը դուք, բյուր նահապակներ հայոց, չափեցիք քայլ-քայլ և խաջը ուսած անցաք Գրդղոթայի ճանապարհով:

Եկել ենք որպես շնորհընկալ Ամենայն Հայոց Հայրապետ՝ առաջին անգամ հա-
սուն մեր նախորդների այսօր խորին խոնարհումով ծնրադրելու և Մայր Հայրենիքի ու Սուրբ Էջմիածնի օրինությունը բաշխելու շիկագույն այս հողին, որը, ժամանակին անջուր ու անմարդաբնակ, հավաքական ծեր գերեզմանը դարձավ ու սրբագրծվեց մարդիրոսյալ ծեր արյամբ՝ նվիրական դառնալով համայն հայոց համար:

Անապափի փոթակեզ քամին ավագով ծածկեց անթաղ մնացած ծեր աճյուն-
ները: Բայց մի՞թե Բարձրյալի աչքից կարելի է թաքցնել մարդկային չարիքը, մարդ-
կային ամորը: Մի՞թե ոճրապարդ միքրով ու ծեռորվ գործվածը, որ սրափեց ու բնա-
վեր արեց սրբնյարար հնագույն մի ժողովորդի, կարող է մոռացության շղարշով
պապվել ու ջնջվել սերունդների հիշողությունից:

Եկել ենք համուն համայն հայ ժողովրդի, որը աշխարհի բոլոր ծագերում այսօր՝
ապրիլի 24-ին, համախումբ ու միասնական ոգեկշռում է նահապակների սուրբ հի-
շաբակը: Այսօր բազմահազար հայորդիներ, Հայաստանի Հանրապետության նա-
խագահի գլխավորությամբ, Ծիծեռնակարերի բարձունքում խոնարհվում են ծեր հի-
շաբակը հավերժացնող կոթողի առջև:

Եկել ենք ուղեկցությամբ աշխարհասփյուռ մեր զավակաց, ովքեր՝ շառավիղները նախմիրից փրկվածների, աշխարհի չորս կողմերում հայ կյանքը վերահասպարած, պատրմական մեր Հայրենիքի արևելյան մի հարվածում Հայասպանի ազադ պետականությունը վերականգնած՝ այսօր նախանձախնդիր են Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, որպեսզի ոչ մի ժողովուրդ չապրի երբեք սեփական ազգի պատրիարքության համար կողորածի ողբերգությունն ու վիրավորանքը և չկառուցի Տեր Զոր, Ծիծենակարերդ ու Եար Վաշեմ, որպեսզի ոչ մի հողում չինեն Մայդանեկ ու Բոխնենվալդ:

Սուրբ Էջմիածնի 1700-ամյա Միածնաւշ Լուս Խորանի օրինությունն ենք բերել նահարակաների նշխարներին, Սուրբ Լուսավորչի Կանքեղի լույսը մշտաղորթք: Եկել ենք ուղիղի, սրբազն երդման: Եկել ենք ձեր՝ Քրիստոսի խաչակիցների հազարավոր անհայտ անունների հիշապակումով մեր ուխտը առ Ասպած հասրաթելու, համազային մեր միասնականությունը նորոգելու և մեր հավաքը գորացնելու արդարության հաղթանակի հանդեպ: Եկել ենք ասելու ձեզ, որ ամեն ապրիլի 24-ի, նաև այսօր, հայ ընդանիքներում զավակներ են ծնվում՝ հայորդներ ու հայուիներ, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ավագանում մկրտվում են ձեր անուններով:

Սիրելի ժողովուրդ հայոց ի սիյուռ աշխարհի.

Այս պահին մեր ովքի գործ կակ հողին խառնված, փշուր-փշուր ու մանրված ուկորներն են հայ նահարակաների, սակայն մեր առջն՝ նրանց հիշապակը հավերժացնող վեհագեն կոթող-եկեղեցին ՝ երկինք պարզած փրկագործ խաչով, որի թևերի հովանու ներքո խաղաղություն են գտել նշխարները մեր անմեղ զնեների:

Արդարեն, սիրելիներ, բազմից խաչելով չէ, որ խաչակից ենք Քրիստոսին, այլ՝ որովհետք հարություն ենք առել, մահը կյանքով ենք ուղնակիուն և Մեր Տիրոց՝ Շիսուս Քրիստոսի օրինակով ամոթապարտ թողել մեզ խաչողներին: Մեր ժողովուրդի դարագիր զավակները սպեղծարար իրենց կյանքը վերընճյուղեցին աշխարհի դարբեր երկրներում և քրիստոնյա հայի ազնիվ ու օրինավոր նկարագրով հարզանք ու վսփահություն վաստակեցին ամենուր: Այդ նոյն քրիստոնյա հայը՝ հաց սկենծող, արեւստավոր, վաճառական, բժիշկ ու ճարդարապետ, Օսմանյան Թուրքիայում անցնող դարասկզբին մահվան դադապարտվեց, քանզի բնիկ ու փոհմիկ ժողովուրդն էր Արարափի երկրի, քանզի դարերով վկայել ու վկայում էր իր հավագարմությունը Քրիստոսին ու նրա Սիրուն, որով մերժել էր չարը ու հայթեկ մահեր:

Մեր նահարակաների սուրբ հիշապակի ոգեկոչման այս նվիրական օրը Մեր սիրեցյալ եղբայր Արամ Ա Կաթողիկոսի հետ, Տեր Զոր ուխտի եկած մեր զավակների, համայն մեր ժողովուրդի անունից երախտագիտության Մեր խոսքն ենք ուղղում արար ժողովուրդին և բոլոր ժողովուրդներին, որոնք արհավիրի դժնակ օրերին սարարցին ասրանդական հայերին և մարդասիրության հազարավոր օրինակներով դադապարտեցին հայկական կողորածները, իսկ այսօր նոյն նախանձախնդրությամբ ճանաչում են Հայոց ցեղասպանության իրողությունը:

Մեր գնահատանքն ու շնորհակալությունն ենք հայքնում մասնավորաբար Սիրիայի պետրությանը, որը ապասպան է դպի բազմաթիվ փարազիր հայերի, օգնել բուժելու հոգու վերքերը և ընդունելով նրանց որակն իր լիարժեք քաղաքացիներ, ի հարգանս հայ նախագակների, աջակցել է նաև կառուցելու Տեր Չորի այս հուշահամալիրը: Նախագակաց լուսաբնակ այս մասնաւ Սուրբ Խորանի առջև Մեր աղոթքն ենք բարձրացնում հանուն Սիրիա մեծարգա նախազահ Բաշար Ասադի արևշագության և նրա երջանկահիշագրակ հոր ու նախորդի՝ Հաֆեզ Ասադի հոգու հանգալության:

Ֆեղասպանություն ապրած ժողովուի Հայուապետիս աղոթքին այսօր երկնքից ձայնակից են բյուր հոգիները հայ մարդիրոսների, հայերով խաղաղություն համայն աշխարհին, նաև մարդկային քաղաքակրթության հենագույն օրրան այս փարածաց շրջանում ապրող բոլոր ժողովուրդներին:

Ողորմի՞ր, Ասրված, հոգիներին մեր սուրբ նախագակների, որ «Որդոյ քում Ջրիսպոսի եղեն խաչակիցք» և «կանգնեցին մեզ յաղթող նշան ընդդեմ թշնամոյն»: Զորացրո՞ւ, Ասրված, ճշմարդասիրության ու արդարամիության ոգին ժողովուրդների, որպեսզի պետրությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը նոր դարասկզբին արդարության ձայնի ազդարարը դառնա ու մովեցնի նրա հայրանակը: Այդ օրը, ո՞վ Տեր, թռող մեզ շուրջ ծագի՝ հանուն չարիքի մերժման ամբողջ աշխարհում, հանուն մարդկության խաղաղ ու բարեգործ լուսավոր գալիքի:

«Յիշագրակն արդարոց օրինութեամբ եղիցի. ամեն»:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍՏԱՎԱԾ ԿՐԵՍԼԻ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՊԱՌԱՏՈՒՄ**

(22 ապրիլի 2001 թ.)

Ի Տեր սիրեցյալ եղբայր մեր, Ձերդ Սրբություն Սոսկվայի և Համայն Ռուսաստանի Պարքիարք, Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյան, գերաշնորհ հովապետեր, հոգեշնորհ հայրեր, պետական այլեր, եղբայրներ և քույրեր ի Զրիստոսուն:

Փառք Ամենակալին, որ մեզ հնարավորություն ընձեռեց ի Զրիստոս մեր եղբայր, Ռուս Ուղղափառ Եկեղեցու մեծապարփիվ գահակալ, Նորին Սրբություն Ալեքսի Բ-ի երավերով կրկին այցելելու հզոր ու մեծ Ռուսաստանի պետության մայրաքաղաք: Մենք մեծ ուրախություն ենք ապրում գդնվելով Ռուս Ուղղափառ Եկեղեցու ավանդական այն հանդիսությանը, որը նվիրված է մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարությանը՝ քրիստոնյաների մեծագոյն դրույթին:

Սիրելի եղբայրներ և քույրեր. մեզ համար կրկնակի ուրախություն է, քանի որ Նորին Սրբություն Ալեքսի Բ-ի նախաձեռնությամբ այսօրվա հանդիսությունը նվիրված է նաև մեծ ու բախսորոշ իրադարձության հոբելյանին՝ Հայաստանում քրիստոնեության պետականացման 1700-ամյակին:

Ասրվածային նախախնամությամբ հայ ժողովուրդը երկու հազար տարի առաջ ընդունեց Ավելարանը Ս. Թ-աղենոսի և Ս. Բարդուղիմենոսի քարոզությամբ: 300 տարի հետո, 301 թ. Ս. Գրիգորի՝ Հայաստանի Լուսավորչի և Տրդադ Գ թագավորի ջանքերով մեր երկիրն ընդունեց քրիստոնեությունը իրեն պետական կրոն: Ասդոն Որդին ննջն իշավ բիբլիական Արարագյան հողի վրա և Սուրբ Աջով ցոյց դրվեց այն սուրբ վայրը, որին հայ ժողովուրդը շուրջով պետք է կանգնեցներ Ս. Էջմիածնի Տաճարը:

Մեր պատմության ամենամռայլ շրջաններում Հայ Առաքելական Ս. Եկեղեցու հոգևոր կենտրոնը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնը, գյոյափեսել է իրեն լուսավոր ջահ՝ պահպանելով Ասդոն Վառած անաղարդ հոգևոր կրակը: Իրեն՝ Բարձրյալ Ասդոն և Նրա ուխտին մենք հավատարիմ ենք հավիպյան: Իրապես. «Ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրոց, վառապանքը, թե՛ անձկությունը, թե՛ հալածանքը, թե՛ սովը, թե՛ մերկությունը, թե՛ վրանգները, թե՛ սուրը» (Ղում. Հ 35-37):

Սիրելի եղբայրներ և քույրեր. անցյալ դարի վերջին դասնամյակը մեզ բռնիս համար թե՛ Ռուսաստանում, և թե՛ Հայաստանում նշանավորվեց նրանով, որ պետությունը և Եկեղեցին փոխադարձ մերձեցման արմադական քայլեր նախաձեռնեցին՝

հանուն երկրների հոգևոր վերազարթոնքի: Այսօր Ռուսասփանի և Հայասփանի պերական այրերի ներկայությունը վկայում է ոչ միայն այդ մերձեցման, այլ նաև մեր ժողովորդների մերձեցման մասին, որը միանգամայն նոր նշանակություն, նոր որակ և նոր իմաստ է ձեռք բերում: Որ մեր բարեկամությունը ավելի է ուժեղանում և ամրանում, կարելի է համոզվել այսօր Կրեմլի այս հիմնավի Պալատում, որդեռ երկու քոյր Եկեղեցիների ենթ կողը-կողը խսրած են մեր Եկեղեցիների հարցութափոր բարեպաշտ և քաջակորով զավակներ:

Նայ և ոռու ժողովուրդների եղբայրական կապերը հիմնված են փոխհասկացության, հավասարության, արդարության և անշահահմարդության վրա: Ռուսներին և հայերին սկզբնապես միավորել էին համաքրիստոնեական արժեքները՝ սեր մերձավորի համեմատ, սրբացակ վերաբերմունք միմյանց նկարմամբ, ծանր պահին օգնելու և աջակցելու պարրագակամություն: Այդ պատճառով է, որ մեր համերկրացիներից շատերի համար Ռուսասփանը դառնում է երկրորդ հայրենիքը: Մեր ժողովուրդների բարեկամությունը ասրվածահաճո է, և թող այն օրինվի հավեր, քանի որ ծառայում է բարուն և աշխարհին:

Ասիթից օգնվելով ցանկանում ենք Մեր Հայրական պատգամը և Պատրիարքական օրինությունը հեեւ Մոսկվայում գրինվոր հայ համայնքի զավակներին, Ձեմական Խորհրդին ու Նայ Առաքելական Եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսասփանի հայոց թեմի առաջնորդ Հայր Եղրասին: Մեր օրինությունը և շնորհակալությունը մեր Եկեղեցու ճշմարիք զավակ, «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանակիր, «Ռուսասփանի հայերի Խորհրդող»-ի նախագահ պարուն Արա Աբրահամյանին և բոլոր նրանց, ովքըն իրենց ներդրումն են ունեցել այս գոյնախմբությանը:

Ավարտելով Մեր խոսքը, մեկ անգամ ևս ձեզ ենք փոխանցում մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարության բարի պատփառը: Եվ կրկին արփահայպում ենք Մեր Եղբայրական սերն ու շնորհակալությունը Նորին Սրբություն Մոսկվայի և Համայն Ռուսասփանի Պատրիարքին՝ Սուրբ Հարության ոգեկոչման և 1700-ամյակի փոնակադարձություններին մասնակցելու երավերի համար, և աղոթաբար քաջառողջություն և երկար վարիների կյանք ենք ցանկանում նրան:

Մեր աղոթքն է, որ Հարուցյալ Տերն Իր հովանու ներքո պահի Ռուսասփանը, Հայասփանը և այդ երկրների ժողովուրդներին, որպեսզի Նրա օրինությունը հանապազ լինի Ռուս Ռողական և Նայ Առաքելական Եկեղեցիների ու նրանց զավակների վրա:

Ձոդ Տերը պահի մեր քոյր Ռուսասփանը, մեր քոյր Ռուս Ռողական Եկեղեցին և նրանց իմասփուն ղեկավարներին՝ Նորին Սրբություն Ալեքսի Բ Պատրիարքին և Ռուսասփանի մեծարգու նախագահ Վաղիմիր Պուտինին, որովհեքուն նրանք պետք է առաջնորդեն բարեպաշտ ոռու ժողովորդին խաղաղության և բարօր կյանքի ճանապարհով: Ձոդ Բարձրյալը առաջնորդի մեր երկրները դեպի բարին՝ շնորհելով հավաքի, սիրո և եղբայրության անսպառ զանձերը:

«Օրինութիւն և ողորմութիւն Տեառն Եղիշին ի վերայ ձեր ամենեցուն. ամէն»:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ
ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՈՒ
ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ**

Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ավելիման փոնի կապակցությամբ Հայրապետական Մեր օրինությունն ենք հղում մեր ժողովրդի զավակներին և Մայրության ու գեղեցկության օրվա առիթով շնորհավորում բոլոր կանանց:

Ավելիման փոնի խորհուրդը նորոգում է մեր հոգիներում հույսը, հավաքն ու մշխարությունը, որ Տերը մեզ հետ է: Հրեշտակածայն այդ ավելիսը, որի առաջին շնորհնկալն էր Սուրբ Աստվածածինը, թող նոր հնչողությամբ արձագանքի ձեր հոգիներում կոչելով Վստահել Աստծոն, լինել Աստծո հետ, ինչպես մեր նախնիք 1700 տարի առաջ և 1700 տարիներ ի վեր:

Ի խորոց սրբի Մեր աղոթքն է, որ Տերը Ամենօրինյալ Սուրբ Աստվածամոր առաքինազարդ հոգու շնորհներով զարդարի և մայրության բերկրանք պարզնի ձեզ, սիրելի կանայք, շնորհելով խաղաղ կյանքի բարօր ու երջանիկ երկար օրեր: Թող Աստվածամոր գթառապի բարեխոսությամբ Միածնին իր Որդու օրինությունը միշտ հովանի լինի ձեզ:

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՆԴԱՎԿՆԵՐ

ՕՐՀԱԼԻԹՅԱՆ
ԳՐԵՐ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱՎԿՆ ՀՈԳԵՇՆՈՐ Տ. ԵԶՐԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ
ՆԵՐՄԻՍՅԱՆԻՆ ՈՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ
ՆԱԽԻՋԵՎԱՌԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՄԱՁՆՈՐԴ
ՆՀԱՆԱՎԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՀԱԼԻԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՇԱՏԱՆԱՑ
ԱՋ ՄԻՐԵՑԵԱ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՄՊԱՍԱՒՈՐՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՋՅ ՄՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ,
ՀՈԳԵՇՆՈՐ Տ. ԵԶՐԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ,
ՈՐ Ի ՄՈՒՏԿՈՒԱ, ՈՈՒՍԱՍՏԱՆ

Սրբի բերկրանքով ենք ողջունում հոգեստը վերարթնութիւնը Ռուսասպանում քնակութիւն հասդարած մեր ժողովոյի զաւակների, որոնց հոգիներում առ Աստուած նորոգ հաւաքով և նոր ուժականութեամբ է բորբոքուել նկեղեցասիրութեան ոգին մեր նախնիների:

Ազգաշն ու եկեղեցանուէր գործունեութեան մեծ աւանդ ունեն ուստահայերը հայրենական կեանքում: Այս պահին Մենք աղօթքով և օրինութեամբ ենք յիշում Ռուսասպանի երեմնի հայաշատ կենքրուններում Սանկր Պետքերբուրգում, Մոսկուայում, Աստրախանում, Ղրիմում և այլուր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու Հայրենիքի համար բազում զոհողութիւնների յանձնառու նուիրեալ հայորդիներին: Թեմի առաջին իսկ առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Արդութեանի գործունեութեան փարիներից հասդարած աանդոյթ է այլեւս ուստահայերի նկարելի դերակարպութիւնը Մայր Եկեղեցու կեանքում:

Փառք ենք վերառաքում առ Ասպուած, որ այսօր ես արթուն է Լուսալորչաւանդ հաւափոյ ոգին Օռուսասպանի հայութեան սրբերում, ովեր համախումբ են Աւելարանի լոյս պատգամների և ազգային նուիրական մեր արժեքների ու աւանդների շորջ՝ շնորհի նաև հոգեւոր-քարոզչական անձանձիր գործունեութեան Օռուսասպանի եւ Նոր Նախիջեանի հայոց թեմի բարեօան սպասաւորների՝ զիշատրութեամբ նորանշանակ առաջնորդի պաշտօնակալուար Տ. Եղրաս վարդապետ Ներսիսեանի:

Սիրելի Հայր Սուրբ. քաջապետեակ ենք Սանկտ Պետերբուրգի հայոց համայնքային կեանքում ծաւալած եկեղեցաշն Զեր գործունեութեանը: Վազգեն Ա Երջանկայիշապակ Հայրապետի «Սիրեցէք Սուրբ Էջմիածինը, Էջմիածինն է հայութիւնը միաւորող եօր շաղկապը» պատգամով Հուր մեծարժէք ներդրում էք քերել Մայր Աթոռիս հեղինակութեան բարձրացման սրբազն գործին՝ արժանիօրէն վասրակելով սկզբ ու յարգանքը մերազնեայ հասարացեալների:

Զեր ժրաշան ծառայութեան Մեր բարձր գնահարանքը յաելելով ոռուսահայոց ազնի խրախոյսին՝ Հայրապետական այսու Կոնդակով, սիրով ընդառաջ հասարաւոր հայորդեաց խնդրանքին, որ ի Օռուսասպան, ծառայութեան ենք կոչում Ձեզ՝ որպես

ԱԹԱԶՆՈՐԴ ՋՈՒՍԱՍՏԱՆԻ ԵԲ ՆՈՐ ՆԱԽԻՋԵԲԱՆԻ ՌԱՅՈՅ ԹԵՇՄԻ:

Լիայոյս ենք, որ նախանձախնդրութեան նոյն ոգով ու գիրակցութեամբ պիտի լծուէք Զեր պատգամանական իրականացմանը՝ առաջնորդելով հաւաքարուր ոռուսահայութեան ընթացքը դէպի հոգեւոր ու ազգային նկարազդի անխաթար պահպանում:

Աղօթում ենք առ Բարին Ասպուած, որ Տէրն Ամենակալ պարգևի Ձեզ քաջառողջ, արեւաշար կեանք և առաջնորդական արգասաւոր գործունեութիւն՝ ի պայծառութիւն Առաքելական մեր Մայր Եկեղեցւոյ, յուրախութիւն Տիրախինամ թեմիդ հոգեւոր դասի եւ ի միջիթարութիւն Օռուսասպանի բարեպաշտ հայորդիների:

«Ճնորհք, սկը եւ խաղաղութիւն Տեսան մերոյ Ցիսուսի Քրիստոսի Եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամեննետեանդ ամէն»:

Օրինութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ


ԿԱԶՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԵՍ ՌԱՅՈՅ

Տուա Կոնդակս ի 11-ն Ասյրիի

յամի Տեսան 2001 և ի թուին Հայոց ՈՆԾ

ի Մայրավան Սրբոյ Էջմիածնի

ընդ համարա 42



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱՎԿԸ ԻՇԽԱՆ ՊԻՏԵՃԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐԴՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՐԱՏԱՆԱՑ
ԱԹ-ՄԻՐԵՑԵԱԾ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱՒԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅՅ ՍՐԲՈՅ ԷՇՄԻԱԾՆԻ,
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԻՇԽԱՆ ՊԻՏԵՃԻ,
ՈՐ Ի ՎԵՍՁ ՎԱՐՆՔՈՒԾԸ, ԿԱՆԱԴԱ**

Գոհութին և փառք ենք մաքուցում Երկնաւոր Տիրոջը, որ մեր ժողովրդի զաւակաց եղաներում արծարծ է պահում կենսագործ հայագը, սէրն ու նոյնական առ Ասպուած, Հայրենիք ու Մայր Եկեղեցի և բազմարդին պարագաւորում ի շահ ազգային-եկեղեցական մեր կեանքի շինութեան:

Մեծարգոյ պրն Պիտեճի. կանադահայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերքերեանից գոհունակութեամբ ենք լսում Ձեր ազգօգույք գործունեութեան մասին՝ ի խնդիր կանադահայ Տիրախնամ թեմի պայծառութեան: Երկարամեայ Ձեր Եկեղեցաշէն ծառայութիւնները վառ և խօսուն վկայութիւններն են Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու համելաք Ձեր անմնացորդ սիրոյ ու հայադարձութեան, որով Դուք վասպակել եք Ձեր բարեխան առաջնորդի սէրն ու գնահատանքը և հայադարձոր կանադահայութեան խորը յարգանքը:

Այս առիթով անկեղծ ուրախութեամբ ենք անդրադառնում մայրաքաղաք Երեւանում Մեր իիմնադրած Մանրանկարչութեան Կենտրոնի մասնաշէնքի վերանորոգման հովանաստութեամբ Ձեր կողմից: Շնորհի Ձեր ազնի յանձնառութեան, ազգային մեր կեանքում 1700-ամեակի խորհրդով յորեկեանազարդ այս փարում վերանորոգուած կենդրոնը առանց արդիւնավետ պիտի ծառայի մեր ժողովրդին՝ նպաստ բերեավ հայ մշակոյթի զարգացմանը: Կենդրոնի սաները մշտապէս երախիքագէվ եղողվ յիշելու են Ձեզ՝ աղօթք վերառաքելով առ Ասպուած յանուն յարգարժան բարերարիդ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրինութիւնն ու խորին զնահարանքն ենք յդում Ձեզ եւ, սիրով ընդառաջելով Ձեր առաջնորդի ազնի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՏՈՒՈՐԻՉ

պատրույ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրբի աղօթքով հայցում ենք Ամենակալ Վսփծուց, որ Իր հանապազ օրինութեան ներքոյ պահի ու պահպանի Ձեզ ու Ձեր ընդառաջ անդամներին՝ զորավիզ լինելով բարի ու հայրենանուեր Ձեր բոլոր իրագործումներում:

Թող ընդանեկան Ձեր յարկով շնորհընկալը լինի երկնարուր բիւր բարիքների եւ Վսփծոյ առար ողորմութեան:

«Ողջ լեռուք ի Տէղ, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգոյն եւ յաէք օրինեալք ի Մէջ. ամէն»:

Օրինութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱՌՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՑՆ ՇԱՅՈՅ

Տուա Կոնդակս ի 11-ն Ապրիլի

Յամի Տեատր 2001 եւ ի թուին հայոց ՈՆԾ

ի Մայրավան Սրբոյ Էջմիածնի

ընդ համարա 43

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2001 թվականի ապրիլ ամսի ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակով «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևադրվել են՝

Տիար Արդու Ցուզբաշյանը (Տորոնքո, Կանադա),

Տիար Արման Թաղեռոյանը (Տորոնքո, Կանադա):

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրինության և գնահատանքի գրերով պարգևադրվել են՝

Արշակ Տիգրանյան կրթական հասպագությունը (Ռոկվու, ԱՄՆ),

Ալսուրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի պատգամավորական ժողովի անդամները (Մելբուռն, Ավստրալիա),

ԱՄՆ հայոց արևմտյան թեմի պատգամավորական ժողովի անդամները (Ֆրեզն, ԱՄՆ),

Տիկին Աբեթ Ալբան (Տորոնքո, Կանադա),


Տիկին Արփինն Նազգաշյանը (Երևանադեմ, Խարայել),

ԱՄՆ հայոց արևելյան թեմի հոգևորականները (Մասաչուսեթ, ԱՄՆ),

ԱՄՆ հայոց արևելյան թեմի Կրիստօն Երիտրասարդմերի կազմակերպությունը (ԱՄՆ)

ԱՄՆ հայոց արևմտյան թեմի դիկոնանց միությունը (Ֆրեզն, ԱՄՆ):

ՊԱՇՏՈՆՎԱՆՆԵՐ



ՎԵՇՎԱԾ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՐ ԶՈՐ

Հայասպանում քրիստոնեության պետքական կրոն հռչակելու 1700-ամյակի գոռնակաբարության միջոցառումների շարքում առանձնահավուրկ դեղ ու նշանակություն ունի Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Երկրորդի ուխտագնացությունը Դեր Զոր: Նախնական պայմանավորվածության համաձայն, ուխտագնացությանը մասնակցելու էր նաև Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը: Նպագակն այս էր, որ երկու Կաթողիկոսները միասնաբար գնան Դեր Զոր՝ իրենց հարգանքի փուրքն ընծայելու մեկուկես միլիոն նախարակների հիշապակին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած ուխտավորների պարվիրակությունը, որի կազմի մեջ էին մտնում հոգևոր, պետքական, մշակութային, գիտության, կրթության բնագավառների անվանի գործիչներ՝ թվով 40 մարդ, Հալեպ ժամանեց 2001 թ. ապրիլի 23-ին, վեղական ժամանակով ժամը 10.00-ին: Հալեպի օդանավակայանի պարզ սրահի մեջ Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն, Բերիո թեմի առաջնորդ, Գերաքանորդ Տ. Սուրեն արքեպս. Գարարոյանը, բարձրասպիթճան հոգևորականներ, ազգային իշխանության, հայեպահայ կրթական, մշակութային, բարեգործական, հայրենակցական միությունների, ինչպես նաև քոյր Եկեղեցիների ներկայացուցիչներ: Այնուեւին քափորը շարժվեց դեպի Հալեպ:

Հալեպը Սիրիայի նշանավոր քաղաքներից է, երկրի հյուսիսային մայրաքաղաքը՝ գտնվեսական, մշակութային, կրթական, մարզական, կրոնական նշանավոր կենտրոնը: Ունի մեկ միլիոնից քիչ ավելի բնակչություն: Հալեպի բնակչության 82%-ը սուննի մահմեդականներ են, բնակչության 11%-ը քրիստոնյա է: Այսպես գործում են 460 մզկիթ և շուրջ 40 եկեղեցիներ: Հայկական համայնքը Հալեպի քրիստոնյա բնակչության ամենանշանավոր հանրությունն է: Հալեպում բնակվում է շուրջ 51.000, իսկ ամբողջ նահանգում 68.000 Հայ Առաքելական Եկեղեցու հետևողներ, հայ կաթողիկե համայնքի մոտավոր քանակը շուրջ 23 հազար է, որի 60%-ը հայերեն ցի խոսում, իսկ հայ ավելաբանական համայնքը հաշվում է մոտ չորս հազար հոգի: Հա-

լեպում գործում են Հայ Առաքելական՝ վեց, կաթողիկէն՝յոթ, և ավելարանական՝ հինգ եկեղեցի (ըստամենը՝ 18 եկեղեցի): Հալեպի հնագոյն հայկական եկեղեցին Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին է, որը 1429 թ. կառուց է (այժմ որպես եկեղեցի չի գործում): Բացի այդ, Հալեպի նահանգի գարբեր բնակավայրերում (Կամիշլի, Հասակե, Թեղ Արդա, Ռազկա, Յակոբին, Քեսար, Արամ և այլուր) գործում են Հայ Առաքելական 17 եկեղեցներ ևս: Հալեպի առաջնորդանիստ եկեղեցին Ս. Քառասնից մանկանց եկեղեցին է, որը գտնվում է Սալիպէ (Խոաչ) թաղամասում: Սույն շրջանը դարեր ի վեր եղել է քաղաքի քրիստոնեական համայնքների աղոթավայրերի, եկեղեցների, մատուռների, հարակից կրօնական կառույցների և բնակարանների մի համալիր: Հայոց Մայր եկեղեցին 1476 թվականի կառուց է, վերանորոգվել է 1499-1501 թվականներին, դարերի ընթացքում ևս մի քանի անգամ վերակառուցվել է ու ընդարձակվել: Հարկանշական է, որ 1651 թվականի նոյեմբերի 30-ին այսրե է դեռի ունեցել Ամենայն Հայոց Փիլիպպոս Ա Աղբակեցի (1632-1655) և Մեծի Տանն Կիլիկիոն Ներսես Ա Սերասպացի (1648-1654) Կաթողիկոսների պարմական հանդիպումը, որից հետո Կաթողիկոսները, ինչպես գրում է Առաքել Պատրիաքիրը, միասին ուխտի են գնացել «ի սուրբ քաղաքն Երուսաղէմ»: Եվ ահա, ուղիղ 350 փարի անց, Հալեպի Ս. Քառասնից մանկանց եկեղեցին դառնում է Հայոց զույգ Հայրապետների նոր հանդիպակայր: 350 փարփա մեջ առաջին անգամ է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժամանում է Հալեպ, ժամանում է դարձյալ որպես Ուխտավոր, սակայն ոչ թե Երուսաղեմի, այլ Չերք Զօրի Ուխտավոր:

Քազմահազար հայեահայեր, գարբեր երկրներից ժամանած խուռներամ ուխտավորներ Մեծ Ուխտավորին դիմավորեցին «Նապի Հալեպ»՝ Ազիզի պողոտայի սկզբնամասում: Այսինից թափոր, Վեհափառների գլխավորությամբ, հերփուղն շարժվեց դեպի Ս. Քառասնից մանկանց եկեղեցի: Հայկական թաղամասում թափորն ընթանում է փողային նվազախմբերի շեմփորների, դպրաց դասի շարականների և խանդակա բնակչության ցնծալից ծափողույնների ուղեկցությամբ: Շենքերի փանիքներից, բաց լուսամուտներից ու պատշգամբներից անընդհափ ծաղկաթերթիկներ և քաղցրավենիքներ էին թափվում, հաճախ խաչմերուկներում գառներ էին մորթում մարդաղու գառներ: Վերջապես թափորը հասավ Մայր եկեղեցի, որն արդեն լեի-լեցուն էր հավաքացյալներով:

Փողային նվազախումըր կափարում է Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաքական Հանրապետության պետքական հիմները, դպրոցահասակ երեխաները ճերմակ աղավնիներ են բաց թռնում երկինքն ի վեր:

Առաջնորդ Մուրեն արքեսպ. Գաթարոյանը բարի գալուստ մալթելով զույգ Հայրապետներին՝ հավասարեց, թե «Վեհափառները պիտի աղոթեն այս տան մեջ, հարկաց պիտի աղոթեն, որ Ազար, Անկախ Հայաստանը հեռու մնա փորձանքներից և միշտ ծաղկի և ծաղկեցնի ողջ հայ ժողովրդին»: Այսուեկու Հայոց Հայրապետին ողջունեց և բարի գալուստ մաղթեց Մեծի Տանն Կիլիկիոն Կաթողիկոս Արամ Ա-ն: Արամ Ա Վեհափառ իր ուրախությունը հայտնեց այս հանդիպման առթիվ և հա-

վասպեց, թե գոյզ Կաթողիկոսների ուստիագնացությունը «պարզամ ունեցող պահ է, որ մեր պարմութեան շրջագծէն անդին՝ դեպի հավիքնեականութիւն կ'երթայ ու մեր միասնականութիւնը կը շեշտի: Մենք միասին պիտի քալենք, միասին պիտի միաձենք, միասին պիտի գործենք ու ծառայենք մեր ազգին ու Հայրենիքին՝ պայծառութեան ի խնդիր»:

Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը խոսք առնելով՝ ողջունեց հավաքացայ ժողովրդին: Վեհափառ իր խոսքի ամբողջ ընթացքում այդպիս էլ չկարողացավ թաքցնել հուզմունքը:

«Սիրեակ՝ բարեպաշտ զավակներ Առաքելական Մայր Եկեղեցվո. գոհություն և փառք առ Աստված, որ Հայրապետիս քայլերն ուղղեց դեպի Հալեա, դեպի Դեր Զոր՝ Հայոց դարձի 1700-ամյակի առթիվ մեր եկեղեցականաց և բարեպաշտ ժողովրդի ուխտը կադարձելու: Ուխտ կադարձելու Աստծո և սուրբ նահապակների առջև: Այս պահին Հայրապետիս հոգին հուզմունք է ապրում այն ջերմ և խանդավառ ընդունելությունից, որով մեզ բարի գալուստ մաղթեցիք պարմական Հալեա քաղաքում: Անցնում էի հավեպահայերի միջով, լրեսնում էի ծեր ժայիդները, լրեսնում ծեր հայացքների մեջ ուրախությունը. նաև կարուրը, որ մեր միջոցով զնում էր դեպի Հայոց աշխարհ: Հավանաբար ձեզանից շափերը մեր պարվիրակության անդամների աչքերի մնջ գետսնում էին նույնադիա կարող՝ կարող առ ծեզ, քանզի մննք հարկադրոված ենք եղել բաժանվելու և ապրելու մեկուսի: Սակայն այդ կարուրը վերածվում էր հապարփության զգացումի, որովհետք մեր ժողովրդի եղեննից մազապուրծ զավակները, շնորհիվ բարյացակամ, մարդասեր վերաբերմունքի, շնորհիվ Սուրբ վեհանձն իշխանությունների և այս բարեկամ ժողովրդի, կարողացել են իրենց մեջքը շրկել և ազնիվ աշխաբանքով կերպել իրենց նոր կյանքը՝ Սուրբ առաքինի աշխաբավորության հետ դառնալով այս երկրի արժանավոր, պարկեշտ քաղաքացիներ: Քայլում էի և մրգածում ինչպես կարող եմ սփոփել ծեր հոգու կարուրը, ինչ կարող եմ փոխանցել, որով դուք կարողանաք ոգի առնել ու նոր հավաքով ու հույսով նայել դեպի մեր կյանքի բացվող նոր հազարամյակը:»

Ոչինչ չունեմ, բացի օրինություններ Ս. Էջմիածնից, որ կարուրով սպասում է իր զավակներին:

Սիրեակներ. գալով Ազար ու Անկախ Հայրենիքից, որպես ազգիս Հայրապետ, բներել եմ ծեզ մեր ողջույնները հայրենարնակ ժողովրդից, ողջույններ Ծիծեռնակարերդից, որը, որպես մի նոր վկայություն մեր հավերժական լինելության, վեր է հանել Հայոց հոդի վրա: Բերել եմ ծեզ ողջույններ Սարդարապատի զանգերից, որ իրենց դողանջով մշրապես արթուն են պահում Դեր Զորում ընկածներին, մասին՝ մահով հաղթելու: Մենք բներել ենք ողջույններ ծեզ Հայոց հայթական բանակից, որ իր սրի ծայրով այսօր արձանագրում է ու գրում մեր վերածնված Հայրենիքի պարմության նոր էօք՝ ապահովություն փոխանցելով ինչպես Հայրենիքի զավակներին, այնպես է ի սիյուս ապրող ժողովրդին, որի հոգին ալեկոծվում է, երբ Հայրենիքում ինչ-որ անհանգության նշաններ են երևում: Եկել ենք այսպես մեր նահապակների առջև

մեր ուստիր վերանորոգելու: Եկեղեցը, որպես Հայրապետ, մեր ժողովրդի զավակներին առաջնորդելու հայրենասիրության և եկեղեցասիրության մայրուղիներով, որպեսզի մեր Հայոց երկիրը միշտ լինի:

Այս պատրմական ատիթով մենք հոգու պարունակությունը՝ երախտիքի խոսք ասելու համան արաք ժողովրդի, հանուն այս օրինայի երկրի, հանուն նրա երիտասարդ ու կորովի առաջնորդի՝ վիհար Բաշշար է Ասաղի: Մեր ժողովուրծների բարեկամությունը երկար ու ճիգ փարիների վիրու ու պարմություն ունի: Արաք եղբայր ժողովուրծների հետ հարաբերություններն այսօր նոր հնչելություն և նոր որակ են սրացնել, նոր ընթացք են որդեգրել: Ի գնահապումն ու նշանավորումն երկու ժողովուրծների ու պետությունների բարեկամական հարաբերությունների, մեր ժողովրդի զավակները Հայոց հողի վրա բարձրացնում են արաք ժողովրդին նվիրված հուշարձան:

Այս բարեպարփեա ատիթով ուզում ենք նաև մեր շնորհակալական խոսքն ուղղել քոյլ Եկեղեցիների ներկայացուցիչներին, որոնք եկան ողջունելու մեր մուտքը Սիրիայի հողի վրա: Մենք կարող ենք վստահություն ունենալ ապագայի նկարմամբ, քանզի Քրիստոն Ավելպարանի պատրամներն իրականություն են դառնում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մենք բերել ենք Լուսավորչի Կանթեղի լույսը, որ 1700-ամյակի գոյնակարպարությունների սկիզբն ազդարարելիս դուրս բերեցինք Խոր Վիրապից և վատեցինք Էջման Սեղանի կանթեղը և հետո փոխանցեցինք Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսությանը: Միրով ուզում ենք Լուսավորչի Կանթեղի լույսը փոխանցել Թերիո թեմի առաջնորդ, սիրելի Սուրեն Սրբազնին, որ այդ լույսով վառվի Ս. Քառասնից մանկանց եկեղեցու կանթեղը, որպեսզի այդ լույսով շերմանան մեր հոգիները, որ այդ լույսը լուսավորի մեր ազգի ընթացքը ինչպես Հայրենիքում, այնպես է Արցախում և Ափյունքում: Փառք և գիտություն ենք հայքնում, որ Մեծի արժանի եղանք մեր սիրեցյալ եղբոր՝ Մեծի Տան Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի հետ ուստիր գնալու Դեր Զոր: Ուստի, որը դառնալու է սիրո և համագործակցության երաշխիք:

Ձռողի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու փառքը ուղեկից լինի մեր ժողովուրդի զավակներին այժմ և միշտ, հավիրյանս հավիրենից, ամեն»:

Ողջունի և օրինանքի խոսքերից հետո փեղի ունեցալ կանոնական աղոթք, իսկ այնուհետև՝ աջակամբույր: Հազարավոր հավաքացայլներ, որ չեն փեղավորվել եկեղեցում, այժմ մորթենում էին Վեհափառ Հայրապետներին՝ նրանց օրինությունները սրբանալու համար:

Կեսօրից հետո, ժամը 16.00-ին, ուխտավորների կարավանը, զույգ Հայրապետների գլխավորությամբ, մակնաց Դեր Զոր: 350 կիլոմետր երկարությամբ ճամապարեր նախ ճգվում էր խնամքով մշակված այգիների, բանջարանցների ու արքերի կողընը, ամենուր ջոր էր, ծառ ու կանաչություն: Փոքրիկ գյուղերն ու քաղաքներն իրենց գորշ, վասիկակ երդիկներով մխապաղատ սահում-անցնում էին ճանապարհի երկու կողմերով: Որքան մոտենում էր Դեր Զորը, այնքան փոխվում էր բուսածածկություր, անծայրածիր, անջոր, հրաշեկ փակարակները հաջորդում էին միմյանց:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ ՀԱՆԵՐ



86 տարի առաջ բոցագույն այս հարթավայրերը կլանեցին մեր ժողովրդի հազարավոր զավակներին: Կարավանը մոդենում էր հայ գաղթականության գլխավոր կենտրոնագեղիներից մեջին՝ Դեր Չորին (ավելի ճիշդ՝ Դեյր-Էզ-Ջոր, բառացի թարգմանությամբ՝ անբատի վանք: Իր անունն սրբացել է Եփրափի այս շրջանում եղած ամենամեծ անդամապատ կղզուց):

1915 թվականի Վերջներին և 1916 թվականի սկզբներին ընդամենը մի քանի ամսվա ընթացքում այսքեղ, ինչպես նաև ոչ հեռու գտնվող Մարաթի և Սուվարի անպապներում ոչնչացվեցին ավելի քան 200 հազար հայ գաղթականներ: Քչերը փրկվեցին: Շնորհիվ արար բարի ժողովրդի՝ սպանեցից ազատվեց մի քանի հազար հոգի ու ապասպան գրավ շրջակա բնակավայրերում: Ժամանակի ընթացքում նրանց մեծ մասը դարձավ արարախոս, սակայն պահեց իր ազգային հիշողությունն ու դիմագիծը:

Այժմ Դեր Չորը բնակչության կարևոր նշանակություն ունեցող, շուրջ 250 հազար բնակչությամբ քաղաք է: Հայերի թիվը կազմում է ընդամենը 100 հոգի: Եղեռնից վերապրող հայության խյալները 20-ական թվականների վերջներին սրբազն պարսպ համարեցին մահասիյուր անապատի մեջ ցանուիցիր, մեր անթաղ զոհերի աճյունները գեթ մասսամբ ամփոփել հավաքական գմբեթի ներքո: Այսպես Դեր Չորում կառուցվեց U. Նոհիսին մագուտը, մի պարզ ու համեստ շինվածք, որն արդեն 80-ական թվականներին գտնվում էր վկվելու վրանցի առջև: Մեծի Տան Կիլիկիո երջանկահիշաբակ Կաթողիկոս Գարեգին Երկրորդի (հետքագայում Վմենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին II) նախաձեռնությամբ իին մարդուի վերում 1990 թվականին սկսեց կառուցվել Մեծ Եղեռնի հուշահամալիրը և U. Նահաբակաց Եկեղեցին՝ որպես հիշաբակ մեկուկես միլիոն հայ նահաբակների և խորհրդանիշ բարեկամության և երախտազիրության առ արար ազնիվ ժողովուրդը: Սույն Եկեղեցին ճարդարապետական իհանալի կերպվածքով, դեղնավոն քարով ու մարմարով, գեղարվեստական բարձր ճաշակով կառույց է: Փողոցից Եկեղեցին չի երևում, բարձր հասդիր պարեսակ պարիսպները կարծես այն թաքցնում են պարզ ու պարապ հետքարքաւսերների աջքերից: Վստիճանները բանում են բակ, որի կենտրոնում պատճեկ գմբեթով Եկեղեցին է: Խորանածն մի կառույցի մեջ, անմար կրակի դիմաց, կանգնեցված է Հայաստանից բերված մի գեղաքանրակ, հսկայական խաչքար: Մի քիչ այն կողմանը նահաբակներին նվիրված քանդակաշարն է: Եկեղեցին փոքր է, գողգորիկ ու ինքնապիա: Ճիշդ կենտրոնում նահաբակների աճյուններով ապակեծածկ ցուցափեղերն են, որոնց միջից վեր է խոյանում գեղակերտ, խաչավարդ, ցորենագույն մարմարյա մի սյուն: Սև մարմարյա պատճերից մեկը պատճերում է անապատի ավագի վրա իր զավակին հայոց այբուբենը տվյալներու մոր քանդակը, իսկ մյուս պատճերի վրա դարձության ուղիներն ու ջարդերի հիմնական կենտրոնագեղիները ներկայացնող մի քարտեզ է գերեղված: Պատճերի վրակ շարված գրափեղկերում Հայկական հարցին և ցեղասպանությանը նվիրված երախտակություններ են, վավերագներ, լուսանկարներ:

Օմման պահից ի վեր Ս. Նահաբակաց եկեղեցին արդեն դարձավ ուխտագեղի: Ամեն դարի այսդեռ են զայս եղեռնը վերապրողների ժառանգները, զայս են խմբերով՝ անհաբական նախաձեռնությամբ:

Շինությունն ավարտվել է 1991 թվականին: Նոյյն թվականի մայիսի 5-ին Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Երկրորդ կապարել է եկեղեցու օծումը: 2000 թ. ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանության 85-ամյակի առթիվ, Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն, նահաբակների աճյունները պարփակող ավագների վրա կանգնած, Ներ Զորը հոչակեց Համազգային ուխտագեղի: Այդ կապակցությամբ Վեհափառը կոչ ուղղեց «մեր ժողովոյի բոլոր զավակներին, հետաւոր, թէ մուտքաւոր, մեծ, թէ փոքր, իրենց կեանքին մէջ գեթ մէկ անգամ մը ուխտագնացութեան գալու Դեր Զորը, հաղորդաւուրու և վերանորոգուելու մեր նահաբակներու անմեռ ոգիով ու նորիշական կրակով»:

Եկ ահա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, իբրև մի պարզ ուխտագոր, այցելել է Դեր Զոր՝ իր հարգանքի վուրբքը մաքուցելու ազգի անմեղ զոհերի հիշաբակին, եկել է՝ իր աղոթքը մրմնաշալու նրանց հոգիների հանգստության համար, եկել է հաղորդակցվելու նրանց հոգիների հետ, եկել է Ս. Էջմիածնից բյուր օրինություն բերելու և խոննկ ծխելու:

Ապրիլի 23-ին, երեկոյան ժամը 21.00-ին, ուխտավորների կարավանը հասավ Դեր Զոր: Հուշահամալիրի նահաբակաց մասուում Ամենայն Հայոց Կաթողիկոսի զիսավորությամբ կարարվեց հսկումի արարողություն:

Ապրիլի 24-ի վաղ առավույն ուխտավորները, Վեհափառ Հայրապետների առաջնորդությամբ, մենքնեցին Մարկարէ՛ Դեր Զորի անապափի-այն շրջանը, որին 1915 թ. վերջերին և 1916 թ. սկզբներին ոչնչացվեցին մեր ժողովորդի փասնյակ հազարավոր զավակներ: Մինչև այսօր էլ Մարկարէ՛ հողը պահել է նահաբակների անթաղ աճյունները, և անգամ պարահական հողային աշխարհանքներն ի ցոյց են հանում մարդկային անհամար ուսկորներ:

Զարդերի այս կենքրոնափեխում 1996 թվականին կառուցված Ս. Հարություն հրաշակերդ մագուսում և շրջակայքում ապրիլի 24-ի վաղ առավույն հավաքվել էին Սիրիայի փարքեր վայրերից՝ Համասկոսից, Քեսարից, Կամիշլիից, Նալեայից, ինչպես նաև Լիբանանից և այլ երկրներից ժամանած հազարավոր ուխտավորներ: Կարարվեց հոգեհանգստի արարողություն: Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն, իր պարզամբ փալով ժողովորդին, շեշտեց. «Սիրիելի՛ ժողովուրդ, իրաքանչիւր կը զգա, որ մեր կեանք այս պահը մեծ խորհուրդ ու պարզամ ունեցող պահ մին է: Ինչպես կը փեսներ, Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի հետ միասին, որպէս երկու Կաթողիկոսներ, եկած ենք ուխտի մեր նահաբակներու մոք: Եկած ենք ամրապնդելու մեր կամքը, ամրապնդելու մեր ազգի միասնութիւնը: Մեր ազգի նկարն է այժմ այստեղ՝ Հայրենիքին և Սկիյութի զանազան անկիւններէն»: Վեհափառն իր խոսքն ավարտեց եերևյալ շեշտադրությամբ, որ Դեր Զորը միայն գերեզման չէ, այլ մեր ժողովորդի հաղթության գրավականը.

«Դեր Զորին մեջ թէեւ մեր նախնիները ջարդուեցան, բայց չմեռան, որովհետեւ իրենց նահարակութեամբ կեանք գունցին մնա, իսկ իրենք զարդարուեցան անմահութեան պսակով»:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդին իր պատգամը փալով ժողովրդին՝ կոչ արեց բարձր պահել հանուն հավաքի և հանուն հայրենյաց նահարակաված մեր անհամար զոեերի կրտակը: Վեհափառ Հայրապետը մասնավորապես շեշտեց. «Ապրիլի 24-ը հիշաբակի օր է, նահարակաց հարգանքի մակուցման օր: Այսօր բազահազար հայորդիք Մայր Հայաստանում խումբ առ խումբ հաղթական բարձրանում են Ծիծենակաբերդի բարձրունք՝ իրենց ուխտը կարարելու եղենին՝ մեր սուրբ նահարակների առջև: Այսօր Մենք, որպես Հայրապետ Հայոց, 1700-ամյակի առթիվ գլուխ անցած Մայր Հայրենիքից այստեղ ներկա մտավորական հայորդյաց, մեր Եկեղեցու սպասավորների հետ, մեր Եկեղեցու զավակների հետ, մեր Եղբոր՝ Արամ Առաջին Հայրապետի և իր ուխտյալ միաբանության հետ և ծեզ հետ, սիրելի՝ սիրիահայեր, եկեղեց այսպես՝ ծնրադրելու նահարակաց առջև և մեր ուխտը վերանորոգելու, այն ուխտը, որ մեր Տիրոջից՝ Դիսու Քրիստոսից փրկեց պատգամ, և մեր ժողովոյի զավակները լայնորեն իրենց հոգին բաց արեցին այդ պատգամի առջև՝ «Սիրեցեք միմյանց»: Այս պատգամն էր, որ ուղեկից Եղավ մեր ազգի զավակաց: Այսօր կանգնած նահարակաց այս հուշակորդի առջև, նրանց լույս հիշաբակի առջև՝ մեր հոգում բարձրանում է միածումը՝ բանասրեթական փողը հայ մեծ բանասրենքի «Ո՛վ հայ ժողովուրդ, քո ուժը քո հավաքականության մեջ է»: Մենք, սիրելիներ, որպես Եկեղեցի, որպես հոգնոր առաջնորդ, որպես առաջին սպասավորը Առաքելական մեր Մայր Եկեղեցու, Մեր շուրջերի վրա պիտի կրենք այդ երկու պատգամները՝ սիրով միաբան լինելու, միասիրով, միակամ լինելու, որպեսզի մեր ազգային կյանքից ներս երթիք այլևս փեղ չգրնեն «Դեր Զոր», «ջարդ», «կորորած» բառերը: Այլ միշտ մենք կարողանանք հաղթանակից հայրանակ քայլել, որպեսզի մեր կյանքում երթեք զինի Սումգայիթ և Եռաբրու, որը հանգչում են մեր նորօրյա նահարակները՝ քաջ ու արի: Նահարակներ, որոնց արյամբ երաշխավորված է մեր հավիտենական ընթացքը գեափի նոր հազարամյակներ: Մենք աղոթք ենք բարձրացնում առ Աստված մեր սուրբ նահարակաց առջև, որ Տերն անսասան պահի ազգս Հայոց, երկիրս Հայաստան, որ մենք կարողանանք սիրով շղարշված մեր հոգիներով կերպել երազի այն Հայրենիքը, հանուն որի նահարակվեցին, մարգիրոսացան մեր ժողովրդի զավակունք: Նրանց հիշաբակին բերում ենք հավերժական Մասյաց կարուի հայացքը և օրինությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

«Յիշաբակն արդարոց օրինութեամբ եղիցի. ամէն»:

Արարողությունից հետո ուխտավորները կրկին վերադարձան Դեր Զոր՝ Ս. Նահարակաց Եկեղեցի: Այսպես Ամենայն Հայոց Կաթողիկոսը մակուցեց Ամսահ և Սուրբ Պատրարքաց: Երգեցողությունը կադարձում էր Հալեպի «Լուսավորիչ» երգախումբը: Պատրարքաջի ավարտից հետո Եկեղեցի հուշակորդի և անմար կրակի առջև փեղի ունեցակ հոգիհանգստյան արարողություն: Սուրեն արքեպս. Գաթարոյանը

Կաթողիկոսներին հանձնեց հուշանվեր-սկիհներ, որպեսզի «Ս. Էջմիածնի և Անթիլիասի Մայր տաճարներուն մէջ միշտ ներկա ըլլայ Դեր Զորը՝ իբրև մեր ժողովորդի գոհագործումի նուիրական բաժանու»: Տարբեր երկրներից ժամանած շորջ 15 հազար ուխտավորներ, որ հավաքվել էին եկեղեցում, շրջակայքում ու մոտակա փողոցներում, համակ ուշադրությամբ ունկնդրեցին Վեհափառ Հայրապետի պատգամը:

Հայոց Մեծ եղեռնի 86-րդ տարեվիցի ամիսով 2001 թ. ապրիլի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ասաց.

«Որ զանձննս իւրեանց քեզ, Հայր, ընծայեցին և Որդոյ քում Քրիստոսի եղեն խաչակիցք»:

Սիրելիներ, այսպես եկանք՝ մեր եղու հայացքի առջև Արևմտյան Հայապանի օրինյալ հողը՝ Սուրբ Մասաց փեշերին այրվող այգեստաններ, խողխողված մանուկ ու ծեր, դեպի անապատ քվող անզեն ու քանչահար ժողովուրդ: Անցանք այս ափերով Եփիրապի, որի ջրերը կյանք բաշխելու փոխարեն Հայոց լեռնաշխարհից դիակ ու արյուն էին քերում 86 տարիներ առաջ և սարսահի էին գուժում ու մահ: Արագոնթաց մեքենաներով կիրեցինք անեզր դասիապանը, որը, դոր՝ բյուր նահապակներ հայոց, չափեցիք քայլ-քայլ և խաջը ուսած՝ անցաք Գողգոթայի ճանապարհով:

Եկել ենք, որպես շնորհընկալ Ամենայն Հայոց Հայրապետ, առաջին անգամ, հանուն մեր նախորդների, այսօր խորին խոնարհումն ծնրադրելու և Մայր Հայրենիքի ու Սուրբ Էջմիածնի օրինությունը բաշխելու շիկազույն այս հոդին, որը, ժամանակին անջուր ու անմարդաբնակ, հավաքական ծեր գերեզմանը դարձավ ու սրբագործվեց մարդիրույալ ծեր արյամք՝ նվիրական դատնալով համայն հայոց համար:

Անապատի դոթրակեզ քամին ավագով ծածկեց անթաղ մնացած ծեր աճյունները: Բայց մի՛թե Բարձրյալի աջքից կարելի է թաքցնել մարդկային չարիքը, մարդկային ամոթը: Մի՛թե ոճրապարփ միջքով ու ձնոքով գործվածը, որ սրակեց ու բնավեր արեց սպեղծարար հնագույն մի ժողովրդի, կարող է մոռացության շղարշով պատվել ու ջնջվել սերունդների հիշողությունից:

Եկել ենք համուն համայն հայ ժողովրդի, որը աշխարհի բոլոր ծագերում այսօր՝ ապրիլի 24-ին, համախումբ ու միասնական ոգեկոչում է նահապակներիդ սուրբ հիշապակը: Այսօր բազմահազար հայորդներ, Հայաստանի Նարաւակերպության նախագահի գլխավորությամբ, Շիծեռնակարերով բարձունքում խոնարիկում են ծեր հիշապակը հավերժացնող հուշակոթողի առջև:

Եկել ենք ողեկցությամբ աշխարհավյուն մեր զավակաց, ովքեր՝ շառավիղները նախճիրից փրկվածների, աշխարիի ջրու կողմերում հայ կյանքը վերահասդրամած, պատրմական մեր Հայրենիքի արևելյան մի հաղվածում Հայատրանի ազատ պերությունը վերականգնած այսօր նախանձախնդիր են Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, որպեսզի ոչ մի ժողովուրդ չապրի երբեք սեփական պատրկանելության համար կոփորածի ողբերգությունն ու վիրավորանքը և չկառուցի Դեր Զոր, Շիծեռ-

Ա. ԹՈՒՂԻԿ ԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ



նակարերդ ու Եակ Վաշեմ, որպեսզի ոչ մի հողում չյինեն Մայդանեկ ու Բուխենվալ:

Սուրբ Էջմիածնի 1700-ամյա Միածնաէջ Լուս Խորանի օրինությունն ենք բերել նահագրակների նշխարներին, Սուրբ Լուսավորչի Կանթեղի լույսը՝ մշտադորք: Եկեղ ենք ուխտի, սրբազն երդման: Եկեղ ենք ձեր՝ Քրիստոսի խաչակիցների հազարաւոր անհայր անունների հիշարակումով մեր ուխտը առ Ասրբած հասրափելու, համազգային մեր միասնականությունը նորոգելու և մեր հավատը զորացնելու արդարության հաղթանակի հանդեպ: Եկեղ ենք ասելու ձեզ, որ ամեն ապրիլի 24-ի, նաև այսօր, հայ ընդունիքներում զավակներ են ծնվում հայորդիներ և հայուհիներ, որ Առաքելական Սուրբ Եկեղեցու ավագանում մկրտվում են ձեր անուններով:

Սիրել՝ ժողովուրդ հայոց ի սիյուս աշխարհի. այս պատին մեր ուրքի տակ հողին խառնված, փշուր-փշուր ու մանրված ոսկորներն են հայ նահագրակների, սակայն մեր առջև՝ նրանց հիշարակը հավերժացնող վեհաբես կոթող-եկեղեցին է երկինք պարզած փրկագործ խաչով, որի թևերի հովանու ներքո խաղաղություն են գտել նշխարները մեր ազնիվ զոհերի:

Արդարն, սիրելիներ, բազմից խաչվելով չե, որ խաչակից ենք Քրիստոսին, այլ որովհետք հարություն ենք առել, մասք կյանքով ենք ովտակոյինել և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի օրինակով ամորապարս թողել մեզ խաչողներին: Մեր ժողովորդի դարագիր զավակները սպեղծարար իրենց կյանքը վերընճուղեցին աշխարհի դարբեր երկրներում և քրիստոնյա հայի ազնիվ ու օրինավոր նկարագրով հարգանք ու վստահություն վստակեցին ամենուր: Այդ նույն քրիստոնյա հայ՝ հայ սրբեղող, արիենսրապոր, վաճառական, բժիշկ ու ճարդարապետ, Օսմանյան Թուրքիայում անցնող դարասկզբին մահվան դադարապարզվեց, քանզի բնիկ ու դոհմիկ ժողովուրդն էր Արարատի երկրի, քանզի դարերով վկայել ու վկայում էր իր հավաքարությունը Քրիստոսին ու Նրա սիրույն, որով մերժել էր չարը ու հայուել մահեր:

Մեր նահագրակների սուրբ հիշարակի ոգեկոչման այս նվիրական օրը Մեր սիրեցյալ եղբայր Արամ Ա Կաթողիկոսի հետ Դեր Զոր ուխտի եկած մեր զավակների, համայն մեր ժողովրդի անունից երախտագիրության Մեր խոսքն ենք ուղղում արար ժողովրդին և բոլոր ժողովուրդներին, որոնք արեավիրքի դժմակ օրերին սադարեցին ասդանդական հայերին և մարդասիրության հազարավոր օրինակներով դադարապեցին հայկական կուրորածները, իսկ այսօր նույն նախանձախնդրությամբ ճանաչում են Հայոց ցեղասպանության իրողությունը:

Մեր գմանակարքն ու շնորհակալությունն ենք հայունում մասնավորաբար Արքայի պետությանը, որն ապաստան է Պավել բազմաթիվ դարագիր հայերի, օգնել բուժելու հոգու վերքը և ընդունելով նրանց որպես իր լիարժեք քաղաքացիների, ի հարգանք հայ նահագրակների, աջակցել է նաև՝ կատուցելու Դեր Զորի այս հուշահմայիրը: Նահագրակաց լուսաբնակ այս մագրտան Սուրբ Խորանի առջև Մեր աղոթքն ենք բարձրացնում հանոն Սիրիո մեծարգո նախագահ Բաշար Ասադի արևշագու-

թյան և նրա երջանկահիշապրակ հոր ու նախորդի՝ Հաֆեզ Ասադի հոգու հանգստության:

Տեղասպանություն ապրած ժողովրդի Հայրապետիս աղոթքին այսօր երկնքից ձայնակից են բոլոր հոգիները հայ մարդկուսների՝ հայցելով խաղաղություն համայն աշխարհին, նաև մարդկային քաղաքակրթության հնագույն օրրան այս գրարածաւորանում այլոր բոլոր ժողովուրդներին:

Ողորմի՞ր, Ասդված, հոգիներին մեր սուրբ նահապակների, որ «Որդոյ քում Քրիստոսի նղեն խաչակիցք» և «կանգնեցին մեզ յաղթող նշան ընդէմ թշնամոյն»: Չորացրո՛, Ասդված, ճշմարդկափության ու արդարամբության հոգին ժողովուրդների, որպեսզի պետքությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը նոր դարասկզբին արդարության ձայնի ազգարարը դառնա ու մոդեցնի նրան հաղթանակը: Այդ օրը, ովք Տեր, թող մեզ շուրջ ծագի՝ հանուն չարիքի մերժման ամբողջ աշխարհում, հանուն մարդկության խաղաղ ու բարեգործ լուսավոր գալիքի:

Սիրելիներ, նվիրական ու պարմական այս պահին մեր գոհունակությունն ենք հայություն մեր սիրեցյալ եղբօք՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ին, նրա ուխույալ միաբանությանը, որ մշտական կերպով իրենց աղոթքն են բարձրացնում առ Ասդված, վառ պահում նախնյաց հիշապրակը: Մեր գնահապականն ենք բերում սուրբառնակ մեր բարեպաշտ զավակներին, որոնք նախանձախնդիր պահապաններն են նահապակաց սրբավայրերի: Մենք այս առիթով մեզ հետ Հայրենիքից քերել ենք հոդ, որպեսզի Սուրբն Սրբազնն այդ հոդը շառ գրա Դեր Զորի աճունների վրա, որ նահապակները հանգիստ հանգչեն հայրենի հոդի ներքո: Բերել ենք նաև ջուր Ս. Էջմիածնից: Գիտենք, որ գամանյակ մղոններ անցած մեր նահապակները պատպակ են, և հավաքացած ենք, որ Ս. Էջմիածնից բերված այդ ջուրը պիտի նրանց պապակը մարի: Մենք այս երկու օրը գետանք և բարձրածայն գնահապում ենք Սրբազն Հոր ծառայությունը նահապակաց այս վայրում: Եվ Մենք զարդարում ենք նրա կուրծքը եպիսկոպոսական պանակնեով: Թող Ասդված առողջ կյանք և ծառայության բացում գարիքներ պարզվի Սուրբն Սրբազնին: Նահապակաց մասունքն բերել ենք մի խաչ, որից լոյս պիտի ճառագի նահապակներին, և նրանք պիտի այսուհետու հանգիստ հանգչեն: Այս ուխտագնացության առիթով, որպես եղբայրական սիրո վկայություն, միասնաբար աղոթեցինք Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի հետ: Յանկանամ ենք, որպես հիշապրակ, Արամ Վեհափառին նվիրել Ամենափրկիչ Ս. Ասդվածածնի նկարը՝ հայցելով Ասդվածամբ մշտական հովանավորությունը Նորին Սրբության, կիլիկյան միաբանների և նրա հավաքացյալ ժողովորդի վրա: Գնահապաններ Մեր վերջին խոսքը մեր ժողովորդի այն զավակներին, որ մեզ հետ ուխտի եկան և ծնկի իշան նահապակների աճունի առջև:

«Յիշապակն արդարոց օրինութեամբ եղիցի». ամեն»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսն իր պարգամի մեջ շեշտեց Դեր Զորի իմաստն ու արժեքը՝ հապկապես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության համար. «Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը Անբիլիասում հասպարուելոց առաջ իր պար-

մական կայքեն ու գրաբածաշրջանեն աքսորական եղաւ Դեր Զորին մէջ, քայլեց Դեր Զորի աւազներէն, սակայն չմնաց Դեր Զորի մէջ»: Վեհափառը նաև նշեց, որ այս ուխտագնացությունը դեպի Դեր Զոր երևակայություն չէ, այլ իրողություն, «իրողութիւն մը, որ ժողովրդի մը արդար դափին ու բռնաբարուած իրաւոնքներուն ձեռքբերման գրաւականն է»:

Երգչախումբը կագարեց «Ս. Էջմիածին» և «Կիլիկիա» երգերը, որոնց հուզաբաթավ հնչյունների ներքո հավաքացյալներն սպացան Վեհափառ Հայրապետների օրինությունները:

Անհրաժեշտ է նշել, որ ուխտագնացության առթիվ Ս. Նահապակաց մասունք մեջ զերեղվեց փոփին մի հուշաքար՝ որպես զույգ Վեհափառների միասնական ուխտի առհավաքցյան:

Վեհափառների գլխավորած ուխտավորների թափորը հեռանում է Դեր Զորից, հեռանում է՝ կարծես պարտքի մի ծանր զգացողությունից թեթևացած:

Դեր Զոր - Նախակ խճուղուց ոչ հեռու Եփրափի արձաթե գորին է գալարվում միապար ու անդարբեր: Հայոց Մայր գետը նահատակ հայերի հավաքական գերեզմանը և նրանց գանձալից վերջին վայրէյանների միակ համր վկան: Զգայացունց էր հանդիպումը Եփրափի հետ: Ուխտավորներն իշխում են գետափ, շափերը մփնում են ջուրը, ցոլում երեսները, կանայք ծաղկելինջեր են նեփում գետը. գուցե Եփրափը դրանք սփոթ նահապակների աճյունների վրա:

Կեսօրից հետո ուխտավորները վերադարձան Հայեա: Իրադարձություններով ու միջոցառումներով լի այդ օրն ավարտվեց Յեղասպանության 86-րդ դարեղարձի ոգեկոչման արարողությամբ: Երեկոյան ժամը 21.00-ին զույգ Հայրապետներն ու նրանց ուղեկցող պատվիրակություններն ուղղվեցին Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցի: Սա 1983 թվականի մի նորակառույց է՝ ընդարձակ և հարմարավեր սրահով: Վերջին դարիներին միշտ այսպես են կազմակերպվում Ապրիլյան եղեռնին նվիրված համայնքային ոգեկոչման արարողությունները:

Եկեղեցին, նրա բակը և անգամ շրջակայրը լեփ-լեցուն են հավաքացյալների բազմություններով, շաբերը ցանկանում էին զոնե հեռվից փեսնել Հայրապետներին, սպանալ նրանց օրինությունը: Գեղարվեստական ճոխ հայրազգերից հետո Վեհափառ Հայրապետները համեստ եկան հայրապետական պարգամենտներով: Արամ Ա Կաթողիկոսը, դիմելով ներկաներին, հորորդեց չմոռանալ անցյալը և ունենալ մեր ազգային գաղափարախոսությունը: «Ազգերու գաղափարախոսութիւնը չի կրնար փոխուի: Ուշքը է հասպատենք մեր ազգին հիմնահարցերը, առաջնահերթութիւնները: Ամիմասք է միայն մեր անցեալի արժեքներով հայրապանալը: Ամքը է բացուինք աշխարեին, որպէսզի այդ բոլորին մէջ կարողանանք յսփակեցնել մեր ընելիքը: Ըստիքներով ժամանակ չ'անցընենք, այլ ընելիքներով: Տարբեր մօղեցումներ ունինք ու դարբերութիւններ, բայց անոնք պէտք չէ մեզ դանին հակասութեանց: Սարդարապափի մարդի երգը կ'ըսէ. «Երբ դան զանգը՝ ահազանգը, որ մեր հոգու պարփը դանք»: Ահա ժամը մեր հոգու պարփը դալու: Վաղը ուշ կ'ըլլայ արդէն»:

Անդրահարնալով դերգորյան ուխտազնացությանը, Արամ Ա Կաթողիկոսը նշեց. «Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդ Վեհափառին հետք միասին գնացինք մենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդ Վեհափառին հետք վերադարձանք: Ես Դեր Զորին մէջ ասացի՝ «Ուր որ գնանք, Դեր Զորը մեզի հետք պիտի տանինք: Դեր Զորը պիտի տանինք մեր եկեղեցիները, մեր դարոցները, պիտի տանինք ամենուր, որ հայու շոնչ կայ»:

Իր հայրապետական պատգամուս Գարեգին Երկրորդը հորդորեց հավաքարմություն ցուցաբերել մեր նախարակների թռղած կրակին. «Սիրելի բարեպաշտի հայորդիք, սիրելի՛ հաւեպում, լինել ձեր մեջ, դժևսնել ձեր պահեվածքն ու կեցվածքը, ծանոթանալ ձեր խանդակառ ոգուն, նախանձախնդրությանը մեր ազգային սրբությունների, մեր ազգային արժեքների հանդես, ձեր սերը հայրենյաց հանդես, ձեր սերը հայապանյաց Ա. Եկեղեցու հանդես, ձեր սերը Մայր Աթոռ Ա. Էջմիածնի հանդես: Այս օրը՝ ապրիլի 24-ի Մեծ եղեռնի ողբերգությունը, փխրության, ընդգումի զգացումով ծանրացել է ամենքին հոգու վրա: Այսուհանդերձ, սիրելիներ՝, Հայրապետին սիրդն այսօր միսիթարված է և թեթևության զգացումով է համակված, որովհետք անկատար մի ուխտ իրականացրինք Հայաստանից ժամանած մեր պարվարժան հայորդիների հետ՝ զիսավորությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ, փիար Գագիկ Հարությունյանի, ինչպես նաև մեր սիրեցյալ եղբայր, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Վեհափառ Հայրապետի, մեր հոգևոր սպասավորների և եղբայրների հետ: Իրականացրինք մի անկատար ուխտ, որ իդան ու ցանկությունն էր անցնող XX դարի լուսահոգի Հայոց Հայրապետների, անկադար մի ուխտ, որ իդան ու երազանքն էր հայրենաբնակ մեր ժողովրդի, որովհետք անցած 86 դարիներին հնարավորություն ըննենուից, նրանք հնարավորություն չունեցան գալ Դեր Զոր՝ ծնրադրելու այդ սուրբ հոլին, աղոթք բարձրացնելու առ Ասլված, ինկարկելու նրանց անմահ հիշատակին: Ահա՛, Հայոց Հայրապետների օրինությունն եմ քերել, ոչ միայն անցած դարի 132 Ամենայն Հայոց Հայրապետների օրինությունը, այլև մեր ժողովրդի սերը: Հայրենիքի սերն ու օրինությունը մեր հոգում ծրագրած՝ ուխտի ենք եկել: Եկել ենք այդ օրինությունը ծածկույթ դարձնելու Դեր Զորի անապատների վրա, որպեսզի այդ օրինության ներջու նրանք հանգչեն իշղաղ ու հանգիստ, որպեսզի խաղաղվեն նրանց հոգիները՝ գետներով, որ իրենց երազները մարմին են առել և իրականություն են դարձել ի դեմս Ազատ, Անկախ Մայր Հայաստանի: Տեսնելով, որ այնքենից այսօր Ամենայն Հայոց Հայրապետն է զայիս, որպեսզի իր օրինությունները քերի անմեղ զոհերի հիշատակին, որ այնքեղից մշակույթի ու կրթության մշակներն են զայիս՝ իրենց սերը, իրենց հավաքարմությունը հավաստելու նրանց անավարդ երազներին:

Այսօր մենք, շնորհիկ քաջազուն մեր զավակների, վերադիմ կերպել ենք հայոց անկախ պետականությունը, ազատագրել ենք Արցախը, սակայն անավարդ է, ամբողջական չէ դակավին 1,5 միլիոն հայորդյաց երազը և գետիլը՝ հանուն որի

ՀԱՅՈՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՔ ՆԱՀԱՍԱԿԱՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ



նրանք ընկան, մարդիրոսացան, նահապակվեցին: Այդ երազը հզոր հայրենիքի կերպումն է, այդ երազը բարեշն հայրենիքի սփեղծումն է, այդ երազն այնպիսի հայրենիքի սփեղծումն է, որքեղ հայորդիք կարողանան իրենց սփեղծագործ աշխատանքով ապրել իւաղաղ ու անվրոպ: Ամենքս այսօր, սիրելիներ, մեր հոգու մեջ խորասուզված, փորձում ենք հաղորդ դառնալ մեր նահապակներին, փորձում ենք հասկանալ խորհուրդը մարդիրոսության, փորձում ենք լսել նրանց պարզամը, խորհուրդը մեծ: Յուրաքանչյուրիս հոգում այդ պարզամը, թեև գարքեր բառերով ու գարքեր նախադասություններով, մեկ արքահայպություն է գդնում այն մեր նահապակ հայորդիներից մեզ եկող պարզամն է՝ լինել հավադարիմ մեր հայրենյաց սրբազն ժառանգությանը, սիրել միմյանց, սիրով շաղախել մեր ազգի միասնությունը, սիրով ամրապնդել հիմերը նորանկախ մեր պետականության: Ֆախի ու գրդմության մեջ մարդ չի կարող սփեղծարար կյանքով ապրել: Ուրախությունը, քերկանը, սերը հոգում ծրարած անհապն է գորեղ, արի և ունակ հրաշագործելու: Հայոց հավաքի նվիրական կենսորնից գալով՝ այս պարզամն է, որ ուզում եմ փոխանցել ձեզ՝ ՍԵՐ ունենալ մեր հոգիներում, ՍԵՐ ունենալ մեր պարմության, ՍԵՐ ունենալ մեր ՎԱՅՐԵՆԻՔ նկարմամբ, որ այս օրերին մաքառում է, մաքառում է իր պետականության կերպման համար: Եվ այդ ՍԵՐԸ պեսքը է ամրապնդի 24 ապրիլի խորհրդով, պիտի դատնա գիտիք, և ինչպես մեր սիրելի եղբայր Արամ Ա Կաթողիկոսն ասաց, պիտի դատնա կամք, պիտի դատնա մարդարավեր, որպեսզի Հայոց աշխարհից հեռու վանվեն ցավ ու դրդմություն, արյուն և արցունք, որպեսզի հայոց մայրերը քերկանքով, ցնծությամբ դիմավորեն վուն դարձող իրենց զավակներին, որպեսզի հայոց մայրերը հայոց նոր սերունդը կրթեն ու դաստիարակեն մեսրոպյան ոգով, վարդանաց ուխտով, Ավարայրի և Սարդարապատի արքությամբ և հավաքով: Ասդպահանչում կարորում ենք. «Ու իր զավակին է կրթում, նա նախանձն է շարժում թշնամու»: Մեր մաղթանքն է, մեր աղոթքն է, որպեսզի մենք կարողանանք 1700-ամյակը մի գեղեցիկ հոգևոր առիթ դարձնել և մեր զավակներին կրթել՝ կրթել հայրենական անանց արժեքները ներարկելով նրանց եւթյան մեջ, նրանց անձերում:

Սիրելիներ. Մենք նվիրական այս եկեղեցու կամարների ներքո ուզում ենք աղոթք բարձրացնել առ Աստված՝ հայցելով, որ Տերն անսասան պահի ձեր հավաքը, որ այնքան բուռն կերպով դրսարկեց այս օրերին: Մեր աղոթքն է, որ Տերը խաղաղություն ցողի. Ամեն»:

Ուխտանացության վերջին օրը ևս խիստ հազեցած եր գարքեր միջոցառումներով: Ծրագրի համաձայն, պավուլիսակություններն այցելեցին Հալեպի հայկական երեք լավագույն ուսումնական հասպատություններ: Այսօր Հալեպի նահանգում գործում են Հայ Առաքելական համայնքին պարկանող 24 վարժարան (18 ամենօրյա և 6 կիրակնօրյա): Միայն Հալեպ քաղաքում գործում են ինը դարրոց, որոնցից հնագույնը 1876 թ. հիմնադրված Ազգային Ներսեսյան վարժարանն է: Քաղաքի հայկական դպրոցներում սովորող աշակերտների թիվը շուրջ 9,5 հազար է (մանկապարտեզի հետ միասին): Բացի այդ, հայ կաթողիկե համայնքն ունի ինչ վարժարան՝

4000 աշակերդով, իսկ ավելարանական համայնքն ունի հինգ կրթօջախ: Այսպիսով, միասին վերցրած, Հալեպի նաևնում այսօր գործում է 34 հայկական դպրոցական հաստաբություն: Ուսուցումը կարտարվում է Սիրիայի Արաբական Հանրապետության պետական ուսումնական ծրագրերով՝ արաբերեն լեզվով: Պետության կողմից արդունված է շաբաթական չորս ժամ դասավանդել հայերեն լեզու և կրոն, որի ընթացքում ուսուցվում է նաև հայ ժողովրդի պայմանություն (առանց թույլավորության): Դպրոցների գործադիր վիճունները բոլորն էլ անխափիր արաբներ են (քիւֆունյա կամ մահմետական) և նշանակվում են պետության կողմից: Քանի որ դպրոցները մասնավոր են, ապա դրանցում պաշտոնավարում են նաև սեփականագրոց ներկայացուցիչները, որոնց անվանում են «հայ լինօրեններ»: Ուսման համար աշակերդները վճարում են վարեկան 170 ամերիկյան դոլլար: Առանձին վճարվում են նաև փոխադրամիջոցների համար: Անվճարունակ աշակերդների ծախսերը հոգում է դպրոցի հոգաբարձությունը: Նկատենք, որ Սիրիայում հայ (ինչպես նաև այլ կրոնական ու ազգային փոքրամասնությունների) կուսակցությունների գործունեությունն արգելված է, ուստի նրանք գործում են մշակութային միությունների անվան ներքո: Իսկ դպրոցներն ել, բնականաբար, գրնվում են այս կամ այն մշակութային միության հովանավորության ներքո:

Դադուլիս Կաթողիկոսը բարձր գնահատեց դպրոցում կարարվող նվիրական աշխատանքը: Դիմելով աշակերդությանն ու ուսուցչական անձնակազմին՝ Վեհափառ ասաց. «Բարի, արդար և օրինյալ առավոր է բացվել յորաքանչյուրիս համար: Փառք ենք բարձրացնում առ Ասպած, որ Մենք ձեզ հետ ենք: Սիրելի՛ սաներ. այսօր ձեզ համար հիշարժան և անսահման որախության օր է, քանզի Հայոց Հայրապետներն են այցելել ձեզ: Սիրելի՛ սաներ և ուսուցիչներ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը սերն իրենց հոգու մեջ են եկել ձեզ մոլոր: Օրինյալ է առավորն այս, օրինյալ է այս հանդիպումը սաների հետ, սաներ, որոնք կրթվում ու հասակ են առնում հայաշունչ իրենց հոգում կրելով հայրենյաց գեղարվությունը: Հայոց Հայրապետներին ավելի միսիթարիչ բան դժվար է մաքրուել, պարզենել, քան ուսայի, նախնյաց հակաբքով գորեղ, հսկակ նպականերով աճող այս սերունդը: Ուզում եմ իմ գնահատանքն ու գոհունակությունը, շնորհակալությունը հայունել մեր սիրելի Սուրբն Սրբազնին, որ մատուցեց մեզ այս գեղեցիկ ընծան՝ հանդիպումը ձեզ հետ: Այս սահիթով իմ գնահատական խոսքն եմ ուղղում ՀԲՀ Սիրիանը, որն իր առաքելությունն է դարձել հայ մանուկների սերնդի դաստիարակության ու կրթության վեհ գործը ինչպես Սիյուտքում, այնպես է Մայր Հայրենիքում: Այսօր միայն

Կաթողիկոսը բարձր գնահատեց դպրոցում կարարվող նվիրական աշխատանքը: Դիմելով աշակերդությանն ու ուսուցչական անձնակազմին՝ Վեհափառ ասաց. «Բարի, արդար և օրինյալ առավոր է բացվել յորաքանչյուրիս համար: Փառք ենք բարձրացնում առ Ասպած, որ Մենք ձեզ հետ ենք: Սիրելի՛ սաներ. այսօր ձեզ համար հիշարժան և անսահման որախության օր է, քանզի Հայոց Հայրապետներն են այցելել ձեզ: Սիրելի՛ սաներ և ուսուցիչներ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը սերն իրենց հոգու մեջ են եկել ձեզ մոլոր: Օրինյալ է առավորն այս, օրինյալ է այս հանդիպումը սաների հետ, սաներ, որոնք կրթվում ու հասակ են առնում հայաշունչ իրենց հոգում կրելով հայրենյաց գեղարվությունը: Հայոց Հայրապետներին ավելի միսիթարիչ բան դժվար է մաքրուել, պարզենել, քան ուսայի, նախնյաց հակաբքով գորեղ, հսկակ նպականերով աճող այս սերունդը: Ուզում եմ իմ գնահատանքն ու գոհունակությունը, շնորհակալությունը հայունել մեր սիրելի Սուրբն Սրբազնին, որ մատուցեց մեզ այս գեղեցիկ ընծան՝ հանդիպումը ձեզ հետ: Այս սահիթով իմ գնահատական խոսքն եմ ուղղում ՀԲՀ Սիրիանը, որն իր առաքելությունն է դարձել հայ մանուկների սերնդի դաստիարակության ու կրթության վեհ գործը ինչպես Սիյուտքում, այնպես է Մայր Հայրենիքում: Այսօր միայն

Մայր Հայրենիքում, մանկա-պատանեկան սրբութագործական կենտրոններում, 4000 պատանիներ են սովորում ՀՔԸ Սիոնթյան շնորհիվ և աջակցությամբ:

Ես իմ գնահատանքի խոսքն եմ ուղղում մանկավարժներին, որոնք նվիրված են հայորդյաց կրթության նվիրական գործին, մանկավարժներին, որոնց ծնորում է գիտնական մեր ժողովրդի ու Հայրենիքի վաղվա օրը, բայց նաև այսօրը, որովհետք այն ոգին, որ նրանք կերպում են ձեր մեջ, այն տեսքը, որ տախու են ձեզ, դրանով է պայմանավորվելու մեր ազգի, մեր ժողովրդի վաղվա օրը՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում։ Ես հապարփությամբ պիտի ասեմ, որ մանկավարժները բարձր նախանձախնդրությամբ են իրականացնում այդ գործը։

Սիրելի՝ սաներ. դարձյալ կրկնում եմ, որ դուք ոչ միայն մեր ապագան եք, այլև այսօրը։ Միայն պարզապես ուզում եմ ձեզ հիշեցնել մի պարագա։ Դուք նսդրած եք այն նսդրաններին, որին նսդրած են եղել հայոց մեծերը՝ բոլորն անխորի՝ սկսյալ Մեսրոպ Մաշտոցով, Վարդան Մամիկոնյանով, Նարեկացիով, Կոմիդասով, Անդրանիկ գորավարով և ավարդած մեր մյուս մեծերով։

Սիրելի՝ սաներ. անունները, որ թվարկվեցին այսպես՝ Երևանի պետքական համալսարանի ռեկտոր, Բժշկական համալսարանի ռեկտոր, Կոմիդասի անվան երաժշտականոցի ռեկտոր և մյուսներ, այժմ նսդրած են այսպես, և դուք բախսրավորությունն ունեք նրանց գիտենելու։ Նրանց կերպարով այսպես քաջն Վարդանն է նսդրած, Անդրանիկ գորավարը, Նրանդ Մաթևոսյանն է նսդրած։ Նրանց միջոցով է ձեզ փոխանցվում Հայրենիքի սերն ու գորովը։ Դուք պետք է կարողանաք նախանձախնդրության յուրացնել գիտելիքները, որ մարդուցում են ձեզ՝ ձեր մանկավարժների կողմից, որպեսզի դառնաք մեր ժողովրդի արժանավոր զավակներ։

Օրինություն ձեզ։

Մյուս ուսումնական հասպարությունը, որ այցելեցին պարվիրակությունները, Կիլիկյան ճեմարանն էր։ Ուսումնական այս հասպարությունը հիմնադրվել է 1921 թվականին և գործում է ՍԴՀ կուսակցության հովանավորության ներքո։ Ճեմարանը գիտնում է Հարթ-Միսի թաղամասում և տեղակորված է արդյական հարմարություններ ունեցող երկու շենքում։ Ուսումնառությունը 12-ամյա է (երկրորդական)։ Սովորում է երկսեռ 620 աշակերդ։ Շրջանավարդներն իրավունք ունեն ընդունվելու երկրի բարձրագույն ուսումնական հասպարություններ։

Աշակերդները նույն խանդավառությամբ և սրբի անհուն բերկրանքով ընդունեցին Հայրենիքից ժամանած պարվիրակներին։ Բայց իրենց սեփական աչքերով դիմումով Հայոց Նորը, որսալով նրա ժպիտն ու հայացք՝ սաներն ապրեցին երջանկության անկրկնելի, աննկարագրելի պահեր։ Անշուշտ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը կրթական հասպարություններ նոր լիցք ու թափ կիառորդի հայապահանության ուղղությամբ այսպես կապարվող աշխարհանքներին։ Միգուցե հենց այդ նկարառումով է, որ այցի կազմակերպիչներն աշխագիտել էին, որ Վեհափառ որբան կարող է, ավելի շատ հնարավորություն ունենա շփվելու, հաղորդակցելու մարդար սերնդի հետ։

Վերջին ուսումնական հասդարպությունը, որ այցելեցին պատվիրակությունները, Զարեն Եփին ազգային ճեմարանն էր: Ուսումնական այս 12-ամյա հասդարպությունը հիմնադրվել է 1947 թվականին, գործում է Առաջնորդարանի և Հայ Նեղակոյնական Դաշնակցության հովանավորությամբ: Այժմ ճեմարանն ունի 1032 աշակերտ և շուրջ 100 ուսուցիչ: Ճեմարանը կրում է դանիական ժողովրդի մեծ դրաստիք, օրիորդ Զարեն Եփինի (1876-1934) անունը: Հայրնի է, որ նա 1903 թվականից բնակվում էր Ուրֆայում, որտեղ կազմակերպել էր հայ որբերի խնամքն ու դաստիքականությունը: 1915-1916 թթ. դժոնդակ վարիներին նա մեծ ջանքեր է թափել Ուրֆայից անցնող հայ դարագիրներին, ապա քաղաքի հայոց հերոսամարտի մասնակիցներին օգրակար լինելու համար: Եղեռնից հետո նշանակվել է Հալեպում Ազգերի լիգայի ներկայացուցիչ՝ գաղթական հայերի վեղափորնան հարցերի գծով: Տասնյակ հազարավոր հայ դարագիրներ նրան են երախտապապարու իրենց փրկության և գոյացման համար: Ի նշան երախտագիրության, ազգային իշխանությունները հագուկ որոշմամբ ճեմարանը անվանակոչել են մեծ մարդասերի ու հայասերի անունով:

Այսուհետև Առաջնորդարանում Վեհափառ Հայրապետներն ընդունեցին պետական, դիվանագիրական, կրոնական, բարեգործական, մշակութային, հասարակական և այլ կազմակերպությունների պատվասխանադրու գործիչների և պատասխանեցին նրանց հուզող հարցերին:

Նոյն ժամերին պատվիրակության անդամներն այցելեցին Հալեպի նշանավոր պատմական թերություն: Այս կատուոյցի վերաբերյալ առաջին հիշարքակությունները վերաբերում են առնվազն մ.թ.ա. XX դարին: Այն մի ահօնի, համեմապարաք բարվոր վիճակում պահպանված շինություն է, որն իշխառու է ամբողջ քաղաքի վրա: Այսպես նկարելի են խեթական, ասորեստրանյան, աքեմենյան, սելևյան, հռոմեական, բյուզանդական, արաբական, թուրքական պատմա-մշակութային շերտեր ու ճարդարապետական ոճեր: Դիանակի պահպանվել են արաբական և թուրքական ժամանակաշրջանների պատմական համայինները, ռազմական ու գնդեսական շինությունները, նկարելի են նաև քրիստոնեական պաշտամունքային առանձին կառույցների հետքեր: Ի դեպ, մ.թ.ա. 83-66 թթ. Հալեպը գրնվել է Տիգրան Բ Մեծի փերության կազմում: Թերդի շինությունների վերաբերյալ անհրաժեշտ փեղենկություններ ու բացարձություններ տվող ուղենկցողի հավաստիացումը, թե այսպես պահպանվել է Տիգրան Մեծի ինչ-որ արձանագրություն, կարծում ենք, անհավանական է, քանի նման մի արձանագրության իրողությունը գիրությանը հայտնի չէ:

Պատվիրակությունների այցելության վերջին նշանակերն էր Հալեպից 60 կմ հարավ-արևելք գտնվող Սիմեոն Սյունակյացի վանքը: Սա վաղ քրիստոնեական նշանավոր կենտրոններից է: Այսպես է գործել Սյունակեցության՝ ճգնավորական կենցաղավարության հայրնի դեմքերից Սիմեոն Սյունակյացը (390-459), որի հիշարքակը բյուզանդական Եկեղեցին դրույմ է յուրաքանչյուր դարձա սեպակերպերի 1-ին:

Ուխտագնացությունն ավարտվեց Հալեպում Հայաստանի Հանրապետության հյուպատոսարանի կազմակերպած մտերմիկ ընդունելությամբ, որին մասնակցում

էին նաև համայնքային կրթական, կրոնական, մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչները։ Անհրաժեշտ է նշել, որ ոխտագնացության ամբողջ երեք օրերի ընթացքում ոխտավորների պատվիրակությունը միշտ զգաց Սիրիայում Հայաստանի դեսպան Լևոն Սարգսյանի և Հայեառում Շ զինավոր հյուպատոս Արեգ Շովիաննիսյանի հոգագործությունն ու պարրասպակամությունը։ Նոյնպես նշելի է Քերիք թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Սուրեն արքեպիսկոպոս Գաթարոյանի անձնական մեծ պատասխանավորությունն ու ջանքերը, ինչպես նաև ազգային իշխանությունների հետևողական գործունեությունը՝ ոխտագնացությունը հավոր պատշաճի կազմակերպելու, պարվիրակությանը ընդունելու և ճանապարհելու ուղղությամբ։ Այս բոլորի, ինչպես նաև ոխտագնացության ընդհանուր գնահատականին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին անդրադարձավ «Շողակար» հեռուստասպուղիայի թղթակցի հարցերին պարասխանելիս։

Ոխտագնացությունն ավարտված է։ Այս ոխտագնացությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հավասփեց, որ մենք ցեղասպանությանը զոհ գնացածների ժառանգներն ենք։ Ներկարար մենք նաև փերն ենք նրանց Դադի և իրավունքների։

Ապրիլի 25-ի կեսօնիշերին Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Հայաստանի պարվիրակությունը վերադարձան Երևան։

- Վեհափառ Տեր, Ձեր ոխտըն ի կապար։

ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹ-ՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՎԻ ՈՒՆԵՑԱՎ
«ԳՈՆՉԱՐԱՆ ՀԱՅ ՀԻՆ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅԱՆ»
ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկադրվության համակարգ, 2 ապրիլի 2001

10

թ.՝
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ և հովանական բարերարներ տեր և դիմիկն Վարուժան և Անծել Գևորգիների մեկնասարչյամբ վերջին «Հայագիրակ» երաժշտականությունը լույս է ընծայել «Գանձարան հայ հին բանասիրեղության» գիրքը՝ նվիրված քրիստոնեությունը Հայաստանում պետրական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանին:

Ասու պատճեն կիրակ է շաբաթ:

Գյաօր Շայլի Գլուխ Հ. Հշկառական գրքը՝ Եղիշե Ա. Վահագին և միջնադարյան բանասփեղծության գրքում ներկայացված է հայ հենագույն և միջնադարյան բանասփեղծության ընդունակին՝ Պողոս Խաչարյանի աշխատաժիրությամբ, որին իր մասնակցությունն է բերել նաև Վարդան Դերիկյանը: Նյութի ընգրկման առումով գիրքն ամենահարուստն է ցայսօր եղած նմանափիպ երաժարակությունների մեջ: Նախամաշփոցյան շրջանի բանահյուսությունից մինչև Սայաթ-Նովլա ձգվող հայ բանասփեղծությամ շարքում նշանակալի դեռ է հապկացված նաև հոգևոր եկեղեցական քնարերգությանը:

Գրի հրապարակմամբ ազդարարվում է «Գիր» մաքենաշարի ծնունդը, որի հրապարակչական խորհրդի նախագահ Հրանդ Մաթևոսյանն իր երախտագիտությունը հայդնեց Վեհափառ Նայրապետին՝ «պաշտելի ու երկրպագելի» ժողովածուի հովանակորության համար: Իր երախտագիտությունը հայդնեց նաև մեծավասրակ գիտնական Պողոս Խաչարյանը:

Երեկոյի ավարտին Նորին Սրբությունը իր գնահատանքն ու օրինությունը դվեց Դ. Խաչագրյանին և բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունն են ունեցել արժե-քավոր երարշարակության լույսննայմանը:

Ժողովածուն փայտպղել է 1000 օրինակ փայտքանակով, որի ոսկերիզ օրինակ-ները գրի հրապարակից Ալբերդ Խոյանը նվիրեց Նորին Սրբությանն ու Հրանու Մաթևոսուանին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկադպրության համակարգ, 8 ապրիլի 2001
թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի ազգային պաշտպանության նախարար Միքայ Պասկովի գլխավորած պարվիրակությանը:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերի այցը հայ ժողովրդի 1700-ամյա հոգևոր կենդրուն, իր գոհունակությունը հայտնեց հայ և ռումին եղբայրական ժողովուրդների շարունակող բարեկամության համար, որի արմադրները ձգվում են դեպի դարերի խորքը:

Շուրջ կես դարի առաջ Նորին Սրբությունը, իրեն Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր անդրանիկ այցը կատարեց Ռումին Օրթոդոքս Եկեղեցու պետ Թեոլիփիսպ Պապրիարքին: Այդ ընթացքում Ռումինիայի նախագահ Էմիլ Կոնսպանփիննավուն Ամենայն Հայոց Հայրապետին հանձնեց Ռումինիայի ազգային բարձրագույն պարգևը՝ «Ռումինիայի աստր» շքանշանը, ինչը Նորին Սրբությունը նկատեց իրեն ռումինահայ համայնքի նկարմամբ Ռումինիայի իշխանությունների սիրո և գնահատանքի արդահայրություն: Այս դարի, Հայաստանում քրիստոնեությունը պերական կրոն հոչակման 1700-ամյակի գրնակադրության օրերին, սպասվում է նաև Թեոլիփիսպ Պապրիարքի այցը Հայաստան:

Զրույի ընթացքում կարևորվեց Եկեղեցու համագործակցությունը երկրի պաշտպանությունն ապահովող այնպիսի կարևորագույն կառույցի հետ, ինչպիսին բանակն է: Այս առիթով գոհունակությամբ նշվեց, որ և՛ Ռումինիայի, և՛ Հայաստանի բանակներում իրենց ծառայությունն են մարտուցում հոգևոր սպասավորները՝ սերմանելով քրիստոնեական-բարոյական սկզբունքներ և զորացնելով զինծառայողների ազգային-քրիստոնեական ոգին:

Խորապես դպրական պատրիարքական ապահովությունը պահպանությունը և քրիստոնեական ավանդույթներով հյուրերն իրենց հիացմունքն ու հարգանքն արդահայրեցին հայ ժողովրդի պարմության և քրիստոնեական անխախտ ոգու նկարմամբ:

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԽՈՐՎՊԵՍ
ՑԱՎԱԿՑՈՒՄ Է ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶՈՇՎԱԾ
ԲԱՆՎՈՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ**

Մայր Ալռո Ս. Էջմիածին, Տեղեկադպության համակարգ, 10 ապրիլի 2001

թ.:

Երեկ, ապրիլի 9-ին, Մայր Ալռո Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավով դժողովացավ ապրիլի 8-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությունում դժողի ունեցած դժբախս պարահարի մասին, որի հետքանօքով զոհվել է երիտրասարդ մի բանվոր:

Կարպարվածի առիթով նույն օրը Նորին Սրբությունը Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ Վոդ. Խաչապրյանի միջոցով իր խորին վշտակցությունը փոխանցեց ողբացյալ ընդունիքին ու նրա զավակներին, որոնք այսուհետ կզբնվեն Ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի բարեխնամ հոգածության ներքո:

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՅ
ՀԱՄԱՎԱՅՐԱԿԱՎՆ ԽԱՂԵՐԻ ԿՈՄԻՏԵՒ
ԱՆԴԱՍՄՆԵՐԻՆ**

Մայր Ալռո Ս. Էջմիածին, Տեղեկադպության համակարգ, 10 ապրիլի 2001

թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի անդամներին՝ կոմիտեի նախագահ Աշոտ Մելիք-Շահնազարյանի զվարարությամբ:

Նորին Սրբությունը իր զնահարաբեկ ու օրինությունը գվեց Համահայկական խաղերի կազմակերպիչներին, որոնց նախաձեռնությամբ այս դարի օգոստոսի 18-26-ը Հայաստանում վենի կունենան երկրորդ համահայկական խաղերը՝ աշխարհի ավելի քան 30 երկների շուրջ 3000 երիտրասարդ մարզիկների մասնակցությամբ:

Վեհափառ Հայրապետը մարզական այս միջոցառումը համարեց գովելի մի ձեռնարկ՝ նշելով, որ այդ ճանապարհով լավագույնս է իրականացվում Հայաստան-Ադրբեյջան մերձեցման կարևոր առաքելությունը:

Վերիշելով երկու դարի առաջ հաջողությամբ դեղի ունեցած առաջին համահայկական խաղերը՝ Վեհափառ Հայրապետը համոզմունք հայրնեց, որ 1700-ամյա հորելյանական դարում դրանք առավել լայն արձագանք և ընդգրկում կունենան՝ նոր ոգի և խանդավառություն հաղորդելով հայ երիտասարդներին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱՌՈՂԻԿՈՄՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԷՍՏՈՆԻԱՅԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկադրվության համակարգ, 13 ապրիլի 2001
թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Էսպոնի-
այի ԱԳ նախարար Թոմաս Նենդրիկ Իլվեսի գլխավորած պարվիրակությանը:

Ողջունելով հյուրերին, Հայոց Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցու հորելյանա-
կան դարում առանձնակի ուրախություն է բռնոր բարեկամ երկրների և ժողովորդնե-
րի ներկայացուցիչների այցելության ընդունումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Նորին Սրբությունը գրեսնակությամբ նշեց հետիւրերդային շրջանում հայ և էս-
պոնացի երկու ժողովորդների շարունակվող բարեկամությունը և իր մասնավոր
գնահատանքը հայրնեց Էսպոնիայի իշխանություններին՝ Էսպոնահայ համայնքի
նկարմամբ ունեցած հոգագործ վերաբերմունքի համար: Վերջինիս վկայությունն է
այն, որ, շնորհիկ էսպոնական կառավարության, էսպոնահայ համայնքը կունենա
նաև իր Եկեղեցին:

Զրոյցի ընթացքում Նորին Սրբությունը անդրադարձավ Հայաստանում քրիստո-
նությունը պետական կրոն հոչակման 1700-ամյակին նվիրված հորելյանական մի-
ջոցառումներին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԶՈՐԱՆԱՆՔ ՀԱՎԱՏՈՎ ԵՎ ԶՈՐԱՑՆԵՆՔ ԱՇԽԱՐԴԱՍՓՅՈՒՌ ԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ ԿՅԱՆՔԸ»

ՔՐԻՍՏՈՆԵԱՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՇԱՓԱՌ ՏՈՆԸ Ս. ԷՇՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Արքուն Ս. Էշմիածին, Տեղեկարկության համակարգ, 15 ապրիլի 2001

թ.:

Այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և ողջ քրիստոնյա աշխարհը նշեց Հիսուսի Նարության հրաշափառ փոնք՝ Սուրբ Զարդիկը:

Առավոտյան Նորին Սուրբ Օծություն S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Հրաշափառ»-ով և շարականների երգեցողությամբ մեծահանդես թափորի ուղեկցությամբ ուղղվեց դեպի Ս. Էշմիածին Մայր Տաճար՝ մարուցելու զավկական Ս. Պատրարք և Միաձնաւոց Մայր Աթոռից Հիսուսի Նարության ավելիտսով Հայրապետական իր պալգամը հղելու համայն հայությանը:

Ամիսների վերանորոգումից հետո 1700-ամյա Մայր Տաճարը իր նորոգ հանդերձանքով առավել շքեղ է ներկայանում հավաքավոր հոգին: 18-րդ դարում արված Նաղաշ Ռովնաթանի նրբակյուս որմնանկարները ժամանակակից նկարիչների մանրակըրկիւր աշխարհանքից հետո վերագրել են իրենց անհրկնելի գունագեղությունը և առավել պայծառ ու փոնական դարձրել Մայր Եկեղեցին: Հայրնություն են նաև վերանորոգման ընթացքում Տաճարի պարին հայրնաբերված վեց հնարույր խաչքարերը:

«Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի, քանզի այսօր քո լույս խորաններից շնորհն է բաշխվում Նարության և կյանքի:

Զվարճացիր, Եկեղեցի Հայաստանյայց, այսօր բացվել են երկնքի դրները, և Հարուցյալ Փրկչի սիրառապ հայացքն է ուղղված Ձեզ, որ փոնախմբում ես հայոց պետության՝ ի Քրիստոս մկրտության 1700-ամյան», - հընթացս սրբազն արարողության Վեհական Հայրապետը Նարության խորհրդով ու Հայոց մեծ դարձի 1700-ամյակի փոնական օգով իր ողջունը, օրինությունն ու շնորհապորանքը հղեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալներին, ողջ հոգևոր դասին, Հայաստանի Հանրապետության ավագանուն և համայն հայությանը:

«Այսօր, երբ 2001 թվականի հորեւյանազարդ դարին փառապասկ թագաղրվում է Նարության շնորհանորոգ խորհրդով, Միաձնի Էջքի Սուրբ Սեղանի առջև աղոթարար հղով, հանուն աշխարհասիյուտ մեր ժողովրդի աներկրա վկայում ենք. Տեր,

մենք պահեցինք մեր հավատարմությունը Քեզ, դրա գործացանք, բայց չուրացանք, նույնիսկ երբ մահվան ու չարիքի դեմ հանդիման թվում էր, թե մոռացել ես մեզ», - հայ ժողովրդի հավատարմություն առ Ասրբած հասպափեց Հայոց Հայրապետով՝ հորդորելով, որ «Հայոց Դարձի 1700-ամյակի խորհրդով լնցուն՝ հավաքով խոսրովանենք մեր պատրիանելությունը Ասրբածակառոյց Հայ Եկեղեցուն, որպեսզի այն, զորավոր մեր հավատարմությամբ, շարունակի առաջնորդել համազգային մեր երթը դեպի Ասրբած: Զորանանք հավաքով և զորացնենք աշխարհասկյուռ ազգային մեր կյանքը»:

Պատրարագի սրբազն արարողությանը ներկա էին Ռ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչարյանը, Ռ վարչապետ Վեդրանիկ Մարգարյանը, Ազգային ժողովի պարզամավորներ, նախարարներ, Հայագագառում հավատարմագրված դիվանագետներ, Հայասրանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, արվեստի և մշակույթի գործիչներ, բազմաթիվ հավատացյալներ:

Սրբազն արարողության ողջ ընթացքը ուղիղ եթերով հեռարձակվում էր Հայասրանի Հանրապետության Հանրային հեռուստափափետությամբ:

Սուրբ Պատրարագի ավարտից հետո Վեհարանի հանդիսությունների սրահում փեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում ամենքին վերսպին դրվեց ավետիսը Քրիստոսի Հրաշակառ Հարության:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՄ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկարկության համակարգ, 19 ապրիլի 2001
թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր դիմորինությամբ նոր թեմակալ առաջնորդներ են նշանակվել Հայասրանյաց Առաքելական Եկեղեց երեք թեմերում:

Հայրապետական դիմորինությամբ Գերշ. Տ. Գրիգորիս արքեպոս Բունիածյանը նշանակվել է Հայասրանյաց Առաքելական Եկեղեցու Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ:

Նորին Սրբության նույն դիմորինությամբ Նոր Նախիջևանի և Ռուսասարանի հայոց թեմի առաջնորդի պաշտոնակարգը, Ռոգ. Տ. Եղրաս Վարդապետ Ներսիսյանը նշանակվել է Նոր Նախիջևանի և Ռուսասարանի հայոց թեմի առաջնորդ և Մոսկվայի ու Համայն Ռուսիայի Պատրիարքությունում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ:

Հարավային Ռուսասփրանի հայոց թեմի առաջնորդական գեղապահ, Հոգէ. Տ. Սովոսի վրդ. Մովսիսյանը Ամենայն Հայոց Հայրապետի գնորդինությամբ ծառայության է կոչվել նույն թեմում՝ որպես առաջնորդ:

ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՑ ՄՈՍԿՎԱ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկադրվության համակարգ, 21 ապրիլի 2001

թ.:

Այսօր, առավորյան, Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մովսիսյանը և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի հետ նախագահելու հաջորդ օրը Կրեմլի մեծ դահլիճում կայանալիք Հիսոս Քրիստոսի Հարության երաշափառ գործիքն և քրիստոնեությունը Հայասպանում պետքական կրոն հոչակման 1700-ամյակին նվիրված հանդիսությանը: Վեհափառ Հայրապետին Մովսիս ուղակցության հայասպանի և արքեպիսկոպոսի թեմակալ առաջնորդներ:

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ԴԵՐ ԶՈՐԻ Ս. ՆԱՇԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՊԱՏԱՐԱԳԵԼՈՒ Է ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկադրվության համակարգ, 23 ապրիլի 2001

թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, վերադառնալով Մովսիսյաց, ուխտի մեկնեց Դեր Զոր:

Գարեգին Բ Կաթողիկոսը Ամենայն Հայոց առաջին Հայրապետն է, որ մեկնում է 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի այս սրբավայր՝ ծնրադրելու բյուրավոր նահապակների հիշատակի առջև:

Դեր Զորում հազարավոր հայերի նահապակության այս վայրում, կառուցված է Ս. Նահապակաց եկեղեցին, որին ապրիլի 24-ին՝ Ձեղասպանության զոհերի հիշատակի օրը, Հայոց Հայրապետը կմարտուի Ս. Պատրարք և Մեծի Տաճի Կիլիկիոն

Արամ Ա Վեհափառի հետ աղոթք կբարձրացնի առ Աստված՝ ոգևոշելու համար 1915 թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշաբակը:

Մեկնումից առաջ Նորին Սրբությունը աղոթքի կոչեց ողջ հայությանը, որոնք, իրենց հոգիներում ծրարած ունենալով բյուր նահապակների երազները, կերպում են անկախ պետականություն և զորեղ գալիք:

«Այս, ինչ այսօր մենք դալիս մեր հայրենիքին, ավելի թանկ չէ, քան բյուրավոր նահապակների կյանքերը: Մեր այս ուղևորությամբ կամրջվում են Հեր Զորը և Ծիծեռնակարերդը, միախառնվում են հայ ժողովրդի աղոթքները՝ ի Հայաստան և ի այլուստ աշխարհի», - ասաց Նորին Սրբությունը:

Վեհափառ Հայրապետի ուխտագնացությունը Դեր Զոր նվիրվում է 1700-ամյա մեծ հորեւյանին: Նորին Սրբությանը ուղեկցում է մեծարիկ շքախումբ, որի մեջ ընդգրկված են բարձրասրբիճան հոգևորականներ, պետական պաշտոնադար անձինք, արվեստի և մշակույթի գործիչներ:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ կվերադառնա ապրիլի 25-ին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿՈԼԵԿՏԻՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԴԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկադրվության համակարգ, 27 ապրիլի 2001
թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի անդամ պետությունների Անվտանգության խորհրդի քարտուղարների հանձնաժողովի երևանյան նիստի մասնակիցներին:

Նորին Սրբությունը, ողջունելով եյուրերին, գոեւնակությամբ անդրադապակ անվտանգության և խաղաղության պահպանման նպատակով դարբեր պետությունների միջև գոյություն ունեցող փոխհամագործակցությանը, ինչի շնորհիվ առավել հեշտությամբ կարելի է հաղթահարել ցանկացած ներազգային ու ներպետական խնդիր:

Հանդիպման ընթացքում ՀՀ նախագահին առներել Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Սերժ Սարգսյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց երևանյան նիստի նպատակներն ու արդյունքները: Այս Ամենայն Հայոց Հայրա-

պեսք հյուրերի խնդրանքով պարասխանեց նրանց բազմաթիվը հարցերին՝ մանրամասնորեն անդրադառնալով Հայ Եկեղեցու էկումենիկ և միջկրոնական հարաբերություններին, կաթոլիկ և ողջափառ Եկեղեցիների հետ դավանարանական դարբերություններին, ինչպես նաև Հայ Եկեղեցում պարմականորեն ծեսվորված նվիրապետական Վթօռներին:

Վեհափառ Հայրապետը կարևորեց Հայ Եկեղեցու եղայրական հարաբերությունները քոյր Եկեղեցիների հետ, ինչպես նաև այլ կրոնների հետ գարվող երկխոսությունը՝ մարտնանշելով այն պարմական փասքը, որ հայկական համայնքները համեմաշխորեն գոյագենում են այլադական և այլակրոն բազմաթիվ երկրներում։ Հյուրերը չափազանց կարևոր նկատեցին դարաբաղյան հակամարդության դարիների ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետին և Աղքեցանի հոգևոր իշխանությունների միջև Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետ Ակերսի Բ Պատրիարքի միջնորդությամբ շարունակվող երկխոսությունը՝ հանուն հիմնահարցի խաղաղ կարգավորման և խաղաղության հասպարման։

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը իր մբահոգությունը հայտնեց նաև Հայաստան ներթափանցած բազմաթիվ աղանդների առնցությամբ, որոնք, որևէ աղեքս չունենալով ժողովրդի ավանդույթների և պարմության հետ, պառակտում են առաջացնում ժողովրդի ներսում, խարիսում ազգային անվտանգության հիմքերը։

Հանդիպման մասնակիցների թվում էին ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Վահիմիր Ռուշայլոն, Հայաստանում ՌԴ արդակարգ և լիազոր դեսպան Անապոլի Դրյուկովը։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկադրվության համակարգ, 28 ապրիլի 2001 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Սիրիայի Արքական Հանրապետության արքակարգ և լիազոր դեսպան Համեդ Հասանին։

Հանդիպման ընթացքում խոսվեց Ամենայն Հայոց Հայրապետի՝ Դեր Զոր կարգած ուստագմացության մասին։

«Մենք խորապես միշտարված ենք, որ առիթ ունեցանք ուխտի մեկնել Դեր Զոր և աղոթք բարձրացնել 1,5 մլն հայ նահապակների համար», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը, այցի վերաբերյալ իր փապավորությունները պատմելով, նշեց այն ջերմ ընդունելության մասին, որ ցուցաբերել էին Հալեայի հոգևոր ու աշխարհիկ իշխանությունները, Հալեայի ողջ ժողովուրդը: Վեհափառ Հայրապետը նշեց նաև, որ մեծապես փապավորված է սիրիակայ համայնքի առանձնաշնորհ դիրքով, ինչը երկու ժողովուրդների ամուր բարեկամության արգասիքն է:



ԱՎԱԳ ՇԱԲԱՁ-Լ ՄԱՅՐ ԱԹ-ՈՌ-ՈՒՄ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տարվա օրերը բաժանվում են երեք մասի՝ պրոռ, սրբոց օրեր և պահոց օրեր: Տարվա գրեթե կեսը պահը է՝ բաժանված օրա-պահքերի, շաբաթապահքերի և քառասորդական ու Մեծի պահոց շրջանի: Մեծ պահքին անմիջապես հաջորդում է Ավագ շաբաթը կամ, ինչպես երեմն անվանում են՝ Զարչարանաց շաբաթը:

Քրիստոսի երկրավոր կյանքի վերջին շաբաթը եկեղեցական կյանքում սրացել է «Ավագ շաբաթ» անվանումը, որովհետո այն իր մեջ ներառում է մեր Փրկչի երկրավոր կյանքի ամենասրբազրավ ու հոգականությամբ լեցուն պահերը: «Ավագ են կոչվում նաև այս շաբաթվա բոլոր օրերը, այն է՝ Ծաղկազարդից մինչև Զարդիկ ընկած ամեն մի օր: Զարչարանաց շաբաթ է կոչվում, որովհետո մեր Տեր Դիսոս Քրիստոս կամավոր չարչարանքներ և մաս կրեց մարդկության փրկության համար. «Գառն Աստուծոյ, որ բատնայ զմենու աշխարհի»»:

Եկեղեցական հայութը դարերի ընթացքում գեղեցկացրել, հարսդացրել ու առավել արդարացնել հիմասիր են հաղորդել այս շաբաթվա արարողություններին:

Թեև Ծաղկազարդը ներառված չէ Ավագ շաբաթվա մեջ, բայց լիովին ներդաշնակում է Ավագ շաբաթվա ժամանակագրական և դրամարանական շարքին:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ուրախությամբ և ցնծությամբ լցվեցին Մայր Տաճարում ներկա հավատացյալների սրբերը, երբ հնչեցին Ավելարանի հերկայալ լոռերը. «Օրինեալ, որ գայ յանուն Տեառն. օրինութիւն ի բարձուն»:

Առավորյան ժամերգության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսի գիշավորությամբ կափարվեց Անդասսպանի արարողություն, որի ընթացքում օրինվեցին աշխարհի չորս կողմերը, ապա հավարացյալներին և միաբաններին բաժանվեցին Քրիստոսի հաղթական մուգքը Երուսաղեմ խորհրդանշող ուտենու ոսկերը:

Այնուհետև Մայր Տաճարում մաքրուցվեց Սուրբ և անմահ Պատրիարք: Հավարդ Ա. Պատրիարքի կափարվեց մանուկների օրինության կարգ, և մանուկներին բաժանվեցին օրինված խաչեր:

Երեկոյան կափարվեց «Դռնբացեր»-ի արարողությունը, որն ամբողջությամբ պարկերավոր վերարկադրությունն է Վերջին Դադասփանի, որի իրական լինելն ավելի է կարևորվում արարողության հուզականությամբ լեցուն երկխոսություններով:

Երիցո թախանձագին հնջում է «Բա՛ց մեզ, Տէր, դուքն ողորմութեան» մեղեղին՝ արդահայդելով ամեն մի հավաքացյալի սրբի բաղձանքը: Եվ, վերջապես, երկար սպասումից հետո «Զողորմութեան քո դուքն բաց մեզ, Տէր» շարականի երգեցողության ժամանակ բացվում է Ս. Սեղանի վարագույրը:

ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Առավորյան ժամերգության ընթացքում Մարդենոսի Ավելիարանից ընթերցվում է անպատճ թզենու առակը:

Այնուհետև երեկոյան ժամերգության ընթացքում, Ծննդոց, Սողոմոնի Առակաց գրքերի և Եսայու մարգարենության համապատասխան հարվածների ընթերցումից հետո, կարդացվում է ավելարանական այն դրվագը, որին Դիսուս մարգարենում է զայիք դեպքերի մասին. «Ահավասիկ Երուսաղեմ ենք բարձրանում, և Մարդու Որդին պիտի մատնվի քահանայապետերի ու օրենսդեփերի ձեռքը, և նրան մահկան պիտի դադապարտեն ու պիտի հանձննն հեթանոսներին ծաղրվելու, ծեծվելու, խաչը բարձրացվելու համար, սակայն նա երրորդ օրը հարություն պիտի առնի» (Մարդ. Ի 18-19):

ԱՎԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ավագ երեքաբթին իր մեջ ամփոփում է Անեղ Դադասփանի խորեուրդը, որը սովորեցնում է մեզ արքնություն և բարեգործություն, և այս նպավակով ընթերցվում է քանրարաթաքույց ծառայի առակը: Առավորյան ընթերցված Ավելիարանից գիւնում ենք, թե ինչպես փարիսեցիները և հերովդեսականները փորձում են Աստվածորդուն, որպեսզի իշխանությունների ձեռքը մաքնեն, իսկ նա խմաբությամբ պատրախանում է նրանց և ասում. «Գնացե՛ք, դպի՛ք կայսրինք՝ կայսեր, և Աստծունք՝ Աստծուն»:

Երեկոյան ժամերգության ժամանակ ընթերցվում է դասը կույսերի առակը, որի ընթացքում, ըստ Մայրավանքի ավանդության, դասը կույսերի փոխարեն դասը ճե-

մարանական սաներ մեկական մոմ ձեռքներին կանգնում են ապյանում: Եթե ընթերցվում է Ավելարանի համապատասխան հարվածը, լուսարարապետը մարում է սաներից հինգի մոմերը՝ թողնելով, որ վառվի վյուս հինգինը: Այս դասը մոմերը խորհրդանշում են իմաստուն և հիմար կույսերին: Ավելարանի վերջում արթնության կոչ է արվում ներկա հավաքացյալներին. «Արթուն կացեք, որովհետք չգիտեք ոչ օքը, և ոչ էլ ժամը»:

ԱՎԱԳ ՉՈՐԵ-ՔՇԱԲԹԻ

Ավագ չորեքշաբթին հիշապակն է մեղավոր կոնց կողմից Հիսուսի ուրբենքը յուղով օծվելու, որը տեղի ունեցավ Քեթանիայում՝ կանխանշելով Հիսուսի թաղվելը և Հուդայի մարմնությունը, ուստի մեր Եկեղեցում, որպես սգր նշան, բացառությամբ հինանց շրջանի, յուրաքանչյուր չորեքշաբթի պահոց օր՝ է ի հիշապակ Հիսուսի մարմնության:

ԱՎԱԳ ՇԻՆԳՇԱԲԹԻ

Այսօր հիշապակն է Վերնադանը կապարված վերջին և խորերդավոր ընթրիքի, որի ժամանակ մեր Տեր Հիսուս Քրիստոս հասպագեց հաղորդության փրկարար խորհուրդը և սկիզբը դրեց Նոր Օւխովի: «Եվ մինչ նրանք դեռ ուսումնական էին, Հիսուս հացը վերցրեց, օրինեց ու կպրեց և տվեց աշակերդներին՝ ասելով. «Անք, կերեք, այս է իմ մարմինը»: Եվ բաժակը վերցնելով՝ գոհություն հայդնեց, տվեց նրանց ու ասաց. «Խնմեցեք դրանից բռնորդ, որովհենք այդ է Նոր Օւխորի իմ արյունը, որ թափվում է շաղերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մաթթ. հօ 26-28): Քրիստոս մեզ մարդուցեց իր սուրբ մարմինն ու արյունը, որով մարդկությանը հնարավորություն ընձեռնվեց Քրիստոսով փրկության: Եթե նախորդ երեք օրերին ճաշու ժամերգության ժամանակ ասվում են երեք «Ողորմեա»-ները, ապա Ավագ հինգշաբթի առավուտյան ժամերգության վերջում կապարվում է «Ապաշխարողների արձակման» կարգը: Ընթերցվում են մարգարեական գրքեր, առաքելական թղթեր, Ավելարան, որից հետո ավագագոյն հոգևորականը կարդում է ապաշխարության մասին Բարսեղ Կենսարացու աղոթքը՝ ասելով, թե այս խորերդին «մի նայեք որպես թե հացի և գինու, քանզի սա է Ասկծո Արդու ճշմարիք Մարմինն ու Արյունը»:

Երեկոյան կապարվում է Ութիվայի արարողությունը, ըստ Քրիստոսի պատվիրանի. «Գիտե՞ք, թե այդ ինչ արեցի ձեզ: Դուք ինձ Վարդապետ և Տեր եք կոչում. և լավ եք անում, քանի որ իսկապես եմ. իսկ արդ, եթե ես՝ Տերս և Վարդապետս, լվացի ձեր ուղբերը, դուք էլ պարպավոր եք միմյանց ուղբերը լվա-

նաև, որովհետք մի օրինակ դվեցի ձեզ, որ ինչպես ձեզ արեցի, դուք էլ նույն ձևով անեք» (Նով. ԾԳ 12-15): Քրիստոսի օրինակով Գարեգին Բ Հայրապետը սրբիզ կապեց մեջքին և լվաց գասներկու սաների ողքերը՝ խոնարհության և սիրո օրինակ հանդիսանալով համայն հավաքացյալ ժողովրդի համար: Հավաքացյալ-ները մեկ անգամ ևս Վերապետեցին Քրիստոսի խոնարհությամբ ու ծառայասիրությամբ շաղախված ավելացրանական դրվագը: Այն խորհրդավոր մի քարոզ է խոնարհության, հեղության և սիրո՝ ուղղված ընկերոջը, դիմացինին:

ԱՎԱԳ ՈՒՐԲԱՁ

Ինչպես Ավագ ցորեքշաբթին, իր մեջ կրելով Տիրոջ մատնության խորհուրդը, հոչակվեց պահոց օր, այնպես էլ Ավագ ուրբաթը հիշաբակությունն է Տիրոջ չարչարանաց և խաչելության, քանի որ եկեղեցական օրը սկսվում է երեկոյան ժամերգությունից հետո, հետևաբար Ավագ ուրբաթի Նույնան արարողությունը կապարվում է Ավագ հինգշաբթի երեկոյան ժամերգությունից հետո:

Նույնան արարողությունը սկսվեց գիշերային ժամերգությամբ, միաբանները ընթերցեցին Հուդայի մատնության, Տիրոջ չարչարանքների, Պետրոսի ուրացման, Պիղապոսի հանցավոր թուլակամության, երեա քահանայապետերի և ամբոխի մոլեգին զրապարփության պատմությունը պարունակող վեց ավելացրանական հավածներ, որոնցից յուրաքանչյուրի ընթերցումից հետո մարում էին երկու մոմ. գրեթե բոլորի համար պարզ է, որ սև մոմը խորհրդանշում է մատնիչ Հուդային, իսկ մեծ մոմը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որը լուսավորեց մարդկային խավարն անգիրության: Առավորյան ժամերգության «Տեր յերկնից» շարականից հետո հանգցվեցին Մայր Տաճարի բոլոր լուսերը, ապա «Փառք ի բարձուն» օրիներգի վերջում, երբ երգում են «Ծագեա ողորմութիւնս քո», Մայր գրածարը կրկին լուսավորվեց: Շավարդ արարողության միաբանները ափյանում միասին երգեցին «Խաչի քո Քրիստոս» շարականը:

Ավագ ուրբաթ օրը գիշերային և առավորյան ժամերգություններ չեն կապարվում, որովհետք արդեն երեկոյան հուման արարողության ժամանակ այդ ժամերգությունները կապարվել են, այլ կապարվում է ճաշու ժամերգություն, ապա կապարվում է Տիրոջ խաչելության կարգը: Միաբանները հաջորդաբար ընթերցեցին ավելացրանից հավածներ Քրիստոսի մահվան դադավճոի, Պիղապոսի մոտ դարձելու և այլ դիմքերի մասին:

Ավագ ուրբաթ «Պատրարագ չի մարդուցվում, որովհետք հավիքենական քահանայապեր Քրիստոս ինքն է իրեն պատրարազում խաչի վրա Նայր Աստծուն, և ինքն է միջնորդ, բարեխոս առ Նայր Աստված՝ մեր փրկության համար:

Երեկոյան հոգևորականների և հավաքացյալների ներկայությամբ կապարվեց Քրիստոսի թաղման խորհրդանշական արարողությունը: «Պարզեւարուն ամեննեցուն» շարականի երգեցողության ներքո Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը, երիմներանց ծաղիկներով և եղևնու ճյուղերով զարդարված, միաբանության և ուսանողության երգած շարականի հնչյունների ներքո մի պիույլ գործեց Սայր Տաճարի շուրջ, ապա կրկին դրվեց Սուրբ Սեղանի առջև: Երգեց «Խաչի քո, Քրիստոս» շարականը, և արարողությունը եզրափակվեց «Պահպանիչ»-ով:

ԱՎԱԳ ՇԱԲԱՁ

Ավագ շաբաթը Մեծ Պահքի վերջին օրն է: Երեկոյան ժամերգությունից հետո կապարվում է ճրագալույցի Ս. Պատրարք: Մեր Եկեղեցում գրավա մեջ միայն երկու անգամ է կապարվում ճրագալույցի Պատրարք՝ առաջինը Ս. Ծննդյան նախօրեին և երկրորդը՝ Ս. Կարության Ավագ շաբաթ օրը:

Երեկոյան ժամերգության ընթացքում, Սուրբքոյային հարվածները կարդալուց հետո, ընթերցվեց Դանիելի թուղթը, և սարկավագի «Օրթի»-ով բացվեց Վարագույրը: Սկսվեց Պատրարքը: Պատրարքի ժամանակ հավաքացյալ ժողովրդին պրվում է աշխարհացունց ավելիքիս. «Քրիստոս յարեա ի մեռելոց»: Հավարկ Պատրարքի հարության լույսով լցված միաբանական թափորը, «Այսօր յարեա ի մեռելոց» շարականի երգեցողության ներքո, շարժվեց դեպի Վեհարան՝ «Տնօրինների» կարգ կարարելու, որի ավարտին սեղանադանը պրվեց խթման ընթրիք:

Ս. ԶԱՏԻԿ ԿԱՍՄ Ս. ԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Անցան թախծալի ու մոայլ օրերը, Քրիստոս չարչարվեց, խաչվեց, թաղվեց, բայց հարություն արագ. «Մահվամբ մահը հաղթեց և իր հարությամբ մեզ կյանք պարգևեց»:

Վեհափառ Հայրապետը հանդիսավոր Ս. Պատրարք մարդուցեց ու հաղորդությամբ մնութերի թողություն դվից հավաքացյալ ժողովրդին: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետն իր Զարդարական պատրամբ դվից ժողովրդին: Կրկին հնչեց հարության կենսապարզն ավելիքիսը, մեկ անգամ ևս Հայ ժողովուրդը գորացավ Քրիստոսի հարությամբ:

ՀԱՂՄՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2001թ. մարտի 10-ին գեղի ունեցավ Քեհի հայ համայնքի փարեկան ընդհանուր ժողովն ու վարչության նոր ընդունությունը: Վարչությունն ընդրվեց հերկոյալ կազմով.

Ղազարոս Կյուլերյան

Նշան Քուշճու

Նշան Բարլար

Քաջաման-Խաչիկ Բարլար

Ժագլին Քուշճու

Սահմեն-Սաթենիկ Չոլաքյան

Իսրենփեր-Սիմոն Նալգանը

Ազենապէսք

Փոխապենապէսք

Գանձապահ

Փոխանձապահ

Ազենադայիր

Փոխապենադայիր

Գործակադար

Այս փարի լրանում է Գերմանիայի հայոց առաջնորդության հիմնադրության 10-րդ փարենարձը: Այս առթիվ Քյոլնի U. Սահակ-Մեսրոպ առաջնորդանիսք եկեղեցուն կազմակերպվեց հանդիսավոր արարողություն «Սերենադ» սենեկային նվազախմբի բացառիկ համերգով և նկարչական ցուցահանդեսով: Բացման խոսք սասաց Ալբերտ Սևիչը: «Ամերգի երկրորդ՝ առաջնորդարանի մշակութային հանձնախմբի պարագային մասում հնչեցին Կոմիքսահ և Էդ. Միրզյանի սկեղծագործությունները: Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ, Գերշ. S. Գարեգին արքեպոս. Բեքչյանը սրբանց շնորհավորեց երաժիշտներին:

Մինչև մարտի 31-ը բաց վարչական ցուցահանդեսում ներկայացված էին հայունների հինգ նկարիչների 40 գրաֆիկ աշխատանքներ:

2001 թ. մարտի 18-ին Զալախի հայ փանը գեղի ունեցավ Բաղեն Վյուրթեմբերգի հայ համանքի փարեկան ընդհանուր ժողովը, որ ընդրվեցին թեմական պարզամանական ժողովի երեք անդամներ (Խաչիկ Փիլիպոսյան, Կարո Կարապետյան և Նվարդ Կարապետյան): Խակ չորրորդ պարզամանակորն է ի պաշտոն վարչության ապենապէսք Նակոր Ավետիքյանը:

2001 թ. մարտի 31-ի և ապրիլի 2-ի միջևն Գերմանիայի հայ համայնքներում դասախոսություններով հանդես եկավ պուսահայ հայրնի գրող և «Արա» հրապարակչական պարագային մասում գրագիր պատճենագիրը:

2001 թ. ապրիլի 13-ին առաջնորդարան ժամանեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երկու միաբաններ՝ S. Արշեն արքղա Սամսոյանը և S. Ավետիքս արքղա Սահակյանը, որոնք ներկա գրնվեցին և U. Պատրարքազներ մաքուցեցին Գերմանիայի թեմի եկեղեցիներում։ Նայր Սուրբերը Գերմանիայի պաշտպանության նախարարության կողմից երկու շաբաթով երավիրված էին մասնակցելու գինվորների հոգևոր կրթության դասընթացներին։

ԴՐԱՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՇԱՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Քյոլն, 17 ապրիլ 2001



ԱՊՐԻԼԻ 24

ՏԻՐԱՆ ՀՈՔՍԱԳՅՈԶՅԱՆ

«ԱԿՈՍ» ԹԵՐԹԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերջին ամիսներին թուրքիայի պետության օրակարգի գլխավոր հարցը ոչ՝ սղանը, ոչ՝ տնտեսական ճգնաժամը, ոչ՝ քրդական խնդիրը, և ոչ՝ ել մյուս խրոմիկ դարձած բազմաթիվ խնդիրներից որևէ մեկն է: Ակսած ժողովրդի առօրյա խոսակցությունից մինչև բոլոր լրատվամիջոցների միակ մտահոգությունը «իբր հայկական ցեղասպանություն»-ն է: Այսպես՝ ամեն վայրկյան ու բոլոր մակարդակներով խոսվում է հայկական ցեղասպանության մասին՝ չմոռանալով ավելացնել «իբր» բառը:

Հայկական ցեղասպանության մասին թուրքիայի պաշտոնական տեսակետը մերժողական է, բայց ժողովրդի կողմից ավելի ու ավելի տարբեր մոտեցումներ են առաջադրվում և հույսիկ պահանջվում: Պետությունը մեղադրվում է իր կոչտ ու սխալ քաղաքականության մեջ, ավելանում է թիվը զրանց, ովքեր բարձրացնում են այն հարցերը, թե արդյո՞ք հայերն իրավացի են, արդյո՞ք «ինչ-որ բան կատարվել էր անցյալում»: Դեռևս այս ձայները քիչ են, շատ քիչ, բայց այնուամենալիվ այսօր թուրքիայում պաշտոնական տեսակետը հարցականի տակ առնող և հարցեր տվողներ կան, որոնցից մի ծաղկաքաղ ենք ուզում ներկայացնել՝ վերցրած Պոլստ մեջ լուս տեսնող հայկական «Ակոս» շաբաթաթերթի՝ թուրքական թերթերի քաղվածքների բաժնից, դարձյալ հիշեցնելով, որ սա ամենին էլ չի նշանակում, որ այսօր թուրք ժողովուրդը այսպես է մտածում: Սա կարելի է որակել միայն որպես կաթիլն օվկիանոսի մեջ:

Այս կարգի առաջին գրությունը «Ակոս»-ին ուղարկված մի ընթերցողի նամակն է, որը նա արտահայտում է իր բողոքը Փարիզում Կոմիտասի կամգնեցվելիք արձա- մի վերաբերյալ թուրքական մի թերթի տգեղ արարքի դեմ¹:

Կոմիտասը իր կորցրած ընկերների, կորցրած անատոլիական երաժշտության, Բորիմումների, կորած ժողովողի և Լ երեք չվերադառնալիք մի աշխարհի ցավից խեղագարպեց: Միգուցե այս խեղագարպելու շնորհիվ է ողջ մնաց և ամենածանր պայմաններում մարդկանց հաջողվեց անձնագործության գնով պահանջանական պահանջանական պահանջանական:

Բայց փրկվածը միայն նրա ֆիզիկական կյանքն էր: Այդ արտասովոր մարդը՝ Կոմիտասը, 1915-ի Գողգոթայի Ծանապարինց այլևս չվերադառնալավ: Նրան խեղագարպատկանող ընկերները երկրից դուրս՝ Ֆրանսիա տարան, ու Փարիզի մոտ գտնվող մի հիվանդանոցում ֆիզիկական կյանքը շարունակելով, էլ երեք այս վաստ աշխարհին չանդրադառնալով, վախճանվել է 1935 թվականին: Ապրեց մինչև երեսնականների վերջը:

Կոմիտասը այժմ միայն նկարներում, բրոնզե, փայտյա փորագրություններում է պարուն: Բայց արի ու տես, որ մեր հասարակությանը, սպուտապերից ժառանգած այրունությունը ձեռքերն ու հոգիները չեն կարողանում հանդուրժել Կոմիտասների, Վարդեն ու Զորիրապ էֆենդիների, Տիգրանների և Անահիտների քարեն, բրոնզե, փայտյա քանդակներն անձամ:

Քանի որ մարդասպանությունը ներընկալեցինք, դրա համար է, որ մեր երկրի ամենամեծ (!) թերթը՝ «Հյուրիկե»-ը, Կոմիտասի դեռ մտահոգման փուլում գտնվող արձամին շուն միզեցնելով կարծում էր, որ մեծ լրագրողություն էր անում: «Հյուրիկե»-ում այդ լրասանկարի տպվելու պահը Կոմիտասի երկրորդ անգամ խեղագրվելու պահն է: Առաջին խեղագարման պահը պատկերող նկարը 4-ը հունվար 2001 թվականից իմ տան պատին է կախված, բայց նրա հսկական տեղը 1915-ի դժբախ- տությունից ժառանգ մեր հիվանդ հոգիներն է»:

«Արդեն մտել ենք 21-րդ դար, և իսկապես ժամանակն է եկել, որ Թուրքիան իր պատմությամբ գրադիմի: Պարզ է, որ Աերկա հայացքներով ու պաշտոնական պատ- մություն հասկացողությամբ որևէ տեղ հասնելը և առաջ գնալը անկարելի է: Թուր- քերն էլ իրավունք ունեն իրենց պատմությունն իմանալու: Բոլոր ազգերի պատմու- թյան մեջ մութ անկյուններ կան: Դժբախտաբար Թուրքիայում գոյություն ունեն պե- տության մոտ գտնվող, այսինքն պետության կողմից ստեղծված հսկիչ հիմնարկ- ներ: Սրամցից մեկն էլ «Թուրք պատմության հիմնարկ»-ն է: Պաշտոնական պատ- մություն հասկացողությունից շեղուները այդ հիմնարկի հսկողության տակ են, այդ հիմնարկը պաշտոնական պատմության պահակի դերն է կատարում: Հիմնար-

¹ «Ակոս»-ի նույն նամարում թուրքական «Յենի գյուղեն» թերթից արտատպատ մի որիշ նորված է և ուշադրության արժանի, որտեղ գյուղական մեքերվում է Բեյլիմի ազգա համալսարամի դասախոս, Թուրքիայի ու կովկասյան շրջամի փորբամական բախումների մասնակտ, գերմանացի պրոֆեսոր Դեզա Հովմանի խոսքերը:

կի դեկավարները 1951-ից սկսած, բռնակալ սովթան Արդուկ Համիդի հիմնադրած ու երիտթուրքական կառավարության կողմից առաջին աշխարհամարտի ժամանակ զարգացած, զաղափարախոսական պատմության հասկացության խոսափող-ներն են: Հատ այս պատմության ընկալման, պատմության ամենամեծ մեղքերից մեկը հանդիսացող զանգվածային ջարդները, իր թե հայկական վտանգը մատնանշելով, արդարացվում են: Այս գործի ամենակարկառություններից մեկը հիմնարկի տնօրեններից էսադ Պուտան է:

Մի ուրիշ կարևոր անձ Հասան Դանգուտն է: Առաջին աշխարհամարտից տասը տարի անց կատարած մի աշխատությունում նա, միջազգային պայմանագրերով պահովագրված հայկական բարեփոխումներից փրկվելու համար Առաջին աշխարհամարտը որպես մի բախտավորություն է նկատում:

Մատնանշվածը 1878-ի Բենջինի համաձայնագիրն է: Ինչպես գիտենք, այս պայմանագրով թուրք պետությունը քրիստոնյաներով բնակեցված արևելյան շրջանների համար պաշտպանական բարեփոխումներ անելու էր ասիպված:

Այս բարեփոխումները արդուկհամիդյան ռեժիմի ժամանակ չիրականացան: Եվ-րոպական ուժերի ու սովթանի կողմից 30 տարի ձգձգվելուց հետո Առաջին աշխարհամարտը երիտթուրքներին հայկական հարցը լուծելու համար անհրաժեշտ պայմաններ ընծանեց ու «հայերին վերացնելով»՝ խնդիրը լուծվեց: Թուրքիայում գոյություն ունի գրաքննության ենթարկված, հսկողության տակ գտնվող, անձեռնմխելի մի պատմագրություն: Գիտական ու մտածողության զգատության բացակայության պայմաններում ի՞նչ եք ուզում վիճարկել: Ինչպես և ի՞նչ ձևով եք վիճարանելու: Մյուս խնդիրն է սա է, որ ճշմարտությունը տեսմել, դրան մոտենալ, ըմբռնել ցանկացող թուրք գիտնականները, մարդու իրավունքների պաշտպանները պիտի պատժամիջոցների ենթարկելը նկատի ունենան: Այժմ նրանց համար հայրենիքի դավաճանության համար պատժվելու խնդիր կա»:

Ամեն դեպքում բոլորովին անհուս չէ Հոֆմանը:

«Խնդիրի էությունը գիտակցող մարդու իրավունքների պաշտպանները, գիտնականներն ու մտավորականություններ, հակառակ բոլոր դժվարություններին, շանք չեն խնայում Թուրքիային այս անեղանելի վիճակից դուրս բերելու համար: Պետք է ճրանց սատարել:

Բայց Եվրոպան ու Ամերիկան տարուների խնդրում օպորտուիլիտական կեցվածք են դրսենում: Չտեսմելու, չզիտենալու կեցվածք է սա»:

Այժմ ուզում ենք դարձյալ մի ընթերցողի մամակը ներկայացնել, որը բավականին հետաքրքիր է՝ շատ հակիրճ լինելով հանդերձ: Նամակը սկսում է «Ակոս»-ի տնօրեն Հրանտ Տիմակի թոքական հեռուստատեսությամբ ունեցած մի ելույթի ժամանակ արտահայտած մտքով, որտեղ նա ասում էր, թե մի թուրքի հարցադրումը՝ «Ի՞նչ են ուզում այս մարդիկ», իր համար ավելի նշանակալից է, քան ամբողջ Եվրոպայի կողմից հայոց ցեղասպանության ընդունման հարցը:

«Այ, որ ասել էիր, թե մի թուրք հարցնի, թե «Ի՞նչ են ուզում այս մարդիկ»։ Վստան եմ, որ այս երկուս հարյուր-հազարավորներ ոչ իրենց լեզվով, այլ իրենց հոգիներով ձեզանից Ազրողություն են խմբում, իսկ եթե հարցնեն, թե ինչո՞ւ ոչ լեզվով. Վախի հասկացողությունը ամենալավը դուք գիտեք։ Նրանք կարող են մուտքման թուրք լինել, բայց նման են ծեզ, փոքրամասություն են։ Հուսով եմ, որ մի օր միասին բարեկամական երգեր կերպնեք։ Առանց վախի... Մեծն Սինանի Սովեյմանիկի տակ։»

Սինանը, որի գլուխգործոցներից է Սովեյմանիկ մզկիթը, եղել է ազգությամբ հիալ, ճառութերից բռնի վերցրած ու մուտքմանցներով և նիշնրիական կազմակերպություն մոցված, նա ընդունվում է որպես թուրքի ամենանշանավոր ճարտարապետություն։

Նոյն օրերում աչքի է ընկնում նաև քրդամետ «Ենի գյումդեմ» թերթի մի հոդվածը։

«Ներսում թուրք ժողովրդի իրավունքի պահանջներին, քուրդ ժողովրդի ազգային ու ժողովրդավարական ցանկություններին, ուժ գործադրելուց բացի ասելիք բան չունեցող այս ուժիմը, այժմ էլ ինթիքատ և թերաքքիական կոտորած ու ցեղասպանությունը պաշտպանելու նպատակով ամբողջ աշխարհին ասպարեզ է կարդում։»

Հայ ժողովրդի դեմ կատարած օսմանցիների կոտորածն ու ցեղեսապանությունը «ազգային» ամբատականության հիմնաքարող դարձնողները ամեն տեղ «թշնամի» են տեսնում։ Ֆրանսիական սենատի որոշումը Վաղը Ամերիկայում և ուրիշ երկրներում էլ է օրակարգում դրվելու։ Սրանից պիտի ու ազատում չկա։ Միակ եղբ՝ ճշմարտությունն ընդունելու ու «իբրև ցեղասպանություն» կոչվող սխալ պրոպագանդամերին վերջ տալը է։»

Նման մի հոդված էլ նոյն օրվա «Թրադիկալ» թերթում է աչքի ընկնում։

«Թուրքիայում վերջերս 1915 թվականին մի ցեղասպանություն կատարված լինելու մասին խոսողներ կան։

Մինչև վերջերս թուրքական պաշտոնական կեցվածքը մերժում էր 1915-17 թվականներին հայերի ցեղասպանության ենթարկվելը։

Այդ պատճառով էլ, ըստ վերջին տարիների մոդայիկ ձևակերպման, ոչ միայն պաշտոնական ձևակերպումներում, այլ նաև բոլոր լրատվամիջոցներում «իբրև հայկական ցեղասպանություն» տերմինն է տեղ գտել։ Այս «իբր» բառը հիշեցնում է վտանգի առաջ գլուխը ավագի մեջ մոցնող ջայլամի։ «Ճեղասպանություն» հասկացությունը չի նշանակում մերժել տեղահանված հայերի ապրած զանգվածային սպանությունները, սովոր, հիվանդությունից ու հոգմությունից առաջ եկած մահերը, նմշան տակ կրոնափոխ լինելը, թալանը։ Հայկական հարցի շրջանակներում թուրքական պաշտոնական և «ազգային» տեսության ամենաէկական թեմարաններից մեկը հանդիսացող և օտար լեզուներով թարգմանված Քյամուրան Գյուղումի «Հրեմանի տուլասը» (Հայկական վավերաթուղթը) կոչվող աշխատության մեջ տեղահա-

Շության ժամանակ մահացած հայերի թիվը 300000 է Աշվում: Այս հարցին պետական հայացքով մոտենալու պարտավորությունը չունեցող Թաներ Աքշամի նաև տեղական ուսումնասիրողները նշում են, որ այս թվերը իրականույթյանը համապատասխան չեն ու մահացած հայերի թիվը տեսնում են 800000-ի մոտ, վերջիվերջո, մի մեծ հայկական զանգվածի կոտորվելը մինչև վերջերս պաշտոնապես ընդունվում էր: Հայկական հարցի պետական տեսակետի երկրորդ առբյուրը Բիլալ Շիմշիրն է: Նա հայերի տարագրության ժամանակ կատարված կոտորածներից առաջին կարգի պատասխանատուներից լինելու հանգամանքով բանտարկված բերդից փախչելոց հետո դարձալ ճերրակալման անխոսափելիությունը տեսնելով անձնասպան է եղել: Տիգրանակերտի կուսակալ դր. Ռեշիդի խուաքերն է մեջքերում. «Հեյ դր. Ռեշիդ», - ասում է նա, - «կա՞մ հայերը թուրքերին են մաքրելու, կա՞մ էլ թուրքերի կողմից մաքրվելու (...) տարագրության օրենքը ընդունվելուց հետո, կուսակալ դր. Ռեշիդը բեր այս հրամանը Տիգրանակերտի շրջակալքում շանասիրությամբ է կատարում»: Բիլալ Շիմշիրը ընդունում է տարագրության օրենքի «հայերին թուրքերի կողմից մաքրելու» պահանջը լուրացրած մի կուսակալի կողմից շանասիրաբար կատարվելու հանգամանքը: Այս հարցում, թե ինչպես կարելի է շանասիրաբար մի գործ կատարել, բացատրելու ավելորդ է:

Մինչև վերջերս «ցեղասպանություն» հասկացությունը մերժվում էր Թուրքիայում, վերջերս 1915-ին արևելքում կատարված մի ցեղասպանության մասին խոսք սկսվեց: Բայց խնդրու առարկան «հայերի կողմից թուրքերին ցեղասպանության ենթարկել»-ն էր: Նախ՝ հգիրում մի հուշարձան կառուցվեց, որի անունը այնպես էլ չկարողոցանք ճշտել՝ «Հայկական դաժանության հուշարձան» էր, «Խաղաղության հուշարձան», թե «Ցեղասպանության հուշարձան»: Տանյակ տարիներ ազգայնականության բովով անցած, խեղաթյուրված մի պատմության ուսումով հասունացած սերունդները, հայկական խնդրի պատճառով իրենց պատմության հետ դեմ առ դեմ եղած ժամանակ «ես չարեցի, նա արեց» երեխայություն կատարելը պետք է սովորական ընդունել: Բայց ազգային քաղաքականությանը էլ այսպես լինելը նշանակում է, որ այլևս վստահորեն մեր քաղաքական-ժողովրդական գիտակցությանը տիրել սկսող թուրանական-ազգայնամու շունչը այլևս իշխող է դառնում: Քանի որ այնքան էլ հնչու չէ պահել, որ հայերը փորձել են թուրքերին ամրողապես բռաջնջել (չնայած, որ «հայերը թուրքերից հետո եկան այս հողերի վրա» ասող հասկացությունը դա էլ կարող է պահել) մեր ազգային քաղաքականությունը, բացվելիք ցեղասպանության թանգարաններում «ցածր խտության ցեղասպանության» նման նոր բռութագրումներ պետք է ստեղծել ըստ երևույթին: Ազգայնամու մի նախարարի կողմից դեկավարվող պաշտպանության նախարարությունը «ցեղասպանությունը հայերի կողմից կատարված լինելը» պահելով համեմերձ, գիտակցում է արդյոք, որ այս նոր ցեղասպանություն հասկացության լույսի տակ Քյամուրան Գյուլունի և Բիլալ Շիմշիրի աշխատությունները նույնիսկ բավական են հայերի ցեղասպանության ննթարկվելը փաստելու համար: Այս մտածելակերպի համար էականը միայն այն է,

որ Թուրքիան ևս մի ցեղասպանություն ունենա, նույնիսկ եթեն միայն ինքը դա ընդունած լինի»:

Դեռ հունվարի 21-ին «Շաղիկալ» թերթի հոդվածագիրը նշում էր, որ Թուրքիայի շաբերը պաշտպանելով համեմոր, չի կարելի ստերի եւստում թաքնվել, որ ինչքան էլ քողարկվի ճշմարտությունը, չի կարելի այն ամբողջովին թաքցնել: Նա ներկայացնում է նաև մի ընթերցողի նամակ, որն ամբողջությամբ թարգմանված թերում ենք այստեղ:

«Մայրու Տերսիմի ծննդան է ու այժմ 90 տարեկան: Տեսել է այն օրերը, երբ հայերին խումբ-խումբ տանում էին: Այն օրերին մի հայ իրեն ազգական հայտարարողին կամ «Սա ինչ է» ասողին որևէ մեկը չի խանգարել, անգամ ուժային կառուցմերը ոչ մեկին դրա համար ձեռք չեն տվել: Պապս տղա չունենալու պատճառով, ամբողջ ընտանիքը սպանված, այսինքն որք մի հայ երիտասարդի հավանում ու վերցնում է որպես հովիկ: Տղան լինում է 14-15 տարեկան: Մի որոշ ժամանակ այս տղան մի կտոր հացի համար հովվություն և տնային գործեր է կատարում: Մի օր հոտից կորում է մի երիմչ: Պապս շատ է բարկանում հայ տղայի վրա: Միասին փնտրում են կորած երիմջը: Չեն գտնում: Մյուս օրն էլ են փնտրում, բայց ապարդում: Սովոր ժամանակ է լինում: Ի՞նչ իմանաս, թե ով է գողացել ու կերել երիմջը: Բայց երկրորդ օրվա վերջում երիմջը չգտնող պապս գենքը պահում է հայ տղայի գլխին ու կրակում: Գալիս ու նատում է իր անկյունում: Մայրու սեփական աշքերով տեսած այս սպանությունը պատմելուց դեռ ցավ էր գգում: Ես էլ ափսոսացի լածին համար: Երամի չպատմեր: Այժմ պապսի հիշելուց ուստի ծանրանում է մի մարդասպանի թոռը լինելու հանգամանքը: Երամի այդ տղայի՝ տասնչորս տարեկան այդ որբի սպանված տեղը իմանայի: Կարողանայի մի ծաղկով ներողություն խնդրել, անունը իմանայի: Եթե ապրեր, իմ ազգականը պիտի լիներ: Կարող է լիներ նաև ձեր ազգականը»:

Այս հոդվածից մի շաբաթ հետո էլ «Զումբուրիյեթ»-ում ասվում է. «Հականը ապագան փրկելն է: Սա մեն ու երկար մի ճանապարի է: Իսկ այս ճանապարհում, բոլորից առաջ մեզ սպասող պարտականություններ կան: Ամենակարևորը արխիվ-ները հաստատապես բացել ու աշխարհի ամենահարգված պատմաբաններին հավաքել ու նրանց ձայնը աշխարհին լսելի դարձնելն է: Այս բանը պետք է առանց վախճանալու կատարենք: Հակառակը նպաստում է, որ կասկածները մեր վրա կենտրոնանան: Եվ այդպես էլ լինում է: Մյուս կարևոր հանգամանքն էլ Հայաստանի հետ ունեցած մեր հարաբերությունն է: Բայց մի երկու բացառությունից, փակ սահմանների եւստում սպասող երկու ժողովուդ ենք: Այս դրմերը ինչո՞ւ չեն բացվում, ու մեր հայ բարեկամների հետ ինչո՞ւ չենք կարողանում գրկախառնվել: Ի՞նչ հարևաններ, որ իրար չեն այցելում, հարաբերություն չունեցող հարևան ո՞նց է լինում: Աղքանացիների հետ լավ ենք գգում, իսկ հետոը երբ հային է գալիս, ինչո՞ւ ենք երես թերում: Եթեն մենք «եղբայր ժողովուդ» են, իսկ մյո՞ւալ ...»:

Այժմ Աերկայացնում ենք «Հայոց ցեղասպանության» ճնշման տակ մի քանի շաբաթ շարունակ բորբոքված կոքերի արանքում փայլատակող դրական գրությունների կայծերից վերջինը:

«Այսօր Թուրքիան «Մերժումը իզիթի բերդն է» խոսքից ելնելով, պատմության վերջին շրջաններում հայերի դեմ կատարված դաժանությունները մերժելով հանդերձ, ավելի առաջ էլ զնալով, իրականության մեջ հայերի կողմից թուրքերի դեմ կատարված կոտորածն է առաջ բերվում: 200000, 500000, 800000, թե ավելի մեծ թվով, չգիտեմ, բայց քանակը հարյուր հազար մերով լինելով հաստատ եղող օսմանյան հայատակ հայերի տեղահանության օրենքի կատարվելու ընթացքում կոտորածից, սովոր ու հիշվանդությունից մահանալու ի հիշատակ, Թուրքիայի ոչ մի անկյունում, ամենահիետին մի դուռ եւնուն անզամ մի ցավակցական հուշարձան, մի հուշատախտակ չենք տեղափորում: Այսօր Թուրքիայում ապրող 80000-ի մոտ Թուրքիայի հայերից (ուզում եք հայ-թուրք ասեք) գոնեն մի մասը արդյո՞ք չունի տեղահանության ժամանակ մահացած մի ազգական: Բայց Խզդիրում, Հայաստանից տեսանելի լինելով համար հատկապես փառավոր կառուցված «հայերի կոտորածների հուշարձան» ունենք: Վաճի թանգարանում «1915 թվականին Էրսին Զավուշօղլու ախոռի մեջ կոտորված ու հրկիզված թուրքերի կմախքներ»-ի ցուցադրության համար հատուկ բաժին կա: Իհարկեն ճիշտ է, որ հայ հրոսակահմբերի կողմից թուրքեր և քուրդեր կոտորվեցին: Բայց մի ճիշտ հաստատումը չի նշանակում, որ մեղալի հակառակ կողմը մերժենք: Չի նշանակում, որ չեն ենել հայերի ոչ միայն տեղահանումը, այլ նաև մի մասի ոչնչացումը «պետական շահերին համեմատ» լինելով հանգամանքին հավատալով շարժվողները: Թուրքիայում մինչև վերջերս մեր պատմության այս դեպքերը որպես էինք որպես «փոխադարձ կոտորածներ»: Այժմ Ժիտվում է համարյա ամբողջությամբ: Այս ժողովովորը, այլևս յուրքական սոցիալիստների որոշ մասին էլ վարակված մերժման հիվանդությունով է տառապում: «68-ներ»-ի հիմնարկը, առևտորի միությունների հետ ֆրանսիական դրոշ են վառում, քանի որ Ֆրանսիան ընդունեց Հայոց ցեղասպանությունը: Բայց Խզդիրի մերժման հուշարձանին, մահացած հարյուր հազար մերժման հայ քաղաքացիների հիշատակին անզամ մի սև ծաղկեպակ չեն դնում: Վաղը Ամերիկայում, մյուս օրը Անգլիայում և մյուս արևմտյան երկրներում, Իրանում կամ Միջիայում որտեղ բազմաթիվ հայեր են ապրում, միգուցե Բուլղարիայում էլ, երբ այս տեսակ որոշումներ ընդունվեն, կատարվելիք փողոցային ցուցերը ծրագրել, հրկիզելիք դրոշները պահեստավորել, գործադրվելիք ցուցերը պատրաստելու հրով բռնկված այս հոգեվիճակը, մատնում է աշխարհը շփոթած թուրքական ժողովրդա-քաղաքական խանգարումը:

Այս զնացքի վերջում, տարը-քսան տարի հետո Սերբիայի կամ Իրաքի նման դառնալը եղր որ հասկանանք, շատ ուշ է լինելու: Եվ այս ժամանակ պիտի տեսանենք, որ թուրքական ժողովրդի մեջ հարյուր հազար մերժին թշնամի տեսանելու մղձավաճի պատճառով աշխարհը չտեսնողները, Սկրի Վախի պատճառով ձեռք ու ուտք խառնողները, պետությունը պաշտպանելու պատրվակով իրականու-

թյան մեջ իրենց դիրքը պահպանողները, թուրք ազգայնականության վրա ֆաշիստական կարգադրություններով քաղաքականություն բանեցնողները ինչպես և քայլայելու մեր միասնականությունը»:

Մնացած բոլոր մեկնարանությունները ավելորդ համարելով վերջացնում ենք մեր ծաղկաբաղը, բաղկացած թուրքական թերթերի հազվագյուտ ծաղիկներից:



ԷԶԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԻՑ

Ներսես ավագ քահանա Պապայան

Հայկական Մեծ եղեռնի փաստագրական հուշագրությունների շարքը ավելացավ ևս մի անկրկնելի հատորով: Ա.ՊՌԻԼ, հրատարակչության մատենաշարու լուս ընճայվեց Ներսես ավագ քահանա Պապայանի «Հչեր իմ օրագրից» անգլերեն գիրքը (Լոս Անջելես. 2000 թ.): Այն հրատարակության է պատրաստել հեղինակի որդին՝ բազմավաստակ ուսուցիչ, գրող Երվանդ Պապայանը: Թարգմանությունը հմտությամբ իրականացրել է Արիս Գ. Գևորգը: Գրքի բնագիրը ամբողջությամբ հայերեն լեզվով հրատարակվել էր Երվանդ Պապայանի «Հիշատակներու արարեւելորով» (Լոս Անջելես. 1998 թ.) հուշերի շարքի առաջին մասում: «Հչեր իմ օրագրից» գրքի անգլերեն լուսանձայումը պարզ է. Հայ դատը ծանութացնել օտար համրությանը:

Գիրքը կազմված է բժիշկ Սարգիս Գարյանի կողմից գրված նախաբանից, Ներսես ավագ քահանա Պապայանի համառոտ կենսագրականից և չորս հատվածներով ներկայացված օրագրային մասից: Գրքում գետեղված են հեղինակի և նրա կյանքի հետ կապված 9 լուսանկարներ: Վերջում նաև տեղ է գտնվ հրատարակչի՝ տիար Երվանդ Պապայանի համառոտ կենսագրությունն ու գործունեությունը: Ընդհամեն՝ շուրջ 80 էջ:

Ինչպես նշում է նախաբանի հեղինակը՝ «Այնթապի հայությունը և առհասարակ կիլիկիահայությունը 1915 թ. դեպքերում ծրագրված ծևով բռնազարթվեց երեք ուղղություններով: Առաջինը՝ դեպի Դեր Զորի սիրիական անապատները, որից շատ քիչ մարդ վերապրեց. երկրորդը՝ դեպի Սիրիայի Համա, Հոնս և Սելիմիյե բնակավայրերը: Այստեղ, շնորհիվ տեղի արար բնակչության մարդասիրական վերաբերմունքի, բռնազարթվողների գերակշռող մասը փրկվեց: Գաղթականության երրորդ ուղղությունն ընդգրկում էր Դրույ լեռան ու Հորդանանի անապատային տարածքները: Այս ուղղությամբ էր օրագրի հեղինակի բռնազարթի ճանապարհը: Ինչպես վկայում են վահատերը, սովոր ու տարածված համաճարակները խեցին տարագրված հայերի մեծ մասի կյանքը: Եղենմից վերապրած բախտավորներից էր Ներսես քահանա Պապայանը: Նրա սովոր օրագրությունը կարևոր է հետևյալ երեք նկատառումներով. առաջին՝ այն աշված տարածքներից հասած ականատեսի միակ փաստացի վկայությունն է, երկրորդ՝ նրանում դեպքերը շարադրված են օր ըստ օրի, և երրորդ՝ գիրքը գրված է համայնքի առաջնորդի կողմից, որ իրազեկ էր բոլոր անցուղաձերին»:

Ներսես ավագ քահանա Պապայանը ծննդել է 1887 թ. Կիլիկյան Այնթապում: Նախնական կրթությունը ստացել է Այնթապի Հայկացյան վարժարանում և երկրորդականը՝ Աղեմական դպրոցում: Մի քանի տարի տևող ուսուցչական գործությունից հետո ընդունվել է Տարտուի Սեն Պոլ Կոլեջ: Ավարտելուց հետո հոգևորականի Ավիշտումով մեկնում է Երուսաղեմ: Նա Երուսաղեմից վերադառնում է 1910 թ. որպես Այնթապի մերձակա Ջիրին զյուղի ավագ քահանա:

Ինչպես ընկալվում է օրագրության բնագիր շարադրանքից, Ներսես քահանա Պապայանը տիրապետում է արձակին և ունի հակիրճ ու պատկերավոր գրելառն: Գիրքը ունի հուշագրական ժամերի հաստի կառուցվածք: 1915 թ. մայիսի 15-ից սկսվող և մինչև 1918 թ. մայիսը երկարող օրագրության հատվածը անվանվել է «Տարագրություն»: Դրանում Ակարագրվում է բռնագաղթը իր բոլոր դաժանություններով, Այնթապից՝ Եփրատի ափերով դեպի Ծարապլու, Հալեպ, Դամասկոս և Քերեք ու Բեյռութ Երուսաղեմ: Երկրորդ զյուղը Ակարագրվում է Եգիպտոսի Պորտ Սահի քաղաքի հայկական վրանակայանը, որ ընդգրկում է խնդրո առարկա տարագրության 1918 թ. մայիսից մինչև 1919 թ. նոյեմբերի ակիզը երկարող ժամանակահատվածը, եթե՛ Տեր Ներսես Պապայանը մյուս այնթապացիների հետ վերադառնում է ծննդավայր՝ Այնթապ: Երրորդ զյուղը այնթապահության միասնական ու ազատաւունչ ներուսամարտի պայքարն է: Այն հայոց պատմության հերոսական մի դրվագն է: Օրագրության սեղմ տողերի մեջ պատկերված է հայ կրոնավորության անձնութաց Ավիշտումով կերպարը իր ժողովրդի Ակատմամբ: Չորրորդ զյուղը 1920-ականների Հալեպի Ակարագրությունն ու գաղղական հայության պալքարի ու անընդության գաղափարի մարմնավորումն է ընդուն ճակատագրի հեզանեցին:

«Հեր իմ օրագրից» գիրքը մի համանվագ է, որտեղ չափազանց դիպուկ ձևակերպումներով Ներսես քահանային հաջողվել է միահյուսել արձակն ու տեղեկացրականը: Սեղմ տողերում և խորաթափանցությամբ մեկնաբանվում է ժամանակի մեջն քաղաքականությունը: Այսօր այնքան ոգևորիչ ու պարտավորեցնող են հնչում Բեյլինակի հետևկալ տողերը՝ «Բայց և խառնակ մտածումները կտանչեն զիս հաճախ: Գոյի կառմեն զամոնք զավկիս համար, զան ամոնց համար, որոնք պիտի ընթերցնեն զամոնք թերևս, օր մը, եթե ես քաժանված պիտի ըլլամ այս աշխարհնեն»:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈԹՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

“Армянский вопрос. Геноцид армян. Библиография литературы на русском языке (1877-1997), Ер., 1998.-316 с.”

Գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ մատենագիտական ժողովածուների կազմումն անկանություն է համարվում: Փաստորեն, դրանք ուղղությունը և բանալի են ծառայում տվյալ թեմայի համապարփակ ուսումնասիրության տեսանկյունից: Այս առումով ամենահին չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ մատենագիտություններն առաջին հերթին օգտակար են հենց ուսումնասիրողների համար:

Ակնհայտ է, որ մատենագիտությունների դերն առավել ևս կարևորվում է հատկապես հայագիտության բնագավառում: Այստեղ, ակաած 19-րդ դարից, ստեղծվել է ծովածավալ գրականություն, որից օգտվելու հնարավորությունն հեշտացնելու և այն ոյցուրին դարձնելու առումով մինչ այժմ ստեղծվել են բազմապահի մատենագիտություններ՝ թեմատիկ և առանձին ականավոր հայագետների վաստակն ամփոփող տեղեկատվությամբ: Այս պարագան որակի և մատենագիտության հմտության առումով ավելի է շահում, եթե գործին ձեռնարկում են հենց հայագետներն ու փորձված մատենագետները:

Բնական է, եթե հայագիտության ողջ անսպառ օվկիանոսում թե՛ ծավալի, և թե՛ որակի առումներով աչքի է զարմում առաջին հերթին հայոց ազատագրական պայքարին, Հայկական հարցին և ցեղասպանության պատմությանը նվիրված գրականությունը: Հայոց պատմական ճակատագրի հանգամանքների բերումով այս թեմաները միշտ ել գտնվել և գտնվում են հայ հասարակական-քաղաքական և պատմագիտական մտքի ուշադրության կենտրոնում: Ավելին, պետք է միանգամայն փաստել, որ այս հիմնախնդիրների ուսումնավիրությունը պատմագիտականից զատ ունեն նաև նույնական կարևոր հնչեղության քաղաքական նշանակություն՝ քարոզչական և միջազնական փոխհարաբերությունների տեսանկյունից:

Մյուս կողմից, այս պարագան հայերի համար ունի նաև միշագային ասպարեզում Հայոց ցեղասպանության փաստի համընդիմանուր ճանաչմանը նպաստելուն միտված նշանակություն:

Այս ամենից ենթով, հիշյալ թեմային առնչվող ցանկացած մատենագիտական աշխատանք միանշանակորեն ողջունելի է: Այդ հանգամանքը հատկապես վերաբերում է Պ. Հովհաննիսյանի և Է. Բաբայանի կողմից կազմված «Հայկական հարց,

Հայոց ցեղասպանություն» մատենագիտությամբ, որն ընդգրկում է 1877-1997 թթ. ոռուերեն լեզվով հրատարակված Այսուհետք:

Ամերիկահայ Վահե Աղարքևյանցի մենաստությամբ և բարոյական աջակցությամբ դեռ 1993 թ. Երևանում հիմնված ոչ կառավարական հասարակական Ազգային Հարցի և Գեղանցիդի Ուսումնասիրման Կենտրոնի հրատարակած այս մեծարժեք աշխատանքը, Բևեն սկզբից շեշտնենք, հիրավի կոթողային և մնայուն նշանակություն ունի:

Մատենագիտության պատասխանատու խմբագիրն ու ներածականի հեղինակը Առվաճանք Պ. Հովհաննիսյանն է:

Մինչ մատենագիտության ներկայացնելն, անհրաժեշտ է անդրադառնալ Պ. Հովհաննիսյանի հեղինակած «Հայկական հարցի և ցեղասպանության մատենագիտության պատմության շորջը» մանրամասն և հանգամանալից ներածությանը: Սա փաստորեն թեմայի վերաբերյալ ընդհանուր գծերով, բայց բավականին սպառիչ և հարցի բոլոր կողմերը շոշափող վերլուծություն է:

Պ. Հովհաննիսյանն իրավացիորեն նշում է, որ Հայոց ցեղասպանությանը նվիրված գրականությունը քանակական և որակապես գերազանցում է հայոց պատմության այլ հիմնախնդիրներին: Առնչվող ուսումնասիրություններին:

Բնավ պատահական չէ, որ այս թեմայի նկատմամբ ուշադրությունը համատարած է, ընդ որում, նաև հայկական շրջանակներից դուրս:

Մասնավորապես, պետք է հիշատակել այն կարևոր հանգամանքը, որ սույն թեմայի վերաբերյալ կա հսկայական գրականություն ոռուերեն, եվրոպական, արաբերեն, թուրքերեն և այլ լեզուներով: Օրինակ, պրոֆ. Ռ. Սահակյանի հաշվումներով՝ 1900-1960 թթ. միայն Ֆրանսիայում հրապարակվել է մոտ 400 գիրք: Ընդհանուր առմամբ միայն վերջին հարյուրամյակում հրատարակված գործերի թիվն արդեն գերազանցել է 5000-ը:

Այսուհետք, ոչ միայն այս գրականության ծովում միանշանակ կարելի է առանձնացնել ոռուերեն լեզվով ուսումնասիրություններն ու Այութերը: Պատճառը պարզ է: Ուսական հասարակական-քաղաքական միտքն ու գիտական աշխարհն այս թեմային անդրադառնում էր հրատապորեն և մասնագիտական առնչությամբ:

Ավելին, հծվար է գտնել որևէ ոռուերեն պարբերական, որտեղ շոշափված չլինի հայոց ցեղասպանության հիմնախնդիրը: Միայն այս թեմային անդրադառնում պարբերականների թիվն արդեն անցնում է երեք տասնյակից: Ընդ որում, նման նետաքրքրությունն ամենական կենտրոնական մամուլով չեր սահմանափակվում: Ակամա գավառականից միան նահանգային մասշտաբի թերթերով պարզապես լեցուն էին արևմտահայ կոտորածների և Հայկական հարցի տարբեր արծարծումների վերաբերյալ բազմաբնույթ Այութերով:

Որպեսզի այդ պատկերն ավելի պարզ լինի, բավական է հիշատակել մի փաստ: Դարակբին Մամուչակ Բողդանյանը կազմել է ոռուերեն 248 անուն թերթերի և ամսագրերի՝ Հայաստանին և հայությանը վերաբերվող 2586 միավոր հսկայածա-

վալ նյութ պարունակող մատենագիտություն, որն ընդգրկում է միայն 19-րդ դարը: Այդ մեծարժեք մատենագիտությունը, սակայն, չի պահպանվել: Փաստորեն, Անդրկա գրախոսվող մատենագիտությունը, բարեբախտաբար, այդ կորսուի վերականգնման հաջողված փորձ է մաս:

Ոռուական իրականության մեջ Հայոց ցեղասպանության թևմայի նկատմամբ հետաքրքրությունը շարունակվում է մինչև 1920-ական թվականների կեսը: Դրանց հետո համատարած կերպով խորհրդային պատմագիտության մեջ ընդհանուր առմամբ գերիշխում էր Ս. Միլերի թուրքամետ պատմագիտական դպրոցը: Այս կապակցությամբ ճիշտ է մկատում Պ. Հովհաննիսյանը, երբ այդ երևույթը բացատրվում է խորհրդային համակարգի համար հիմնախնդրի ոչ ձեռնորու լինելով: Տարակուակի է, սակայն, նոյնիսկ 1967 թ. հրատարակված և հատուկ ցեղասպանությանը նվիրված Մ. Անդրյուկինի գրքում հայերի մասին հիշատակություն անգամ չկա:

Փաստորեն, ոռուերեն լեզվով պատմագիտական գրականություն ստեղծվում էր միայն Հայաստանում, այն էլ 1965 թ. Հայոց եղեռնի հիսնամյակից հետո: Ի դեպ, այդ հանգամանքն ուներ նաև քարոզչական նշանակություն: Բուն խորհրդային պատմագիտության մեջ փոփոխություններ սկսվում են միայն 1980-ական թվականներից:

Գրախոսվող աշխատանքում ընգրկված են միայն Բեղովինի կոնգրեսի գումարումից հետո կատարված դեպքերին առնչվող Այութերը, ալսինքն, մատենագիտության սկզբնակետ է ընդունվում Հայկական հարցի միջազգայնացումը:

Ներածականում Պ. Հովհաննիսյանն ընդհանուր գծերով ներկայացնում է թևմայի շուրջ առկա մատենագիտական աշխատանքները:

Սուածինը իրավամբ դրկտոր Սալմալյանի հոչակավոր «Հայկական մատենագիտություն»-ն է, որ ամփոփված են միայն եվրոպական լեզուներով գրականությունը: Այս աշխատանքները մինչ այժմ էլ շարունակվում են ավելություն: Պ. Հովհաննիսյանն ըստ արժանվույն է գնահատում Լևոն Վարդանի, Ռիչարդ Հովհաննիսյանի, Վիեն Ներսիսյանի, Տիգրան Գևորգյանի և այլոց վաստակը: Վերջիններս, սակայն, գրեթե չեն անդրադառ ոռուերեն լեզվով Այութերին:

Իսկ արդեն այդ ուղղությամբ համակարգված աշխատանքների սկսումը կապական է վաստակաշատ մատենագետ Հակոբ Անապյանի անվան հետ: 1977 թ. հրատարակված ցեղասպանությանը և Հայկական հարցին նվիրված նրա համապարփակ մատենագիտությունն ամփոփում էր 662 միավոր Այութ՝ 1877-1977 թթ. Ժամանակահատվածն ընդգրկող:

Հայկական հարցի լավագույն գիտակներից Արման Կիրակոսյանը հրատարակել է մի քանի մատենագիտություններ, այդ թվում

1. 1890-1900 թթ. ընդգրկող (190 միավոր Այութ),
2. 1878-1983 թթ. ընդգրկող (754 միավոր Այութ):

Վերջինս բաժանված է չորս թևմատիկ բաժինների՝ 1878-1894 թթ., 1894-1914 թթ., 1914-1920 թթ., 1920-1983 թթ. Ժամանակահատվածներով: Սա, փաստորեն, արդեն ծավալի առումով և զուտ մասնագիտական տեսանկյունից ավելի կատարյալ աշխատանք էր:

Ներկայացվող աշխատանքում կազմողներն օգտվել են ինչպես այդ, այնպես էլ Թուրքիայի վերաբերյալ որութեն մատենագիտություններից:

Պ. Հովհաննիսանը ներածականում կարևորում է թուրքերեն լեզվով աշխատությունների շուրջ առկա մատենագիտական աշխատանքները՝ հատկապես Լոռն Վարդամի մեծարծեք գործը: Վերլուծվել են նաև արված եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) մատենագիտությունները: Այս շարքում հատկապես հիշատակելի է Տիգրան Գևորգյանի Կամիրեռմ 1995 թ. հրատարակած մատենագիտությունը, որը ամփոփված են հայերեն (1332 միավոր), և դրական լեզուներով (1132 միավոր):

Այսպիսով, առկա էին տարրեր լեզուներով և ժամանակային կտրվածքով բազմաթիվ մատենագիտություններ: Առաջին հայացքից կարող է թվալ, որ հավանաբար դրանք արդեն բավարար էին ուսումնասիրողների պահանջների համար: Սակայն, ի պատիվ գրախոսվող աշխատանքի կազմողների, հարկ է փաստել, որ նրանց կազմած մատենագիտությունը մեծ առաջընթաց է: Ավելին, այդտեղ ներկայացված են նույնիսկ թեմայի մետ անուղղակի կապ ունեցող, բայց անհրաժեշտ նյութեր ևս: Մյուս կողմից, կազմողները խելամիտ են վարչել, երբ ամփոփել են նաև Արցախյան շարժումն արտացոլող նյութերը:

Մատենագիտությունը բաղկացած է երկու մասից՝ գրքեր (523 միավոր) և հոդվածներ (1837 միավոր), իսկ ընդհանուր առմամբ արտացոլված են 2360 միավոր նյութեր:

Զուտ ծավալի առումով այս մատենագիտությունն արդեն ավելի քան երեք անգամ գերազանցում է մինչ այժմ ամենամեծը համարվող Ա. Կիրակովյանի աշխատանքը:

Ինչ խոսք, չնայած այս փաստին, այնուամենայնիվ այս մատենագիտությունը լիակատար սպառիչ չէ, ինչը պատշաճորեն ընդունում է Պ. Հովհաննիսյանը: Հավաքված արևելի նյութը իրավունք է տալիս բարձր գնահատել աշխատանքը: Ավելին, արխիվային վավերաթղթերի բոլոր ժողովածուները ներկայացված են բացված բովանդակությամբ՝ Անդրամիկի, գերմանական և ռուսական աղբյուրների, Լոռնային Ղարաբաղի, Մ. Ներկայանի կազմած և այլն:

Ի պատիվ կազմողների պես է նշել, որ գրախոսվող գործը Ղարաբաղի հարցի վերաբերյալ առկա լավագույն մատենագիտությունն է:

Մյուս կողմից, բազմաթիվ են այն նյութերը, որոնք ոչ միայն մատենագիտական հազվագյուտ օրինակներ են այժմ, այլև ուսումնասիրողների կողմից գրեթե շոշանառության մեջ չեն ընդգրկվում: Այս առումով, ներկա մատենագիտությունն ունի կարևոր ուսուցողական բնույթ: Ավելին, մշակված են այնպիսի պարբերականներ,

որոնք վաղուց չեն օգտագործվում հայ պատմագիտության կողմից, չնայած դրանց պարունակած նյութերի հարստությանը:

Թեևեւս ընդհանուր առմամբ մատենագիտության արժեքներն այնքան շատ են, սակայն, թեև այս աշխատանքի բուն իսկ շամերից ելնելով, հարկ ենք համարում կատարել որոշակի դիտողություններ:

Ա. Կադիշի գրքի բովանդակությունը բացված է, երբ մատենագիտության մեջ կան բազմաթիվ բացման ավելի արժանի ուսումնասիրություններ:

Ցանկացած մատենագիտություն հետապնդում է առաջնահերթ նպատակ՝ հնարավորինս հեշտացնել հավաքված նյութերից ընթերցողի օգտվելը: Այս առումով, շատ կարեր է աշխատանքին կցված անձնանունների և անհեղինակ գործերի ցանկը: Սակայն, մատենագիտությունն էլ ավելի կշաբեր, եթե այն ունենար թեմատիկ-բովանդակային մանրամասն ցանկեր: Մասնավորապես, 2360 միավոր նյութ պարունակող մատենագիտությունում բավականին դժվար է գտնել կոնկրետ հարցի վերաբերյալ գրականություն: Այս կապակցությամբ հիշենք, որ, օրինակ, Ա. Կիրակոսյանն իր աշխատանքը բաժանել էր չորս ժամանակային հատվածների՝ ինչոր չափով դյուրին դարձնելով ընթերցողի գործը:

Փաստորեն, բովանդակային ցանկի բացակայությունն է միայն էական թերին, չնայած այս թեմայով յուրաքանչյուր ուսումնասիրող պարտավորված է ընդհանուր առմամբ պատկերացում կազմել ողջ գրականության շուրջ:


Ներկա մատենագիտությունը հայագիտության բնագավառում այն հազվագյուտ նախատիպն է, որ կարող է ակիզբ լինել ավելի մեծ աշխատանքի: Այս մատենագիտության նմանությամբ այժմ անհրաժեշտ է ձեռնարկել Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության համարակաք մատենագիտությունների մշակմանն ու հրատարակմանը՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն, արաբերեն և այլ լեզուներով:

Անկանած միշտ պետք է գիտակցել, որ նման մատենագիտությունների գոյությունն իսկ ինքնաստիճանա 1915 թ. Հայոց եղեռնի ապացուց է: Այսինքն, կարևորագույն այս մատենագիտություններն ունեն գուտ պատմագիտական և արդի քաղաքական մեծ նշանակություն:

Հենց վերոշարադրյալ առումներով Պ. Հովհաննիսյանի և Է. Բաբայանի կատարած շնորհակալ վաստակը այդ հանգամանքի լավագույն առհավատչյան է:

ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

ՊԱՏՄՎԳԻՏԱԿԱՆ



S. ԳԵՎՈՐԳ ԱԲԵՂԱ ՍԱՐՈՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑՈՒ ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔԸ

Հայ Եկեղեցու ծիսապարողական գորերի շարքում Հայամավուրք ժողովածուն իր ուրիոյն տեղմ ումի, որը պայմանավորված է թե՛ Վերջինիս գործառական բնույթով, և թե՛ Ապատակառուղվածությամբ: Նախատեսված լինելով ժողովրդական լայն լսարանի համար, իր բուն Ապատակից բացի, այն է՝ սրբերի վարքերի ու վկայարանությունների ընթերցանությամբ հավատացյալների բարեաշտական զգացումները բորբոքել, այն մեծապես արձագանքում է երկրի Եկեղեցա-քաղաքական կյանքին, ժամանակի պատմական իրադարձություններին և ժողովրդական կենցաղի հետ առնչվող մի շարք խնդիրների՝ Եկեղեցական օրացուց լինելուց բացի տարիների ընթացքում Վերածվելով Եկեղեցական կյանքի ու մասմավորապես տեղի ունեցած հրաշքների մի լուրորինակ տարենքության, որի Վերջնական ամբողջացումը կատարում է Գրիգոր Խլաթեցին, իսկ հաջորդող շրջանի գրիչները կատարում են լեզվաբանական բնույթի և գեղարվեստական ընդհանուր շարադրանքին Վերաբերող մի շարք հավելումներ, ինչպես նաև Աերառում են իրենց ժամանակի նոր վկաների և ոչ վաղ անցյալի նշանավոր հոգևորականների վարքերն ու վկայարանությունները:

Եկեղեցա-քաղաքական գրականության բնագավառում Գր. Խլաթեցու գործունեությունը չի սահմանափակվում միայն Հայամավուրքի խմբագրությամբ. Առ անդրադաել է նաև Գանձարանին, կազմել է նոր ճառընտիր՝ հարստացնելով սեփական ստեղծագործություններով: Գր. Խլաթեցու այս գործունեությունը լինելով իր գրական տաղանդի ու հոգևոր նախանձախնդրության արտահայտությունը, միաժամանակ ստուգարանվում է ժամանակի ընդհանուր գրական, մշակութային, Եկեղեցա-քաղաքական կյանքի ընդհանուր շրջագծում: Ինչպես Մամուկ Աբեղյանն է գրում, «Մեծ խեղճության ու տագնապի, Աեղության ու կողոպուտների, հալածանք-

Աերի ու կոտորածների, անգամ լամկթամուրյան ավերմուճի օրերին կային դեռ վարդապետներ, մեծ մասամբ Հովհաննես Որոտնեցու աշակերտներ, որոնք անսպառ եռամդով, ամեն տնտեսական զրկանքներ կրելով, ճիգեր էին անում լուսավորության ճրագը վառ պահելու մեր վաճական դպրոցներում¹:

Գր. Խլաթեցու Հայսմավուրքն իր բովանդակությամբ, ազգային հարուստ Օքքերանգներով ու Այութերի բազմաշերտ ընդարձակությամբ շատ կարճ ժամանակաշրջացքում մեծ ժողովրդականություն ձեռք բերեց՝ բազում ընդօրինակությունների արժանանալով: Ինչպես Մայիս Ավդալբեզյանն է գրում, «XV դարի առաջին քառորդից, եթե՛ ճանաչում ստացավ Խլաթեցու ժողովածուն, հայսմավուրքային մյուս խմբագրությունների ընդօրինակումները ճվազագույնի հասան, մինչդեռ Խլաթեցու ժողովածուի հայուրավոր օրինակներ ողողեցին ողջ Հայաստանը և առ այսօր պահպանվում են ձեռագրական պահոցներում: Միայն մեր՝ Մաշտոցյան մատենադարանն ունի Խլաթեցու Հայսմավուրքի ավելի քան 200 օրինակ»²: Ի տարբերություն Հայսմավուրքի մյուս խմբագրությունների, Գր. Խլաթեցին հանուն քրիստոնեական ուսմունքի համատակված սրբոց վկայաբանություններում շեշտում է ազգային գործոնի հանգամանքը՝ ընթերցողի կրոնական ու հայրենապիրական զգացումները բորբոքելով: Ազգային կյանքն ու առօրեական կենցաղը նրա ստեղծագործություններում ամենուր իրենց զգացնում են՝ արդիականացներով, իրական և շոշափելի դարձնելով սրբերի հիենալականացված կերպարները: Գր. Խլաթեցու մոտ պրեեր կամ պրություն հասկացությունը վերացարկված չեն, նրանք բնավ էլ անհասանելի չեն մնում շարքային քրիստոնյաների համար: Նա իր Հայսմավուրքում տեղ է տալիս պարզ շինականին, որն իր քրիստոնյա լինելու պատճառով համատակվել է: Եվ այնքան առօրեական երանգներով է պատկերվում հայ գյուղացու կերպարը, որ տպավորություն է ստեղծվում, թե անձամբ ներկա է եղել նրանց համատակությանը: Ավելի ամբողջականորեն եթե բնորոշենք Գր. Խլաթեցու աշխատանքը, անվետապահորեն կարող ենք ասել, որ վերջինս ժողովրդականացրել է Հայսմավուրք ժողովածուն՝ Բենվեռով ոչ թե ընդհանուր քրիստոնեական սրբերի մասին գոյություն ունեցող սրբախտական զրականության կանոնով գրված վարքերի ու վկայաբանությունների վոր, որոնք ստեղծագործության զարգացման և ընթացքի որոշակի կայուն և պարտադիր կաղապարներ ունեին, այլ հյուսել է պատմությունը բուն հայկական միջավայրում տեղի ունեցած հրադարձությունների հիման վրա, այնքան էլ չինտևելով վարժագրության դասական կանոններին: Նրա հերոսները հոգևոր տվյալ աստիճանի կամ աշխարհական միջավայրի համապատասխան դասերի ու խավերի վերացարկված հերոսներ չեն, այլ կենուամի մարդիկ: Իրենց հոգեկան ներքին ապրումներով: Ինչպես Մայիս Ավդալբեզյանն է գրում, «Իբ-

¹ Մ. Աքելյան, Երկեր, Բա. Դ, Երևան, 1970, էջ 408:

² Մ. Ավդալբեզյան, «Յայսմատուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, Երևան, 1982, էջ 82:

րև գեղարվեստական ստեղծագործություն Խլաթեցու ժողովածում, անշուշտ, ամենահարուստն է հայսմավորքային բոլոր խմբագրություններից մարդկային կերպարների, բոգերանական դրասերումների, դրամատիկ բախումների. լեզվառաջային ժողովրդաբանությունների առումով, բայց և ամենահետացածը բուն ժողովածուի արարողական բնույթից»³:

Նրա մոտ վկաներն ու մարտիրոսները դասական վարքերի ու վկայաբանությունների հերոսների Աման ի Ակզրանե չեն կանչված Քրիստոսի համար վկա դասալու, այլ Արամց վկայաբանությունն իսկ Կենդանի ընթացք է կյանքի և իրավիճակային հանգամանքներով է պայմանավորված, որն իմաշ-որ առումով ազգային ճակատագրի հետևանք է: Նրանք ոչ միայն հանուն Քրիստոսի էին զրիսմ իրենց կյանքը, այլև հանուն ազգային պահանջների, քանզի քրիստոնեությունն արդեն ազգային գաղափարախոսություն էր դարձել հայության համար, այսու Քրիստոսին ուրացող ոչ միայն իր դավանած կրոնից էր հրաժարվում, այլև իր ազգային պատկանելիությունից, որովհետև այս պարագային վերոիիշյալ հասկացությունները համարժեքության որակ էին ստանում:

Ահա այս նպատակով Գր. Խլաթեցին Հայսմավորքի առկա խմբագրությունները հարստացնում է ևս 100 վարքագրական միավորներով, որոնց մի մասը ընդօրինակող գրիշներից մեկի վկայությամբ «յիմքենէ նորոց վկայից սրբոց, որը եղեն ի մերումն ժամանակի»⁴:

Ընդհանուր առմամբ, իմաստ նշում է բանասեր Արտ. Մաթենոյանը, Գր. Խլաթեցու մոծումները Հայսմավորքում չորս կարգի են.

ա. Հայ միջնադարի ծնունդ նշանավոր անհատների վարքեր.

բ. Իրեն ժամանակակիցների կամ նոր վկաների վկայաբանություններ.

գ. Պատմական խորք ունեցող իրադարձությունների մկարագրություններ.

դ. Հայ և օտար հայութերի ճառեր՝ Ավիրված որևէ մի եկեղեցական տոմի կամ նշանավոր սրբի⁵:

Գր. Խլաթեցու Հայսմավորքում ընդգրկված վերջին շրջանի սրբախոսական ժամերի ստեղծագործությունների ուսումնասիրությունը վկայում է, որ Քրիստոսի համար մահատակվածների պարագային՝ Արա վկայաբանության գրությունն ու Հայսմավորքում դրա ներմուծումը ապահովող որևէ մի կանոնագիրական համակարգ չէր մշակված, այն Գր. Խլաթեցուց հետո, ըստ Արա պատվերի, յուրաքանչյուր ընդորիմակողի պարտքն էր համարվում:

Հայկական կյանքին դիմելը Արա ստեղծագործություններին մի յուրահատուկ երանք է հաղորդում ներդաշնակերպ այն քրիստոնեական վարդապետության սկզբումներին: Ազգայինն ու կրոնականը Արա ստեղծագործություններում անքա-

³ Նովմ տեղում:

⁴ Ա. Տ. Մարարյան, Գրիգոր Խլաթեցու պատմագրական նրկերը, ՊԲՀ, 1977, Խմ. 2, էջ 132:

⁵ Ա. Մաթենոյան, Գրիգոր Խլաթեցի (ամստիպ)

ժամելիորեն միահյուսված են իրար և զուտ ազգային կամ զուտ կրոնական չեն: Նրա ստեղծագործություններն առանձնանում են թէ՛ իրենց գեղարվեստական արտահայտչականությամբ, և թե՛ ազգային շեշտադրումներով, որը լուրջ վերլուծության է կարոտ: Հայսմավուրք ծողովածողի պարագային Գր. Խլաթեցու ծրագրերը չեն սահմանափակվում միայն միջնադարյան գրականության աշխարհիկ լսարանի ընդգրկմամբ, այլ նաև նաև եկեղեցա-արարողական կյանքում օրացուց մտցրեց մի շարք սրբերի վարքեր ու վկայաբանություններ, որոնցից մի մասը մինչ այդ հավանաբար գրի չեն առնվել, սակայն ժողովոյի հիշողության մեջ չեն մնացել բանավոր ավանդության ձևով, և մի զգալի մաս իր ժամանակաշրջանի հետ կապված պատմա-քաղաքական իրավիճակից ծնված համատակ-հերոսների կերպարներ էին, որոնց այլան վկայությունը դեռևս չէր ջնջվել իրենց տեսառաջուից: Նրանք մեզ չեն մերկայանում իբրև ուղղափառ ջատազովներ, որոնք համառորեն պալքարում էին հերետիկոսների և հերձվածողների դեմ. Օրանք պատկերվում են իրենց ժամանակի պատմական խորքի մեջ, իրենց առօրյա կենցաղում, և, ամենակարևորը, որ հրաշապատում դրվագներն իրենց տեղը զիջում են կյանքի իրական մկարագործություններին: Ամեն ինչ Օրա ստեղծագործություններում բնական հունով է ընթանում, ինչպես իրական կյանքում: Երբևէ չի անտեսվում ժամանակի պատմա-քաղաքական իրավիճակը, որը վկայաբանության հերոսին ազգային կյանքի շրջանակների մեջ է առնում թեղադրելով Օրա հետագա գործողությունները, վկայաբանության հերոսը առաջնորդվում է «եթե Բայ եմ, ապա քրիստոնյա» գաղափարականով: Գր. Խլաթեցին իր ստեղծագործություններում քրիստոնեությունը նաև ազգային հավատամք ու զրահ է դարձնում, Եղիշեի խոսքերով ասած «գոյն մորթոյ», դրանով իսկ պայմանավորելով վկաների կեցվածքն ընդդեմ ուրացում պահանջող այլադպավանների, որոնք ամեն կերպ շամում են զրկել Օրանց իրենց ազգային պատկանելիությունից՝ անպատկերացնելի կտտանքների ենթարկելով: Չատ հաճախ Օրա ստեղծագործություններում վկայաբանության հերոսները համեմատվում են իրենցից առաջ ապրած այն նշանավոր սրբերի հետ, որոնց համատակությունն ինքն ծառայել է քրիստոնեական վարդապետության ամրապնդմանը ազգերի և ժողովուրդների մեջ, ինչպես հանդիպում ենք Գր. Խարեկացու վարքում: «Եւ զնացեալ պատմեցին զիրաշն, որ եղեւ: Եւ Օռքա լուեցին ի չար խորհրդոցն եւ անուանեցին զնա երկրորդ Լուսաւորիչ եւ երրորդ Սքանչելագործ»⁶: Հատկապես համատակության դրվագներում են դրսկորվում հետինակի գեղագիտական ըմբռնումներ, գեղարվեստականությունն ավելի ցայտուն է արտացոլվում նպատակ հետապնդելով ազդել ընթերցողի կամ ունկնդրի հոգևոր զգացմունքների վրա, որի արդյունքում շատ հաճախ Օրանք վարքի կամ վկայաբանության հերոսի կերպարն աշխատում էին անձնավորել իրենց մեջ՝ ձգտելով նմանվել Օրան, նոյմիսկ ավելի մեծ նահատակությունների դիմելու զգացում էր արթնանում Օրանց մեջ, ինչպես եղավ իրենց

Գր. Խլաթեցու պարագային, որը չհեռանալով այն վաճքից, ուր մնում էր, նահատակության պասկն ընդունեց իր հերոսների նման: Դասական վարքագրությունից թեև որոշ չափով հետացած են Գր. Խլաթեցու և հետագա գրիչների կողմից Հայամապուր մերժուծված վարքերն ու վկայաբանությունները, սակայն դրանցում շարունակվում են սրբախոսական գրականությանը բնորոշ ավանդությունները: Գր. Խլաթեցու Հայամապուրը նաև մեծապես իր վրա է կրում ժամանակի գործոնի ազդեցությունը, որն իր արձագանքն է գտնել Արա ստեղծագործություններում, լեզվա-ոճական առումով անգամ իր արտահայտությունը գտնելով իր կողմից Հայամապուրը մուծված միավորների շարադրանքում, որն առանձնանում է լեզվի պարզությամբ և ժողովրդական երանգներով: Գր. Խլաթեցու լեզվի այս պարզության մասին Արա վարքագիրը գրում է. «Եւ զամենայն խորին եւ զանհասկանալի բան քերթեալ ենին ի միջոյ եւ պարզ եւ յստակ գրեաց զատմութիւնն սրբոց եւ զամենայն աստուածաշուն գրեան զեարգմանեալսն ի սրբոց թարգմանչացն կրկին յղկեաց եւ երաց զմիսու գրոց սրբոց, առ ի հասկանալ ամենայն ումեք»⁷: Այս իրողությունը մերտորեն իրար փոխկապակցված երկու հանգամանքներով է բացատրվում: Առաջին՝ Գր. Խլաթեցու բուն շարադրանքի պարզությամբ, որը պայմանավորված էր ժողովրդական մեծ լսարան ունենալու իր նախակաղդրմամբ, երկրորդ՝ այս պատմությունները վերցնելով ժողովրդական միջավայրի բանավոր պատմություններից, որոնցում սրբությամբ կենդանի էր պահվում նահատակների կուօծ չարչանքների հիշողությունը, վերջիններին գրավոր պահմանակ ժամանակ այս պատմությունների բանավոր-խոսակցական լեզվի ազդեցությունն է կրել: Մայր Արտոնի Զենոագրատամբ պահվող Գր. Խլաթեցու Հայամապուրը ԺԵ դարի երկու ձեռագրերի № 69 և № 74 հետագա շրջանի օրինակների մեջ համեմատությամբ պարզեցինք, որ հաջորդող գրիչները գրական վերախմբագրման են ենթարկել ժողովրդական այս շերտի մի մասը:

Գր. Խլաթեցին իր հերոսներին ներկայացնում է պատմական տվյալ ժամանակի շրջանակներում, ներոսի կյանքի հետագա ընթացքը պայմանավորող իրադարձությամբ, կամ իրադարձություններով սկսելով այդ գործերը, օրինակ, Հուսիկ երեցի որդի Ստեփանոսի վկայաբանությունում. «Ի թուականիս մեր հայոց ԶԾՀԳ եղել զալ զօրացն թաթրաց ի գերել զերկիրս Հայոց, եւ զերեալ զբազում ի զաւառէն Տոսպայ եւ Հորշտունեաց եւ դարձան ի տեղիս իրեանց: Եւ ընդ բազմացն զերեցաւ կինն Հուսիկս քահանային ի գեղջէն Արտամետայ եւ տարեալ ի Թարենք քաղաք շահատան վաճառեցին»⁸: Տեղին է վկայակոչել նաև հետագա շրջանի՝ արդեն հայոց նոր վկաներին նվիրված վկայաբանություններում առկա հատվածները, ցույց տալով, որ նոր շրջանի վկայաբանությունները հիմնականում սկսվում են այդ նահա-

⁷ Հայոց նոր վկաները, աշխատասիրությամբ Հ. Մանադյանի և Հ. Աճապյանի, Վաղարշապատ, 1903, էջ 267:

⁸ Ձեռ. № 74, թ. 237 Ա.ա:

տակությունը պայմանավորող իրադարձության հիշատակությամբ: Խճախես, օրինակ, Հիմար Վանեցու Վկայաբանությունում. «Յամի ՊԼԶ թվականին այր ոմն արեւաբրու և զազանաբարոյ ազգաւ թաթար, բազում հենի ել յարեւելից, ալլահէմ զօրօք դառն և դժար կերպարանօք ի Սմրդնդայ: Եւ եկեալ կալաւ զլորասան և զրոյր Պարսկաստան. եւ ի դուրս եկեալ տիրեաց բովանդակ տանս հայոց եւ մասնաւորաբար այլոց բազմաց: Ծառ վնաս արար և բազում ոճիրս գործեաց եւ աւեր աշխարհին անասեկի, զոր մարդ ընդ գրով ոչ կարէ արկանել: Ուր ընդդիմանային նմա եւ ոչ հնազանդէին, յորոց եւ մի էր ի բազմաց՝ Վան, ուր զբազումս կոտորեաց, եւ քան զԵՌ անձինս աւելի հայ եւ տաճիկ քարաւաչ արար»⁹: Որևէ մեկ նոր երևոյթ չի վրիպում Վարքագիրների տեսադաշտից և այս առումով արժեքավոր են դրանք նաև ազգագրական տեսամնյութից: Վերոիշյալ երևոյթը՝ ժամանակի արձագանքը, փոփոխվում է Հայամավուրքի ցամկացած ընդօրինակության հետո՝ կապված թե՝ գրչի աշխարհնկալումից, թե՝ միջավայրից և, վերջապես, ամենակարևորը՝ պատմական ժամանակաշրջանից: Ցամկացած ժամանակաշրջան իր հետ նոր հարցեր, նոր խնդիրներ և նոր ընկալումներ է բերում, որոնք չեն կարող չարտահայտվել տվյալ շրջանի մատենագրության տարրեր ժամբերում: Այս առումով Հայումավուրքը հսկայական նյութ է մատակարարում մեզ իր լայն ընդգրկումով, որն ինարկե ամեն անզամ անցնում է տվյալ խմբագիր գրչի մեկնաբանության բովով: Գ.ր. Խալթեցու Հայամավուրքն այն ժողովածուն էր, որը կենցաղավարելով հայ իրականության մեջ՝ անընդնեշ զարգանալու հնարավորություն ստացավ՝ հատկապես օգտվելով այն առավելությունից, որ, ի տարրերություն Ծարակնոցի և նմանաբնույթ այլ կանոնական ժողովածուների, որևէ սահմանափակում չէր ենթադրում, քանի որ ոչ թե տոնացուցային էր, այլ օրացուցային, այն կարծես իր ժողովորդի ժամանակագրությունը լիներ, որը նրա կյանքին համընթաց քայլում էր՝ արձանագրելով վերջինիս կյանքին առնչվող իրադարձությունները և ներկայացնելով դրանք ոչ թե ըստ տարիների ժամանակագրական ընթացքի, այլ կատարման ամիսների: Ընդօրինակող գրիչը խմբագրի լիիրավ իրավասություններով էր օժտված՝ ի հարկի այնտեղ Աերմուծելու որևէ մի նոր ստեղծագործություն, կամ հավելում կատարելու և կամ որևէ նոր լուսաբանություն տալու ինչ-որ ստուի վերաբերյալ: Հայումավուրքը հարուստ է նաև պատմական իրողությունների նկարագրություններով, որոնց բացատրությունները որքան ել որ ավանդական մեկնաբանության կմիջն են կրում իրենց վրա, այն է՝ «Վասն ծովացեալ մեղացն մերոց», այնուհանդերձ նաև թշնամու անգրթության և նրան սպասվող պատժի մասին են ակնարկում, այսինքն՝ սուկ միակողմանի չէ նրանց վերաբերմունքը, միայն պատժվողի մեղքերը չեն, որ պատճառ դարձան այդ հալածանքներին, այլև քաղաքական վիճակը, ազգային ճակատագիրն ու ներազգային անմիասնականությունը և այլն:

⁹ Նույն տեղում, թ. 306 Բ.թ:

Գր. Խլաթեցու Հայսմավորքում ընդգրկված նյութերի առատությունը պայմանավորված էր ոչ միայն տվյալ դրաստրամատ սկզբան-մշակութային վերերքով և եկեղեցա-դրամաբանական խնդիրների սրմամք, այլև «Մոնղոլ-թաթարական և մուսուլմանական արհավիրքների դարերում, երբ հայոց երկիրն ու դավանաքը ոտնակոյն էին լինում, վարք-վկայարանությունները կոչված էին զորավիճ լինելու համար հոգով ու մարմնով հավածական հայությանը»¹⁰:

Գր. Խլաթեցու Հայսմավորքը և հրա հետագա ընդօրինակությունները կարևորվում են նաև ազգային տունների ուսումնասիրության առումով, որը մեզ հնարավորություն է ընձեռում որոշակիորեն պարզելու եկեղեցա-ազգային որևէ տոնի անցած զարգացման ուղին՝ ընդուած միջն հիշյալ տոնի կանոնականացումը: Այսինքն՝ մի շարք տուններ, որոնց հիշատակությանը չենք հանդիպում Հայսմավորք ժողովածուի նախորդ խմբագրություններում, Գր. Խլաթեցու պարագային արդեն կիրառության մեջ են եկեղեցա-արարողական կյանքում: Հեղինակը նկատի ունի այն հանգամանքը, որ տունները միայն եկեղեցական բնույթ չունեն, այլև միտված են տվյալ ազգի կրոնական համախմբվածությունն ապահովելու, որը կարևոր նշանակություն ուներ ազգային հճանուրության պահպանման տեսանկյունից, ուստի իր ժողովածուն հարատացնում է ազգային-եկեղեցական կյանքում մեծ դեր խաղացած անհատներին և իրադարձություններին նվիրված ավելի ընդարձակ հիշատակություններով, որոնք, եթե գրավոր չափանիշներ, հավանաբար կմոռացվեին ժամանակի ընթացքում: Նա ազգային նկատելի ուղղվածություն հաղորդեց Հայսմավորք ժողովածուին՝ ժողովրդականացնելով այն: Վերոհիշյալ ազգային տոնների պարագան իր մերժին պայմանավորված էր ներազգային խնդիրներով: Նրանցում շատ հաճախ արտահայտվում են ազգի միասնությունը շնչոտի գաղափարներ, մի խոսքով դրանք ինչ-որ առումով հասարակական կյանքի թույլ կողմները քննադատող և ազգային միասնություն քարոզող գաղափարներ են: Գր. Խլաթեցին իր Հայսմավորքում չի շրջանցում որևէ հասարակական խնդիր, որը ինչ-որ առումով կարող է վնասել ներազգային միասնությանը: Նրա ուշադրության կենտրոնում միշտ հասարակությունն է, վերջինիս բարվողությամբ է պայմանավորված ազգի հետագա գոյատևումը, որը դրսնորվում է ազգային արժեքների ամիսաթար պահպանությամբ: Խնկ ազգային ամենամեծ արժեքը բովանդակված է գրանց կրոնական դավանության մեջ, որքան ամուր միմքերի վրա է խարսխված քրիստոնեությունը ազգից մերս, այնքան ապահով է տվյալ ժողովուրդը թէ՛ մշակութային, և թէ՛ ֆիզիկական ուժացումներից: Այս հանգամանքը ինչպես վաղ, այնպես էլ նորագույն շրջանի սրբախոսության մեջ ընդգծվում է հատկապես որևէ մի բնական աղեստի կամ ոչ քրիստոնյա ազգերի կողմից հարձակումների ու սրածումների ենթարկվելու պարագային: «Նրանց մեղքերի պատճառով Աստված մատնեց իրենց բարբարությունը»:

¹⁰ Սրբութի Պ. Հայրապետոյան, Հայոց հիմ և միջնադարյան գրականության պատմություն, Երևան, 1994, էջ 407:

ձեռքը» արտահայտությունը վերը հիշված պարագային կարմիր թելի նման երիզում է հայսմավուրբյան հիշատակարանային բնույթի ատեղծագործությունները: Սուաշին հալացրից եթե այն գուտ կրոնական մնականության ծնունդ է կամ, ասենք թե, այդպես է մինչև օրս Աերկայացված, ապա պետք է տեսնենք, որ Գրիգոր Խալթեցու մոտ կրոնականից բացի արդեն հասարակական հԱջեղություն է ձեռք բերել, որը քրիստոնեական կենցաղը բարոյական չափանիշ է դիտում տվյալ պարագային, երբ երկրում առողջ հասարակության կարիքն էր զգացվում ազգային ավանդների պաշտպանության համար: Մի հանգամանք, որը մշտապես ազգային հճռուրուցնության գոյատևմանն է նպաստել քաղաքական ասպարեզում ծավալված այն թոհուրութերի շրջանում, երբ տարագիր հայությունը գաղութային կյանքով է ապրել Հայաստանից դուրս կամ ենթակա է եղել օտարեների ֆիզիկական բնաշնչման վտանգին: Հայ ժողովուրդն իր հճռուրուցնությունը կարող է պարագանել միայն շնորհիվ հոգևոր արժեքների իր կյանքում շարունակական ներառման: Այս պարագային է միայն խուսափում նա ժամանակի քաղաքական ու մշակութային գերակա ոլորտների ազդեցություններից, որոնց Աերգործության առկայությունը հնարավոր վտանգների ծնունդ կարող էր հանդիսանալ՝ խարիսկերով ազգային գործոնի հանգամանքը ազգային մտածողությունից Աերս: Քրիստոնեությունն այս պարագային նպաստում է հայ ժողովուրդի ազգային ներքին դիմադրողականության բարձրացմանը: Սրբերը ազգային ներուներ են նաև, նրանց գործունեությունը չի սահմանափակվում միայն քրիստոնեությունը նշմարիտ կրոն հոչակելուց, որն ի դեպ առկա է նախաեղիշեական շրջանի վկայաբանություններում, նրանք այդ քայլով իրենց ազգային հճռությունն են նաև հաստատում ժամանակի պատմա-քաղաքական ամենակուլ հորձանուտին չտրվելով: Նման անձնավորությունների սրբացումը Գր. Խլաթեցու մոտ նախ նպատակ է հետապնդել ազգային ավանդներին հավատարիմ մնալու գաղափարի գիտակցումը բորբոքել մեր ժողովուրդի մեջ:

Այսպիսով, Գր. Խլաթեցու Հայսմավուրքը ճիշտ այն ժողովածուն էր, որի պահնջը զգացվում էր տվյալ ժամանակաշրջանում և ավելին՝ մինչև օրս այն իր ընդգրկումների ծավալով հայագիտության մեջ կարևոր սկզբանադրյուր է դիտվում: Այն հավասարապես քննության հյուր է տալիս և՝ գրականագետին, և՝ բանաերին, և՝ պատմաբանին: Գր. Խլաթեցու Հայսմավուրքն իր բովանդակային կառուցվածքով տարբերվում է այլ Եկեղեցիներում գործածության մեջ եղող համանուն ժողովածուներից: Այս պարագան բացատրվում է նաև նրանով, որ վերջինն միայն Եկեղեցա-արարողական շրջանակների համար չէր նախատեսել իր ժողովածուն, այլև արտանեկանացական ընթերցանության ոլորտներում գործածության մեջ դնելու միտում է հետապնդել, որն իր պարագային հաջողությամբ է պսակվել:

Գր. Խլաթեցու ստեղծագործություններում առկա են գեղարվեստական փոքր արձակի տարրերը, որոնք վկայաբանական բնույթի ստեղծագործություններին բավականին գեղարվեստական առօրեականություն են հաղորդում բնական կենցա-

դային կենդանի պատկերմերով մկարագրելով դեպքերն ու իրադարձությունները, որոնցում տեղ են գտնել նաև մարդկային զգացումներն ու հուզումները, որոնք իրենց կենցաղայնությամբ կարելի է ասել, որ նորություն են սրբախտության մեջ առնասարակ: Այստեղ մեր աշքի առջև վեր են հասնում հայ միջնադարյան գեղջուկի, արթևատավորի և, Վերջապես, հայ ընտանիքի ծնողի կերպարները: Այս առումով հատկանշական է Հուսկի երեցի դրդի Ստեփանոսի ծնողների մտահոգությունը, որը բավականին իրապաշտորնեն է Անդրկայացրել Գր. Խլաթեցին՝ զերծ մնալով որևէ կրոնական միջամտությունից, այլ հակառակը, օս մկարագրում է ամեն ինչ այնպես, ինչպես իրականում այն եղել է: Մարդկային կենդանի ապրումներով ու զգացումներով է Գր. Խլաթեցին Անդրկայացնում ծնողների մտահոգությունը իրենց զավակի ուշամալու համար, որն առաջին հայացքից կարող է ոչ միայն հավատքի անկատարություն համարվել, այլ հակառակը՝ նա այդպիսով պաելի իրական կերպով է պատկերում այն միջավայրը, որում զարգանում են գործողությունները, և որը բնավ չի նաևնացնում երեսուի իդեալական կերպարը: Գր. Խլաթեցու ստեղծած պատկերներն իրենց առօրեականությամբ առավել ընկալելի են դարձնում տվյալ վարքը կամ վկայաբանությունը ժողովրդական լայն լսարանի համար: Մեր ասածն ապացուցելու համար մի հատված մեջքերնենք վերը հիշատակված սրբի վարքից: «Եւ երիցկիճ բացեալ ենինան պեն և արար խմոր և հասուցեալ զիացն ասաց երիցում. «Ել տես զտղայն, և ասա, որ գայ հաց ուտէ: Զի կարծին առեալ նոցա այնպէս զիտացին, թէ տղաս գեղջին ի խաղալ է և կամ թէ աշխատեալ է և մնջեալ ուրեք յորմի տակ կամ ի տանիս: Եւ եղեալ տէր Յուսիկ շրջեցաւ ընդ գեօնն բոլոր և ոչ եցիտ: Եւ մայրն ըստ մայրական գթոյն տագնապէր մնորն, թէ զինչ եղեւ տղայն: Եւ յերեկոյն հասեալ առաւել տագնապէին ծնորն, զի մինչ ի յայն մնային, թէ ուրեիցէ յերեկոյն հասեալ ի տուն գայցէ: Եւ զգիշերն ամենայն անքուն կացեալ հոգային ծնորքն և մանաւանդ մայրն աղէկիզեալ լայր դառնապէս, որպէս և է սովորութիւն մօր հոգալ զգաւակն, վայ թէ քաղցեալ է և եղուկ թէ ծարակի է, ո՞ն թէ ինչ պատահեցաւ նմա և կամ ուր է...»¹¹:

Նրա ժողովածուում հատկանշական է նաև այն հանգամանքը, որ նեղինակը ոչ միայն վարքին երբեւ սահմաններ չի դրել՝ ամբողջական համարելով իր աշխատանքը, այլև նետագա գրիշներին է պատվիրել նույն ամել: Սա մի հանգամանք է, որը արժանի գնահատության կարիք ունի, և որին գրիշները նետնել են ամենայն բարեխանությամբ, ավելացնելով և արձանագրելով նաև իրենց օրերում տեղի ունեցած դեպքերը: Ինչպես 1536 թվականին Գաբրիել գրիշն է իր ընդօրինակած Հայամավորքի հիշատակարանում գրում, «Գրեցաւ ի լաւ և լընտիր օրինակի, որ ասի Ծերենց՝ և այլ աւելի քան զնորայն, զի շատ նոր վկայը աստ գրեցան՝ և հարստացաւ զիրս այս, քան զնորայն»¹²: Այս քայլով Գր. Խլաթեցին շեշտում է քրիստո-

¹¹ Ձեռ. № 74, թ. 237Բ-238Ա:

¹² Ս. 8. Մարարյան, Գրիգոր Խլաթեցու պատմագրական երկերը, ՊԲՀ, 1977, էջ 133:

Աեական Եկեղեցու Կենդանությունը, որը քանի դեռ երկրի վրա գոյություն ունի՝ պատրաստ է սրբեր տալու սրբերն են պայմանավորում քրիստոնեական Եկեղեցու գոյությունը։ Այս Եկեղեցին, որը դադարել է սրբեր տալուց, այլև կորցրել է իր կենտրոնակությունը։ Սրբերն այն անձնավորություններն են, որոնք երկրի վրա միջնորդ են մարդկանց համար Աստծու առաջ, իսկ երկնքում բարեխոս։ Մի դեպքում ընդհանրական բնույթ է ստանում նրանց ներդը, քանզի նրանք այն մնացորդացն են, որոնք պահում են երկիրը կործանումից, նրանք իրենց կյանքով միջնորդ են համայնքանում համայնք մարդկության համար։ «Նման մարդկանց բարեխոսությամբ է, որ Աստված աշխարհին շենություն է պարգևում, քանզի աստվածային գույք նրանց վրա իշխանություն ողորմություն և քավություն է շնորհում աշխարհին... Նրանք իրենց կյանքը վաճառքի հանեցին իրենց տանջանքի մատնողների համար, մեծացան անանց հարաստությամբ և աշխարհի շինությունը կանգուն, անվտար ու անշարժ են պահում իրենց հավատքի նավերի վրա»¹³, իսկ երկրորդ պարագային նրանք Աստծու առաջ անհատների փրկության համար են բարեխոսում։ «Կյանք են նրանք ու փրկություն նրանց համար, որոնք մեղքերով են աղքատացած»¹⁴։ Սրբոց բարեխոսությունը փրկագործության խորհրդի անքաժանելի մասն է համարվում քրիստոնեական վարդապետության մեջ։

Այսպիսով Գր. Խլաթեցու Հայամավուրքը եկեղեցական տոնացուցային իր ձևի մեջ կենդանիորեն արձագանքում է ԺԲ դարից հայ սրբախոսական գրականության մեջ զնալով ազդեցիկ դարձող՝ «ժողովրդական ուղղությունը»¹⁵: Այս ուղղությունը պայմանավորված էր թե՛ գրականության զարգացման ընդհանուր միտումով՝ համաքայլ ընթանան նոր շրջանի աստիճանաբար փոխվող մտածողությանը, և թե՛ արտաքին ազդակներով: Նախորդ դարերը եթեն հայկական պետականության կորուստյան ու հայ նախարարական տների գլխատման դարերն էին, ապա սկսյալ ԺԲ դարից արդեն վտանգվում է հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը, և հարցականի տակ է դրվում իր իսկ հայրենիքում ապրելը, մեծ ծավալ է ստանում արտագաղթը, ուժեղամում են հալածանքները հավատի դեմ և հավատափոխության պահանջները:

Այս բռնությունները ընդլայնում են թէ՛ Զահատակվողների շրջանակը, և թէ՛ նրանց մասին գորողների, կրկնակիորեն ժողովրդականացնելով ժամը, եթր վկայաբառության հերոս կարող էր դառնալ հավատուրացնության պահանջը մերժելով Զահատակության պսակն ընդունած ամեն մի շինական, ի տարբերություն Զախորդ շրջամի Վարքերի հերոսների: Այսինքն վերանում է վարքի հերոսի՝ Զահատակի և ժողովրդի միջև եղած դասային, հոգևոր և կրթական անջրածոր: Նույն կերպ այս

¹³ Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 15:

14 Նովա տեղում, էջ 13:

¹⁵ "Армянские жития и мученичество V-XVII вв.", Ереван, 1994 г., перевод с древнеармянского, вст упитеельные статьи и примечания К. С. Тер-Давт ян, ст р. 18.

նահատակությունների պատմությունները սերունդներին գրավոր ավանդում էին դասական մատենագիրներից բացի նաև նահատակության ականատեսները, ժամանակագիրները և հիշատակարանագիրները՝ նկատվիրեն պարզեցնելով վարքագործության ընդունված կանոնը:

Ստեղծված այս պայմաններում ժողովրդականանում է և սրբախոսական գրականության լեզուն, որը ևս իր լավագույն արտահայտությունն է գտնել Հայսմավորքի Գր. Խլաթեցու խմբագրությունում: Լեզվական այս պարզությունը նույնպես միայն գրականության աշխարհականացման ընդհանուր միտումով չէր պայմանավորված, այլև այս ժամռով ստեղծվող գործերի և դրանք ներառած Գր. Խլաթեցու Հայսմավորքի ընդհանուր գործառական նշանակությամբ, եթե իր բուն ծիսապարուղական գործառութից բացի այն նաև գաղափարական մի զենք է դառնում, որը գոտևորելու ու զրահավորելու էր ժամանակի ընթերցողներին օտար նկանողների դեմ համուն ազգային-հոգևոր ինքնության մղվող, Արեւյանի բնորոշմամբ, եկեղեցա-քաղաքական մաքառման ընթացքում:



ՀԱՍՄԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

ՍԿԵՎՈԱՅԻ ՎԱՆՔԸ 12-14-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ ԵՎ ՄԵԶ ՀԱՍԱՌ ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հայ մշակույթի և գիտական մտքի պատմության մեջ իր նշանակալի տեղը ունի Կիլիկյան Սկևոռա վանքը, որը կառուցել է լամբրոնյան իշխան Օշին Բ-ն 12-րդ դարի 40-ական թվականներին¹: Քիչ են տեղեկությունները վանքի շինության, ճարտարապետական ոճի, բարեգարդման մասին: Աղքատիկ են նաև հիշատակարանների, ժամանակակիցների հաղորդումները: Վանքի անունը առաջին անգամ հանդիպում ենք Գրիգոր Միհենցու 1173-ին Սկևոյում Ն. Լամբրոնացու պատվերով օրինակած Ավետարանի հիշատակարանում: «իր սեպական անապատն Սկեռով անուն կոչեցեալ»²: Աղքատիցները վկայում են, որ վանքը գտնվել է Կիլիկիայի նշանավոր, «անմատուց», ժամանակին նաև ուզմական նշանակություն ունեցող հայաբնակ Լամբրոն քերդի արևելյան կողմում, որից անջատված է եղել միայն ձորով³: Սկևոայի վանքը, ինչպես վկայում են հիշատակարանները, եղել է քերդի աղոթավայրը և Լամբրոնի իշխանների դամբարանը: «Ինգստարան նախնեաց իրեանց» կամ «Էտապամատուն ազգատոհմի իրեանց»⁴: Բանասիրության մեջ կան այն ենթադրությունները, ըստ որի վանքը գոյություն է ունեցել նախքան Օշին Ա.-ի Լամբրոնին տիրելը, և որ այն եղել է հունական ոճի կառուց: Օշին իշխանը վանքում հաստատվելուց հետո այն վերաշիմել է, որի հետևանքով վանքը կորցրել է իր ոճը, այսինքն՝ հայկականացվել⁵:

¹ Վանքի կառուցման առավել ճշգրիտ ժամանակը հայտնի չէ: Տեր-Ղազարյան, Հայկական Կիլիկյա, 1946 թ., Ամբիլիաս, էջ 47:

² Գ. Սրվանձնայան, Թորոս Աղքար Բ, էջ 442-444: Հավանաբար 1154 թ. Սկևոյում գրված Մաշտոցյան Մատանադարանի (ՄՄ) № 832 ձեռագիր գրիչն է Գեորգ Սկևոյան, որը 1192-ին օրինակել է Վարդ հարանց: Ն. Վ. Մովսեսի, «Սիոն», 1949 թ., Հայկական վանքեր, էջ 183-186:

³ Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, 1961 թ., էջ 111: Տեր-Ղազարյան, Աշվ. աշխ., էջ 18: ՄՄ 1526 ձևու:

⁴ Ղ. Ալիշան, Սիոնամ, Վենտիկ, 1885 թ., էջ 97:

⁵ Գ. Զարքիանայլյան, Պատմություն հայ դպրության, 1897թ., Վենտիկ, էջ 706: Հ. Ռույան, Կիլիկիայի վանքերը, 1957 թ., Վիճննան, էջ 9: Տեր-Ղազարյան, Աշվ. աշխ., էջ 81: Ղ. Ալիշան, Սիոնամ, էջ 71:

Սկսուայի վաճքի գրական մշակութային կյանքը ունեցել է ծաղկման երկու շրջան. առաջինն ընդգրկում է 12-րդ դարի վերջից մինչև 13-րդ դարի սկիզբը և կապվում է վաճքի առաջնորդ, մատենագիր, քաղաքական և պետական գործիչ Ներսես Լամբրոնացու գործունեության հետ, իսկ երկրորդ շրջանը՝ 13-րդ դարի կեսերը, և կապվում Գևորգ Սկսուացի բարունապետի գիտական, գրական գործունեության հետ:

Վաճքը ժամանակին ճանաչվել է իր հարուստ մատենադարանով, որը հիմնադրել է Ն. Լամբրոնացին: Մատենադարանի հիմն գրչագրերը համարվել են ժամանակին «ավ» և «ընտիր» օրինակներ, և գյուղներից շատերը հատուկ ենկա են Սկսուացիակերպով ձեռագրեր ընդորինակել «ի լաւ և լընտիր արինակէ... որ է ընտրեալ եւ համեալ բանի եւ բառի ի հոչակաւոր անապատէն, որ է Սկսուացի կոչեն»⁶:

Ն. Լամբրոնացին վաճքում հիմնադրել է նաև կանոնավոր դպրոց: Սկսուայի վաճքում կրթվել և աշխատել են հայունի մատենագիրներ Գրիգոր Սկսուացին, Միհիթար Սկսուացին, Գևորգ Լամբրոնացին և ուրիշներ, տաղանդավոր նկարիչներ Գրիգոր Միհենցին, Վարդանը, Կոստանդինը, Հովհաննի Մաղկողը և ուրիշներ, երաժիշտներ Ստեփանոս և Գրիգոր քահանաները, Գրիգոր Չորուկը, բազմաթիվ հմուտ գրիշներ՝ ՍամՎելը, Խաչատուրը, Ստեփանոս քահանան, Ստեփանոս Գովաներիցներ և ուրիշներ, որոնց ձեռագրական ժառանգության մեջ, բացի սովորական պատվերներից, համեյապուն ենք նաև արքունական պատվերների: Պատվիրատուններից շատերը փափագել են, որ ձեռագրերը ընդորինակվեն հատկապես Սկսուայի գրիշների ձեռքով. «զի ի ձեռն գրչացն, որ անդ կատարեացեն զփափագն իրեացն գրութեամբ»⁷:

Դպրոցում գիտական, մշակութային կյանքի աշխատացմանը նպաստել են նաև Ն. Լամբրոնացուն հաջորդող մենաստանի առաջնորդները՝ Վարդան Եպիսկոպոսը (1199), Գրիգոր Սկսուացին (1205), Միհիթար Վարդապետ Սկսուացին (1254-74), Միհաս առաջնորդը (1285), տեր Սիմեոնը (1270-ական թթ.), Կոստանդին Պեհեսնացի Եպիսկոպոսը (1314) և ուրիշներ, վաճքի ուսուցչապետները, որոնցից հիշատակվում են ժամանակի «երջանիկ» Գրիգոր և Բասիլ քահանաները, Հովհաննես և Բարդուղիմեոս Վարդապետները⁸:

Նշանակալի է Սկսուայի դպրոցի դերը հատկապես կիլիկյան հայկական մանրամակարչության պատմության մեջ, որը 12-րդ դարի 2-րդ կեսից համարվել է կիլիկյան մանրամակարչության հիմնական, «առաջատար» կենտրոնը և որտեղ «ընդ դոպրութեամ եւ յարուեատ գրչութեամ եւ նկարագարութեամ խնամով մարզէին ի վա-

⁶ Բիբամադիոն, 1902 թ., թ. 1725:

⁷ ՄՄ 5784 ձեռ., էջ 355ա:

⁸ ՄՄ 10509 ձեռ., էջ 426ա, թ:

նորայիր»⁹: Սկսույում ստեղծված բարձրարվեստ ձեռագիր հուշարձաններում է, որ մշակվում և ձևափորվում են կիլիկյան մանրամկարչության ինքնուրույն ոճի հիմնական առանձնահատկությունները: Սկսույի գրքարվեստը բնութագործ հուշարձանները ընդգծվում են նրանությամբ, ճշգրտությամբ, նկարիչների կատարողական վարպետությամբ, գումարի հմուտ ընտրությամբ և տրամադրությամբ, պատկերների կենդանությամբ¹⁰:

Մանրամկարչական արվեստը ավանդելու նպատակով Սկսուա են հրավիրվել կիլիկյան վանքերից հանրածանոթ նկարիչներ, գրիչներ: Գրչատանն են աշխատել Հոռմկլայի դպրոցի գրիչ և նկարիչ Գրիգոր Արևեցին, Դրազարկի դպրոցի ամենաականավոր նկարիչ, ծաղկող Սարգիր Պիծակն ու իր հայրը՝ Գրիգոր Պիծակը: Ենթադրվում է, որ Սկսույում է իր գործունեությունը սկսել Գլանորի դպրոցի գրիչ, նկարիչ, քանդակագործ և ճարտարապետ Մոմիկը¹¹ և ուրիշներ:

Սկսույի վանքը համարվել է նաև կիլիկյան միջնադարյան բժշկական կենտրոններից: Դպրոցում բժշկության զարգացման համար կարևոր դեր է կատարել Ն. Լամբրոնացին, որի մատենագրության մեջ հիշվում է «Մարդակազմություն» աշխատությունը, որը, ցավոք, մեզ չի հասել: Այս հանգամանքը թեղադրում է, որ դպրոցում դասավանդվել է նաև մարդակազմություն: Սկսույի բժշկական ժառանգությունից քիչ քան է պահպանվել: Հայտնի է, որ վանքի մատենադարանում է պահվել Ամիկի դպրոցի գլուխգործոցի՝ «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» կիլիկյան խըմբագրությունը, որի առաջին խմբագրողն ու ստացողը հիշատակվում է Ն. Լամբրոնացու եղբայրը՝ Հեթում Սևաստոսը: Հավանաբար այս գլուխգործից ժամանակին կատարվել են շատ օրինակումներ¹²:

13-րդ դարավերջին Սկսույի վանքում է ստեղծվել արծաթագործության լավագույն, գեղեցիկ նմուշներից մեկը, որը կիրառական արվեստի պատմության մեջ հայտնի է «Սկսույի մասնատությը» անվանումով: Իր պատմական նշանակությամբ, բարդ, խորիմաստ, արտահայտիչ մարմնավորմամբ և մարդկային պատկերներով, հարուստ մակագրություններով, նախշամոտիվներով և կատարողական մեծ վարպետությամբ այս հուշարձանը բարձր է գնահատվել հայ արծաթագործության

⁹ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 98:

¹⁰ Լ. Ազգարյան, կիլիկյան հայկական մանրամկարչությունը 12-13-րդ դարերում, 1964 թ., Երևան, էջ 71:

¹¹ Ա. Ավետիսյան, Գլանորի մանրամկարչական դպրոցը, 1971 թ., Երևան, էջ 50-55: Հմտ. Կ. Մաթուսյան, Կեռան թագուհու և Հեթում արքայորդու Ավետարանը, «Գիտություն և տեխնիկա», 1991 թ., Բ. 3, էջ 46-49:

¹² Ուսումնահրություններից պարզվել է, որ Սկսույի գրչատանն է գրվել ՄՄ 416 ձեռագիրը: Ստ. Վարդապետյան, Նոր տվյալներ միջնադարյան հայկական կենտրոնների մասին, Բանքեր Երևանի համալսարանի, 1996 թ., էջ 33-37:

պատմության մեջ՝ համարվելով հայկական ուկերչական արվեստի զուխգործոց մերից, դրվագարվեստում եղակի հմուշներից: Այս մասմատուիի գոյությունը թույլ է տալիս արվեստագետներին վաճռը համարել կիլիկյան Հայաստանի ուկերչության և արծաթագործության կենտրոններից¹³:

Սկսուայի գրչատանը աշխատել են ան երաժշտության հմուտ մասմագետներ և ուսուցիչներ: Այս փաստի վկայութունն է Սկսուայում օրինակված երաժշտական տեսրերը, որոնց գոյությունը թույլ է տալիս Սկսուան համարել մանրուսաման կենտրոն¹⁴:

Սկսուայի դպրոցում է տեսականորեն ամբողջացվել գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը: Հայոց լեզվի գրադարձության, վանկատման, տողադրձի, կետադրության, առողանության, ուղղագրության սկզբունքներն ու դրույթները մշակվել և կանոնագրվել են Գևորգ Սկսուայի ուղղունապետի գրչության արվեստի տեսությանը նվիրված երեք աշխատություններում¹⁵:

Պատմությունը փաստում է, որ յամբրոնյան Սկսուան որպես հոգևոր-մշակութային կետրոն դադարել է գոյություն ունենալուց 13-րդ դարի վերջներին: Սամվել Անեցու շարունակող գրում է, թե 1275-ին «Հոռոմոց թուրք այրեցին զիշակաւոր ուխտն մենաստանի Սկսուան»¹⁶: Ղ. Ալիշանը այս դեպքը թվագրում է 1270-80-ական թվականներին¹⁷: Ըստ հայտնի գրչագիր Ստեփանոս Գումերիցանցի, վերոհիշյալ դեպքերը կատարվել են 1300-ին: 1310-ին օրինակած Շառընտիրի հիշատակարանում գրիչը գրում է. «Աստ գրեցաւ ի թուականիս ԶԽԹ ի դառն ժամանակիս, քանզի զԼամբրոնին քաղաքն եւ շրջաբնակն այրեցին մահմետականքն, եւ մեր մազապուրծ հազիւ հազ կարեցաք զերծանել»¹⁸: Սկսուայում գրված և մեզ հասած վերջին ձեռագիրը թվագրված է 1349-ին: Ինչպես երևում է ձեռագրի հիշա-

¹³ Ա. Միքոյան, Սկսուայի մասմատուի, Նյու Յորք, 1993 թ.: Ա. Կակովկին, Հայ արվեստի հշանակության հուչարձանը, Բ.Ե.Հ., 1979 թ., Բ.3:

¹⁴ Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941 թ., էջ 105: Խազագործության ուսումներին և տաղաչափության արվեստի գիտակ է եղավ Գևորգ Սկսուացին. «Խլկու օրինակն է ի Օսպականացն, զոր մեծ վարդապետն Գևորգ ուղղեաց, այն որ զեսայի Մարգարէն մեկնեաց ի խաղորյ Հերում թագաւորին ի Սիս... զի արմեստն առողանութեան խաղոնեալ լիցի ի յնզան, որպէս մոյն Խլոյն օրինակն է, զոր սահմանեաց վարդապետն Գևորգ», Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 105-6:

¹⁵ Գ. Զարուկիան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հիմ և միջնադարյան Հայաստանում, 1954 թ., Երևան, էջ 239-43: Լ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, 1962 թ., Երևան, էջ 99-171:

¹⁶ Գ. Հովսեփյան, Հիշանեակարաններ, 1951 թ., Ագրիլիս, էջ 527:

¹⁷ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 107:

¹⁸ Ն. Պողարյան, Ցուցանություններ, 1977 թ., էջ 276-77:

տակարանից, «աճճարի ժամանակները» շարունակվել են մինչև 14-րդ դարի 40-ական թվականները¹⁹:

Սկևոր վաճքից մեզ հասած գրչագրական ժառանգությունը մոտ 75 գրչագիր է, որոնք պահպատ են տարբեր մատենադարաններում: Մաշտոցյան Մատենադարանում դրանց քանակը 27 է: Ձեռագրական քննությունից պարզվեց սկևորացի գրիչների 47, մանրանկարիչների 10, երաժշտների 5 անուն: Ձեռագրերն ունեն տարբեր բովանդակություն՝ Աստվածաշունչ, Ավետարան, Ծաշոց, Մանրուստունք, թշխական, մեկնողական գործեր, Սահմանադրություն, Մաշտոց, Վարք պրոռոց, Շարական:

Սկևորի գրչատան մատենագրությունը կազմված է հետևյալ սկզբունքներով. ժամանակագրական կարգով ներկայացնում ենք սկևորացի գրիչներին և հեղինակներին²⁰. Գրչի անվան կողքին բերվում են գրչության վայրը, թվականը, բովանդակությունը, այն վայրը, որտեղ պահպատ է ձեռագրիը, կամ այն աղբյուրը, որտեղից վերցրել ենք տվյալները: Եթեն գրչության վայրը հիշատակված չէ, սակայն ենթադրվում է, ուստի այն բերվում է հարցականուն: Նույն սկզբունքով ներկայացվում է սկևորացի մանրանկարիչների անվանացանկը:

Սկևորացի մանրանկարիչներ, մատենագրություն

Գրիգոր Միհնեցի²¹

¹⁹ ՄՄ 7157 ձեռ.:

²⁰ Սկևորացի հեղինակներից Գրիգոր Սկևորացու, Միհիթար Սկևորացու, Գեորգ Լամբրոնացու գրչությամբ մեզ ձեռագիր չի հասել, սակայն ենթադրվում է, որ նրանց գործերը գրվել են Սկևորի վաճքուն: Այս պատճենով բերվում են միայն հետազոտական մեջ ավանդված գործերի անվանումները.

Գրիգոր Սկևորացի, «Նիկիայի արքեպիսկոպոս Յովհաննեսի բուտիթ», «Բան գովեստի պատմագրաբար յաղագ ծննդեան, սմննդեան, քաղաքավարութեան և վերափոխման ամենասուրբ կուտիմ», «Ներքողեան ի սուրբ Լամբրոնացին», «Պատմութիւն Վարուց սրբոյն Գրիգորի Լուսատորչի», «Տէր ո՞յ յաւատաց», «Վարք Գրիգորի Նարեկացւոյն», Եւազի «Լուսատոր պատերազմ» երկի մեկնությունը (Վերագրվում է): «Արեգակն արդարութեան»:

Միհիթար Սկևորացի, «Պատասխանից յաղագս Բոնապատութեան երկուտասան առաքելոցն», «Միհիթարաց վարդապետի, թէ զիմ է պատճառ մարդեղութեան բամին Աստուծոյ», «Միհիթար Սկևորացոյ Վասն Կոստանդնուպալսոյ առանձինն որ է յատու յունաց»:

Գեորգ Լամբրոնացի, «Մեկնութիւն գործք առաքելոց», «Մեկնութիւն մարզարէւթեան Եսայեար», «Աւտուրան», «Աստուծածաշունչ», «Տօնացոյց», «Արունեստ գրչութեան»: Վերագրվում են զանձեր, տաղեր, քարոզմեր:

²¹ Տե՛ս մատենագրության մեջ: Գր. Միհնեցուն է վերագրվում ՄՄ 311 ձեռագրում պահպանված Մարկոս ավետարանի Ակարը և Մարկոսի ու Ղոկասի ավետարանառաջները, Լ. Խաչիկյան, Ե-ԺԲ դդ. հիշ., 1988 թ., Երևան, էջ 208:

Կոստանդին

Սկևորի վաճք, 1190 թ., «Սաղմոսաց մեկնությունը»
Ն. Լամբրոնացու, Ղ. Ալիշան, Սիսուան, Էջ 98-99
Սկևորի վաճք, 1193 թ., Ավետարան, Սարգիսյան,
Ցուցակ, Էջ 557-559

Վարդան

Զեռագիր չի հասել, մասնակցել է Գր. Միհնեցու 1173
և 1174 թթ. Ավետարան և Հռոմկայում օրինակած
Ավետարամների մկարազարդմանը

Գրիգոր սարկավագ

Սկևորի վաճք, 1218 թ., Ավետարան, Նոր Ջուղա 25,
Ավետիսյան, Ցուցակ, Էջ 38-41

Օգսեն²²

Սկևորի վաճք, 1263 թ., Ավետարան, ՄՄ 8590

Հովհաննես Մամբրումացի

Սկևորի վաճք, 1273 թ., Ավետարան, «Բազմավեպ»,
1968 թ., Էջ 116-118

Մատենացի

Միհն Ավետարի վաճք, 1293 թ., Ավետարան, ՄՄ 5784

Մատենացի

Սկևորի վաճք, 1296 թ., Ավետարան, Ոսկյան,

Սահման

Կիլիկիայի վաճքեղոր, 1957 թ., Վիեննա, Էջ 83

Գևորգ Մամբրումացի²³

1349 թ., Մանրուսում, ՄՄ 7157

Մատենագրություն

1. Ներսես Լամբրոնացի

Սկևորի վաճք, 1173 թ., Ավետարան, Վարք սրբոց առաջ Աստուծոյ Գրիգորի Նարեկացոյ, ՄՄ 1568:

Սկևորի վաճք, 1173 թ., Գիրք պարապմանց Կիլիկիայի Աղեքսանդրացու, ՄՄ 3276:

2. Բասիլ

Սկևորի վաճք, 1175 թ., Բիշառակվում է, Ե-ԺԲ դր. Բիշ., Էջ 218: Ալիշան, Սիսուան,
Էջ 87:

3. Գրիգոր Միհնեցի

²² Այս մկարիչը նույնացվում է 1434-56 թթ. Կաֆայում աշխատած Օգսենի գրչի և ծաղկողի նետ. Ա. Գևորգյան, Հայ մամրամկարիչներ, Մատենագրություն 9-14-րդ դդ., 1998 թ., Կամիրն, Էջ 746:

²³ Մովսես Երզմկացու վկացությամբ Գ. Ավետարան «Գեղազարդ շքով մկարել է Աստուածաշում»,
զոր տեսողաց և վայելողացն յայտնի է», Ղ. Ալիշան, Հայապատում, Էջ 504:

Սկևուայի վանք, 1173 թ., Ավետարան, Գ. Սրբանձոյան, Թորոս Աղբար Բ, էջ 442-444:

Սկևուայի վանք, 1173 թ., Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության», ՄՄ 1568: Սկևուայի վանք, 1198 թ., Սկևուայի Ավետարանը, Ակիմյան, «Սկևուայի Ավետարանը», «Հանդես ամսօրյա», 1930 թ., էջ 6-8:

Սկևուայի վանք, 1215 թ., Ավետարան, Նոր Զուղա, Տեր-Ավետիսյան, Ցուցակ, էջ 37 (սկզբնագրել է):

Սկևուայի վանք, 1218 թ., Ավետարան, Ն. Զուղա, Տեր-Ավետիսյան, Ցուցակ, էջ 39 (սկզբնագրել է) ²⁴:

4. Կոստանդին (մականունը Կոշիկ)

Սկևուայի վանք, 1193 թ., Վեմետիկ 125, Սարգիսյան, Ցուցակ, էջ 557-559:

5. ՍամՎել (Ներսես Լամբրոնացու աշակերտ)

Սկևուայի վանք, 1190 թ., Ներսես Լամբրոնացու «Սաղմոսի մեկնութիւն», և «Պատմութիւն վարուց Ներսիսի եպիսկոպոսի՛ Երգոց սաղմոսիս քննողի», ՄՄ 1526 :

6. Գեորգ Սկևուացի

Սկևուայի վանք, 1154 թ., Ծաշոց, ՄՄ 832:

Սկևուայի վանք, 1192 թ., Վարք Բարանց, Ե-ԺԲ դդ. Բիշ., էջ 267-268:

7. Գրիշ անանու

Սկևուայի վանք, 1197 թ., Մեկնութիւն առակաց Լամբրոնացւոյ, Ե-ԺԲ դդ. Բիշ., էջ 292: Էջմիածնի թ. 4211:

8. Հովհաննես (Ներսես Լամբրոնացու աշակերտ)

Սկևուայի վանք, 1198 թ., Վեշտասան ասացուածք Եփրեմի Ասորույ, Երուսաղեմ, Պողարյան 326, Ցուցակ Բ, էջ 199:

9. Վահրամ

Սկևուայի վանք, 1198 թ., Վեշտասան ասացուածք Եփրեմի Ասորույ, Պողարյան, Ցուցակ, էջ 199 (350ա-385բ էջերի գրիչը):

10. Խաչատոր (Ն. Լամբրոնացու աշակերտ)

Սկևուայի վանք, 1198 թ., Ողբն յարքեախակոպոս Տարտոսի ի Մեծ Ներսես ասացեալ Խաչատոր պաշտօնելի, Արին աշակերտի, «Բազմավեա» 1844 թ., էջ 242-243:

11. Ներսես (Ն. Լամբրոնացու և Գրիգոր Սկևուացու աշակերտ)

Սկևուայի վանք, 1205 թ., Ն. Լամբրոնացու մատենագրությունը, ՄՄ 10509:

12. Պետրոս քահանա

²⁴ Սկզբնագրված երկու Ավետարանները ավարտել է գրիշ և մկարիշ Գրիգոր սարկավագը 1216 և 1218 թվականներին:

Սկսուայի վաճք, 1206 թ., Մեկնութիւն Կաթողիկեայ թղթոց, Վիեննա, 1470 թ., «Համդիս ամսօրյա», 1978 թ., էջ 432-434:

13. Գրիգոր սարկավագ

Սկսուայի վաճք, Տարտու, 1216 թ., Ավետարան, Ն. Զուղա, Տեր-Ավետիսյան, Ցուցակ, էջ 37:

Սկսուայի վաճք, 1218 թ., Ավետարան, Ն. Զուղա, Տեր-Ավետիսյան, Ցուցակ, էջ 39:

14. Բարսեղ (Վաղուկ)

Սկսուայի վաճք, 1216 թ., Ցանքախապատում ճառք Գրիգոր Լուսատորչի, ՄՄ 5528

15. Թորոս²⁵

Սկսուայի վաճք, 1220-82 թթ., Աստվածաշունչ, Բ. Սարգիսյան, Ցուցակ Մխիթարյանց Բ. Վենետիկ, էջ 49-59 (Հիշվում է 93թ էջի Բիշատակարանում Բարսեղ գրչի անունը)

16. Կոստանդ

Սկսուայի վաճք, 1228 թ., Ժողովածու, Երուսաղեմ, 1295, Ն. Պողարյան, Ցուցակ Դ., էջ 515-51:

17. Պողոս

Սկսուայի վաճք, 1228 թ., Վերոբիշյալ ձեռագրում իր գրչությամբ կա Բիշատակարան:

18. Հովսեփ²⁶

Սկսուայի վաճք, 1229 թ., Ավետարան, Պողարյան, Ցուցակ ԺԱ, էջ 1:

19. Հովսկան

Սկսուայի վաճք, 1237 թ., Ավետարան, «Համդես ամսօրյա», 1951 թ., էջ 69-71:

20. Առաքել Երևանց

Սկսուայի վաճք, 1243 թ., Ավետարան, Բիւզանդիոն, 1902 թ., թ. 1725:

21. Հովսեփ

Սկսուայի վաճք, 1250 թ., Գրիգոր Սկսուացու ճառերը, Վիեննա, Տաշյան, Ցուցակ, էջ 557:

22. Կոստանդին²⁷

Սկսուայի վաճք, 1255 թ., Նոր Կոտակարան, ՄՄ թ. 6661:

Սկսուայի վաճք, 1268 թ., Աստվածաշունչ, ՄՄ թ. 287:

Սկսուայի վաճք, 1297 թ., Զերմանց միսիթարութիւն, ՄՄ 416:

²⁵ Ձեռագրի գրչության թվականը Բամարիվում է 1220-82 թթ., իսկ գրչության վայրը՝ Սկսուան: Հմտ. Բ. Սարգիսյան, Ցուցակ ձեռագրաց մատնադարանին Մխիթարյանց, Բ., էջ 49-59: Ա. Մարկոսյան, ԺԳ դարի ձևութեան, Էջ 2, էջ 545:

²⁶ Ա. Մարկոսյան, ԺԳ դարի ձևութեան, էջ 255:

²⁷ Ստ. Վարդամյան, Աշխ., էջ 33-41:

23. Ստեփանոս քահանա²⁸

Սկևոյի վանք, 1263 թ., Ավետարան, ՄՄ 8590:

Սկևոյի վանք, 1272 թ., Խազգիրք, Պողարյան Ցուցակ, Բ. Ե, Էջ 485:

Սկևոյի վանք, 1273 թ., Ավետարան, Ծողակաթ, 1966 թ., Էջ 94-98:

Սկևոյի վանք, 1275 թ., Խազգիրք, Սիրմելեան Ցուցակ ձեռագրաց Հալեպի, Էջ 243:

Սկևոյի վանք, 1278 թ., Մանրուստունք-Խազգիրք, ՄՄ 759:

Սկևոյի վանք, 1283 թ., Ավետարան, ՄՄ 6764:

Սկևոյի վանք, 1285 թ., Նոր Կտակարան, Ալիշան, Հայապատում Բ, Էջ 496:

Սկևոյի վանք, 1290 թ., Ավետարան, ՄՄ 2630:

Սկևոյի վանք, 1290 թ., Ավետարան, Կիլեսերեան ցուցակ ձեռագրաց Ամսիրիոյ, Էջ 1338-39:

Սկևոյի վանք, 1293 թ., Ավետարան, ՄՄ 5784:

Սկևոյի վանք, 1295 թ., Ավետարան, Սրվանձնյան Գ., Թորոս Աղբար Բ, Կ. Պոլիս 1884, Էջ 343-344:

Սկևոյի վանք, ԺԳ դար, Մեկնութիւն Ցովհաննու Ավետարանին Ցովհաճճիսի Ուկերերանի, ՄՄ 3816:

Սկևոյի վանք, 1286 թ., Հեթում Բ թագավորի Շաշոցը, ՄՄ 979:

24. Ստեփանոս Գումերիցանց (Գեորգ Սկևոպու աշակերտ)

Սկևոյի վանք, 1288 թ., Աստվածաշունչ, Ալիշան, Հայապատում Բ, Էջ 496-497:

Սկևոյի վանք, 1292 թ., Աստվածաշունչ, ՄՄ 179:

25. Սարգիս

Սկևոյի վանք, 1292 թ., Ժողովածու, Նոր Զուղայի Ամենափրկիչ վանք, Բ. Ա, Էջ 636-39:

26. Գրիշ անանուն

Սկևոյի անապատ, 1295 թ., Ավետարան, Քիւրտեան Բաւարածոյ:

27. Լևոն

Սկևոյի վանք, 1295 թ., Գեորգ Սկևոպու Մեկնութիւն Եսայեա, ՄՄ 482:

28. Ստեփանոս²⁹

Սկևոյի վանք, 1295 թ., Աստվածաշունչ Հեթում Բ թագավորի, ՄՄ 180:

²⁸ Ստեփանոս քահանան սխալմամբ նույնացվել է Ստեփանոս Վարիկացի գրչի նևտ. Ա. Գևորգյան, Աշկ. աշխ., Էջ 698: Հմտն Հ. Բաղայյան, Ստեփանոս քահանա և Ստեփանոս իրիցորդի գրիչների գործութեանում 13-րդ դարի 60-90-ական թվականներին, 1997 թ., Էջմիածին, Էջ 96-102:

²⁹ Հիշատակարանների բովանդակության նմանությունը թույլ է տալիս նմանություն, որ ձեռագրերի գործը նույնաց է, Բավանաբար Ստեփանոս քահանայի եղբոր՝ Կոստանդին քահանայի որդին է, Լևոն գրչի եղբայրը, որոնք Սկևոյի օրինակել են բազմաթիվ ձեռագրեր:

30. Պետրոս

Սկնուայի վաճք, 1296 թ., Եսայի մարգարէի և Թուղթ Պողոսի գրքերը, Ղ. Ալիշան, Սիստան, էջ 106-7: Մովսես, Սիոն, էջ 186:

31. Ստեփանոս իրիցորդի

Սկնուայի վաճք, թվ. ամբարտ, Կոչումն ընծայութեան Կիւրոհի Երուսաղեմացւու, ՄՄ 780:

Սկնուայի վաճք, 1297 թ., Ավետարան, մանրաժապավեն թ. 488, Երևան:

Սկնուայի վաճք, 1274 թ., Լուծմունք ի Սուրբ Գրոց Ժղվանք կոչեցեալ, Պողարյան, Ցուցակ, Բ. Գ., էջ 414:

32. Գրիգոր

Սկնուայի վաճք, 1298 թ., Եսայի մարգարէի մեկնութիւնը, ՄՄ 4214:

33. Հովհաննես³⁰

Սկնուայի վաճք, 1298 թ., Ավետարան, Ամթիլիաս 156, Դամիելյան Ցուցակ, էջ 452:

Սկնուայի վաճք, 1298 թ., Ավետարան, Սյուրմելյան, Ցուցակ, Բայ. Ճեռ. Հալեպի Ս. Քառասուն մամկունք եկեղեցւոյ և մասնաւորաց, Երուսաղեմ, 1935, էջ 394-95:

34. Գրիգոր Զորուկ³¹

Սկնուայի վաճք, 1299 թ., Ծաշոց, Պողարյան ցուցակ Բ, Երուսաղեմ 454, էջ 429-91:

35. Սիմեոն³²

Սկնուայի վաճք, 1301 թ., Գանձարան, Ցուցակ Նիկոսիայի ի Կիպրոս, Ն. Ակիմյան, Վիեննա 1961 թ., էջ 106-8:

36. Հովհաննես (որդի Միմայի)

Սկնուայի վաճք, 1310 թ., Նոր Կտակարան, Պողարյան, Բ. Զ, էջ 496-502:

Սկնուայի վաճք, 1328 թ., Վարք սրբոց, Պողարյան, Բ.Ա, էջ 302-307:

37. Հովհաննես

Սկնուայի վաճք, 1314 թ., Հատուածք Հին Կտակարանի, Վասպուրական 33, Լալյան ցուցակ, պյուտ. 59-62:

Սկնուայի վաճք, 1305 թ., Ավետարան, Մովսես, Սիոն, էջ 186:

Սկնուայի վաճք, 1305 թ., Աստվածաշունչ, Տաշլան ցուցակ, էջ 632:

Սկնուայի վաճք, 1319 թ., Աստվածաշունչ, Վենետիկ, թ. 17, Բ. Ա, էջ 19-20:

³⁰ Ա. Մաքուսայան, ԺԳ դարի Ճեռ. Բիշ., էջ 803:

³¹ 1325 թ. Սիմեոն գրչի օրինակած ՄՄ 2388 մամրուտունք խազգրի Բիշատակարանը վկայում է, որ Ճեռագիրը գրվել է Հիւան և ի ստոյգ արիմակաց... զոր էր գրեալ Գրիգոր Զորուկ: Լ. Խաչիկյան, ԺԳ դարի Ճեռ. Բիշ., էջ 198:

³² Ն. Ակիմյանը գրչին նույնացնում է Սկնուայի առաջնորդ Սիմեոն Եայսկոպոսի Բետ: Ն. Ակիմյան, Ցուցակ Նիկոսիայի ի Կիպրոս, 1961 թ., Վիեննա, էջ 106-108:

38. Ներսես

Սկևոայի վանք, 1314 թ., Մաշտոց, ՄՄ 2787:

39. Ստեփանոս դպիր

Սկևոայի վանք, 1324 թ., Ժողովածու, Օքսֆորդ տս. Avrt E2, Տիրայր վարդ. 17, թղթ. 119, էջ 314:

Սկևոայի վանք, 1324 թ., Վարք սրբոց, Սիսուան, էջ 107:

Սկևոայի վանք, 1341 թ., Շարական, Շովական, Սինա, էջ 186:

40. Հովհաննես

Սկևոայի վանք, 1325 թ., Ավետարան, ՄՄ 5708:

41. Հովհաննես կրոնավոր

Սկևոայի վանք, 1328 թ., Վարք սրբոց, Սյուլմելան, Ցուցակ Ա, էջ 236

42. Գրիգոր քահանա

Սկևոայի վանք, 1349 թ., Մամրուսմունք, ՄՄ 7157

43. Անանուն գրիչ

Սկևոայի վանք, ԺԳ-ԺԴ դդ., Սաղմոսարան, Սարգիսյան, Ցուցակ Ա, էջ 207:



Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ Է ԶՄԻԱԾՆՈՒՄ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

15-ՐԴ Դ.

Ավելի քան հարյուր տարի նվաճված Հայաստանում թուրքմենական Կարակոյունու և Ակ-կոյունու ցեղերի վարած տնտեսական կործանարար քաղաքականությունը երկիրը հասցրեց կործանման եզրին: Իրենց բերած ավերումներով այդ ցեղերի բախտումները նվազ դաժան չէին, քան սեղծուկների ու մոնղոլների բռնոր արհավիրքները: Գրեթե անընդհատ, տարիներ շարունակ սրի ու գերության էր մատնվում խաղաղ ազգաբնակչությունը Հայկական լեռնաշխարհում «ի յամենեւին չար եւ ի դառն եւ ի մեղութեան ժամանակի, յորում ամի բռնոր աշխարհն Հայոց՝ ի յառ եւ ի յաւարի, ի սուր եւ ի գերութիւն մատնեցաւ վասն ծովացեալ մեղաց իմոց եւ ի ձեռս անարդէս եւ անհծնալ ազգին մետողաց»,- ողբում է Թումա արեղան 1425 թ. Կարա-կոյունու Խաքանարի կողմից Վաճի գրավման առիթով Աղյօթամարում գրպահ Ավետարանի մի հիշատակարանում¹: Նույն անցքերը արձագանք են գտել մաս Թովմա Մեծոփեցու գրքում հետևյալ խոսքերով. «Եւ երկիր եւ աշխարհ ամենայն լցաւ գերեօք, լալով, սգով և կոծով»²: Օգտվելով անիշխանության պայմանաներից, Հայաստանի տարբեր շրջաններում թուրքմենական և քրդական առանձին ցեղապետեր հաստատել էին իրենց տիրապետությունը: Խաքանարը փորձում էր ստեղծել ինքնիշխան մի պետություն, թեմուրիդներն իրենց մերժին փորձում էին պահպանել իրենց գերիշխանությունը Լամկ-Թամուրի նվաճած երկրների վրա: Այդ պատճառով, մի կողմից թեմուրիդների եւ, մյուս կողմից՝ վերջինների ու Հայաստանում իմքնազլուս դարձած ցեղապետերի միջև տեղի էին ումենաւ անընդմեջ կոիվ-մեր: Ինչպես վկայում է 1425 թ. գրքած հիշատակարանը, Ակ-կոյունուների առաջնորդ Օսմանը, հարձակվելով Արմենի ու Արծկեի շրջանների վրա, կոտորել ու գերի է տարել տեղի բնակչությանը³: Հաջորդ՝ 1426 թ. գարնանը, Թովմա Մեծոփեցու

¹ Տե՛ս Լալայան Ե., Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպորականի, Թիֆլիս, 1915, էջ 353:

² «Պատմութիւն Լամկ-Թամուրայ և յաջորդաց իրոց, արարեալ Թովմա Վարդապետի Մեծոփեցու», Փարիզ, 1860, էջ 121 (այսուհետև՝ Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն):

³ Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպորականի, էջ 353:

Վկայությամբ, Արծիկի շրջանը ենթարկվել է նոր ավերածության, երբ Բաղեշի քրդերը Սավալանի առաջնորդությամբ գրավել են քաղաքը ու բնակչությանը ենթարկել կողոպուտի և կոտորածի⁴: Պատմիչի վկայությամբ, նովն բախտին է արժանանում նաև բնակչությունը Թոխատի, Սեբաստիայի, Խարբերդի ու Դերջանի, ուր 1435 թ. այցելում է Խականդարը⁵: Պակաս ավերիչ հետևանքներ չունեցան և ներշին երկարակտչական կոհիվները, որոնք շարունակական երևույթներ էին: Նման մի բախման պատկեր է Ակարագրում Թովմա Մեծոփեցին, երբ Խականդարի ու նրա եղբոր՝ Ջիանշահի միջն 1437 թ. ծագած կոհիվներից ավերածության է ենթարկվում Արարատյան նահանգը⁶:

Աղբյուրների վկայությամբ երկրի քայլայման պատճառներից եղել են ինչպես բազմաթիվ ու բազմատեսակ հարկերը, այնպես էլ նրանց գանձման դաժան ձևերն ու ամեն տեսակի երաշխիքի բացակայությունը. բնակչության վճարած գումարները նույն այդ վճարողներից երկրորդ, երրորդ անգամ էին գանձվում: Անհ թե ինչ է ասում այդ մասին ժամանակի գրիշներից մենքը. «Եթ ի հասանել ի պահս առաջնաւորաց դարձեալ միաբանեալ արարին խորհուրդ եւ գնացին ասպատակաւ ի գաւառն Մաճճկերտու եւ անդ է (եօթն) ոշլաղ զամէն ի սուր քաշեցին: Եթ զոչսարն ամէն եւ զտաւարն առին եւ բերին յԱրճեզ: Եթ դարձեալ նոր ոճիր գործեցին ի յԱրճեզ, զինչ որ յԱրճէ, եւ այլ աւելի: ԴԾ (400) թիր մալ ուղեցին յաւոր բարիկենդամին, որ անկաւ յամէն գուխ ԴԾ (4000) դեկան, եւ յամէն գութան ԺԾ (10000) դեկան: Եթ ողորմելի քրիստոնեացն ոչ գիտէին, թէ զի՞նչ ստացեն: Եթ դիմեցին չար կատաղիքն ի վերայ Բ (2) տաճ, մէկ հանօլայ (փոխանակագրով դրամ պահանջող) եւ բազում տանջանօք չարչարէին՝ կախէին, ծեծէին եւ ոչ զտանէր դրամ. վասն որոյ թէ հոգույ էր եւ թէ մարմնոյ, թէ ի վերայ հողոյք, թէ ի մերքեւ հողոյ, թէ զինդ է, թէ մատանի է, թէ լանջանոց է, թէ ոսկի է, թէ արծաթ, զամէն զինչ ուղեին, սուխն եւ դեռ ոչ կարացին ազատիլ: Եթ անողորմն իմամացիքն մտանէին ի տներն, զինչ որ գրաստ կայր, եւ գէր տաւար, զամէն առին և քաշեցին»⁷:

Չափազանց կարևորվում էր Հայոց Եկեղեցու դերը, քանի որ պետականության կորստից հետո ժողովուրդը կաթողիկոսական զարի մեջ էր որոնում այն, ինչը կորցրել էր: «Կաթողիկոսությունն այդ ժողովրդի միակ ազգային իշխանությունն էր, որ Եկեղեցու միջոցով և մանավանդ Եկեղեցու համար՝ կատարում էր ազգի զանազան մասերը միացնողի, հավաքողի խոշոր դերը»⁸: Այս առումով նա կապված էր աշխարհիկ իշխանության հետ՝ կատարելով քաղաքական իշխանության առանձին ֆունկցիաներ:

⁴ Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 85:

⁵ Նովն տեղում, էջ 104:

⁶ Նովն տեղում, էջ 107:

⁷ «Մամր ժամանակագրություններ», Բ. 1, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 128:

⁸ Լեռ, Հայոց պատմություն, Բ. 3-րդ, գիրք 1, Երևան, 1969, էջ 130:

Բազուատումյաց թագավորության անկումից հետո, երբ հայ ժողովուրդը պետական կազմավորման մակարդակի հասավ Կիլիկիայում, այնուեղ տեղափոխվեց և Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, որի իրավունքները տարածվում էին ողջ Հայոց աշխարհի վրա: Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսը 1066 թ. աթոռանիստ դարձրեց Կիլիկիայի սահմանների մոտ գտնվող Մյուղավը: Ավելի ուշ աթոռանիստը տեղափոխվեց նաև Սև լեռնա Կարմիր վանք (1105-1116 թթ.), ապա՝ Մովք (1116-1147 թթ.), այնուհետև՝ Հոռմկլա (1147-1292 թթ.) և, վերջապես, Գրիգոր է Անավարդեցին 1293 թ. այս տեղափոխության մայրաքաղաք Սիս: Կիլիկիայում իր գոյատևության ողջ ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսության ողջ գործունեությունը դրսնորվում է ժողովրդի ինչպես Աերքին (Իոգևոր, դպրության, մշակութի), այնպես էլ արտաքին (քաղաքական-միջազետական, դավանական-միջենեցական հարաբերություններ) կյանքի ոլորտներում: Թեև ազգում հայ-քաղկեդոնական, ապա նաև հայ-կաթողիկ դավանարանական խմբինների շուրջն ընթացող վեճերը Հայոց Կաթողիկոսության գործունեության մեջ կարևոր տեղ էին գրավում, ու չնայած գահակալներից ունաք Բյուզանդիայի ու կաթողիկ Եկեղեցի աջակցությունն ու համակրանքը ստանալու նպատակով համաճացին Հայոց Եկեղեցու դավանարանական դիրքերից, այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը կարողացավ անաղարտ պահել Հայ Առաքելական Եկեղեցու օրենքները՝ ապահովելով Հայոց Եկեղեցու ամբողջական անկախությունը:

Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո, 1375 թ., հրամայական դարձավ Կաթողիկոսության տեղափոխումը: Անդրադառնալով այդ խնդրին, Լեռն սիսալմամբ կարծում է, թե Սահ Կաթողիկոսարանը ամեն տեսակ շահատակությունների ասպարեզ դարձավ, որ սրբազնառությունն այլանդակ չափն է ընդունել, որ կաշառքի համար փող չունեցող եպիսկոպոսացուն իր կարգը գրավ էր դնում կաթողիկոսի մոտ և այդպիսով ձեռնադրություն ստանում: Այնուհետև մեղադրվում է Կոստանդին Զ Վահակացի Կաթողիկոսը, որի կարգադրությամբ 1439 թ., առանց եկեղեցական ժողով գումարելու, Աերկայացուցիչներ ուղարկեց Ֆլորենցիայի Եկեղեցական ժողովին, որոնք պաշտոնապես Հայ Եկեղեցու անունից ընդունեցին կաթողիկությունը⁹: Իրականում պատճառն այն էր, որ պետականության կորստից հետո Կաթողիկոսությունը, զրկվելով հուսալի պաշտպանությունից, բազմից ենթարկվում էր օտար իշխանությունների հալածանքներին: Հայոց Կաթողիկոսությունը կորցրել էր իր քաղաքական հենարանը, իսկ կաթողիկ Եկեղեցու ոսնձգությունների դեմ մղած երկարամյա պայքարի ու երկրամասում հայ բնակչության հետզհետև նորացման պատճառներով՝ քայլավել էր նաև տնտեսապես: Մասր էր վիճակը նաև Իոգևոր-մշակութային կյանքում: Դրությունը ավելի վատթարացավ 1426 թվականից հետո, երբ Կիլիկիայի վերջին հայ իշխանավոր Կոստանդինը թուեց Սիսը և բազմահազար արտագաղթողների հետ ապաստանեց Կիպրոս կղզում:

⁹ Լեռ, Աշվ. աշխ., էջ 130-131:

Քաղաքական ու տնտեսական այդպիսի աննպաստ պայմաններում Հայոց Կաթողիկոսությունը անզոր էր օտար երկրներում գոյացած հայկական գաղթօջախների մեւ մշտական մշակութային կապեր հաստատելու, ուստմնական կենտրոններ ստեղծելու և տարափյուր զանգվաճներին ազգային ավանդություններով շահկապելու գործում: Մեկուսանալով Կիլիկիայում, եկեղեցին կտրվել էր բնաշխարհի ժողովորդից, նրա համար կորցրել քաղաքական և կրոնական երթամնի կենտրոնի նշանակությունը: Նկատի ունենալով այդ հանգամանքները, հայ հասարակական-քաղաքական, եկեղեցական ու մշակության առաջադեմ գործիչները դեռևս 14-րդ դ. վերջերից ցանկանում էին Հայոց Կաթողիկոսությունը տեղափոխել ավելի ապահով վայր: Հարկ է նշել, որ այդ գործի նախաձեռնողը հանդիսացավ Գրիգոր Տաթևացին, որն անհաջող պայքար էր մղում լատինամոլության ամեն տեսակի դրսնորումների դեմ: Նրա գործի շարունակողները հանդիսացան Թովմա Մեծոփեցին և Հովհաննես Հերմոնեցին: Նրանց հաջողվեց համոզել Աղթամարի հակաթոռ Կաթողիկոս Զաքարիա Գ-ին, որը ցանկություն ուներ ժառանգելու Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռը: 1272 թվականից Աղթամարի կաթողիկոսությունը ժառանգած նշանակուր Սեֆերինյան ավատական տան ներկայացուցիչները, ունենալով զինական ուժեր, կարողացան օտար նվաճողներից պաշտպանել ոչ միայն Կաթողիկոսական Աթոռը, այլև ողջ Վասպուրականը: Եվ ինչպես հետագայում կտևանենք, նույն Զաքարիային հաջողվում է Կարա-կոյունուր Զհանշահի օժանդակությամբ իր զահակալության տակ կարճ ժամանակով միավորել Էջմիածնի և Աղթամարի Կաթողիկոսությունները: Մինչ այդ թ. Մեծոփեցին և Հ. Հերմոնեցին շրջաբերականներով դիմում են հայ հոգևոր ու աշխարհիկ երևելիներին՝ նպաստելու իրենց մըտադրության իրականացմանը: Հուշագիր ուղարկվեց Զաքարիա Սահ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգոր Մուսաքերյանին. «... գրեցին եպիսկոպոսունք եւ վարդապետք առ Գրիգոր Մուսաքերյանց» և Բրավիրեցին զալ Էջմիածնին», - հայտնում է Թովմա Մեծոփեցին իր հիշատակարանում¹⁰: Թեև կաթողիկոսը Բրամարվեց մասնակել Էջմիածնում գումարվող ժողովին, այնուամենայնիվ ստիպված էր համակերպվել: Հաջողվեց ստանալ նաև Երևանի կուսակալ Թուղուր Բեկի համաձայնությունը, որը, թ. Մեծոփեցու վկայությամբ, անձամբ առաջնորդեց պատվիրակներին ընտրության վայր՝ Էջմիածնին, «փողով և թմբուկով»¹¹: Օտար տիրակալի՝ հայ պատվիրակության մկանամար ունեցած այս բարեհոժար վերաբերմունքը պատճառաբանվում է այն հանգամանքով, որ վերջինս պակաս շահագրգուված չէր Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը Արարատյան նահանգում տեսնելու դա միաժամանակ նրան կտար հուսալի հենարան:

Էջմիածնի մեջ գումարված ազգային ընդհանուր ժողովը տեղի ունեցավ 1441 թ. մայիսի երկրորդ կեսին, որին, ըստ թ. Մեծոփեցու, մասնակցում էին ավելի քան 300

¹⁰ Թովմա Մեծոփեցի, Ցիշատակարան, Թիֆլիս, 1892, էջ 68:

¹¹ Նոյն տեղում:

պատվիրակներ հոգևոր և աշխարհիկ դասից. «... ազատը և որդիք ազատաց, ձեռնաւորը և տանուտէրք», այդ թվում համվանե չորս արքեպիսկոպոս՝ «Գրիգոր Եպիսկոպոս Արտագ գաւառի՝ առաջնորդ ուխտին Թաղէոսի, Ծնաւոն Եպիսկոպոս Սիսականի՝ առաջնորդ ուխտին Տաթևու, Գրիգոր Եպիսկոպոս՝ առաջնորդ Հաղբատավ, Թովհաննես Եպիսկոպոս՝ առաջնորդ Բջնոյ. որք էին առաջնորդք չորից Ալոռոց, որոց հաւանութեամբ լիներ ընտրութիւն կաթողիկոսի»¹²: Մասնակցում էին նաև 13 Եպիսկոպոս, 21 Վարդապետ, ինչպես նաև այլ հոգևորականներ, տանուտերեր, ձեռնավորներ: Որոշ բարձրաստիճան հոգևոր գործիչներ էի, ինչ-ինչ պատճառներով չկարողանալով մասնակցել, ուղարկել էին իրենց համաձայնագրերը: Քանի որ Սահ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգոր Մուսաբեկյանը հրաժարվել էր Անդրկայանալ և վերածնվել, ուստի առաջադրվել են այլ թեկնածուներ: Առաջադրվեցին Աղթամարի Կաթողիկոս Զաքարիան, Հավուց Թափի Եպիսկոպոս Զաքարիան, Արտագ գավառի Եպիսկոպոս Գրիգոր Զալալբեկյանը և Վայոց Ձորի Հերմոն վաճքի վաճարայի Հովհաննես Հերմոնցի վարդապետը: Հավանաբար կողմերից և ոչ մեկը չի հավաքում ամերածեց քիչ պարունակող ձայներ, ուստի և որոշում են կաթողիկոս ընտրել չեզոք մի ամձի: Ըստրությունը կամ է առնում Ակոռի գյուղի Ս. Հակոբ վաճքի վաճարայիրը, որտեղից և ստացել էր «Վիրապեցի» անունը: Վերջինիս օծում են Եպիսկոպոս և հաստատում Ամենայն Հայոց Կաթողիկոսական գահին: Այսպիսով, դարավոր դեգերումներից հետո Ամենայն Հայոց ընդհանրական Արքուու վերաբարստվում է Էջմիածնում: Դա քաղաքական ու ազգային-պատմական նշանավոր հրադարձություն էր հայ ժողովոյի կամքում:

Կիրակոս Վիրապեցին, որ բնութագրվում է «այր խոնարի և հնգամոցի, զգաստ ի բան իր և ի ճգնաղական վարս, խորհական խորհրդով և վարժ յիմաստու աստուածային գրոց»¹³ արտահայտություններով, հովվապետության հենց առաջին օրվանից ձեռնամուխ է լինում բարենորոշչական աշխատանքների իրականացմանը. «... ձեռն էարկ և ի շինութիւն վանորէից և եկեղեցաց, և նորոգեցաւ զտանարն Էջմիածնի, ես և Հոհիսկիմեայ, և Գայիանեայ շանայր վայելչացուցանել զԱրոռն, և ի յանգործ պահել զառաջնորդս ազգին»¹⁴: Վիրապեցին փորձում է արգելել մեռնի վաճառահանման գործնթացը և այն դարձնել միայն Էջմիածնի մենաշնորհը. «... մի ոք իշխնեցէ յայս մետք աստուածավաճառութիւն առնել, այսինքն զմեռոնն կամ զքահանայութիւնն վաճառել»¹⁵: Ալնումաներձ, Վիրապեցուն չհաջողվեց կացությանը տիրապետել, և երկու տարի անց ստիպված էր հրաժարական տալ:

¹² Նույն տեղում, հմտ. Մ. Զամյան, Պատմութիւն Հայոց, Բ. Գ., Վեմետիկ, 1786, էջ 486-487:

¹³ Մ. Զամյան, Աշկ. աշխ. էջ 488:

¹⁴ Տե՛ս Առյան տեղում, էջ 489:

¹⁵ Մատենադարան, ձեռ. 4669, թ. 203թ:

Երևանի կուսակալ Յաղութ Բենի համաձայնությամբ կաթողինոս առաջադրվեց Գրիգոր Ժ Զալալքելյանը (1443-1465 թթ. «Մակվեցի»), որն ավելի փոփաքանորդ է գործունեությունը. «... փոյթ կալաւ ի զուկ տանի զարդարության շինուածոցն, յորս բուռն հարեալ էր Կիրակոս եւ յաւել եւս նորոգել զվանս Էջմիածնի, ժողովեալ ի նպաստ այսր ամի բազում դրամն լիշխանաւորացն հայոց»¹⁶. Քաջ զիտակցելով, որ Էջմիածնի հեղինակության բարձրացման համար անչափ կարևոր է օրա տնտեսական կարողությունների ընդլայնումը, Գր. Մակվեցին ձեռնամուկն եղավ կալվածական հարդստություն ձեռք բերելուն: Անդրադառնալով Գր. Մակվեցու՝ յոթ զյուտերի (Վաղարշապատ, Աշտարակ, Բաթոմնջ, Նորագավիթ, Աղավնատուն, Քիրաջլու, Մուղլա) սեփականության իրավունքի ձեռքբերման մանրամասներին, Լեռն սխալմամբ այն տարածում է վերջինիս կաթողիկոսական տարիների վրա¹⁷: Իրականությունն այն է, որ դեռևս 1431 թ., երբ Գրիգորը պաշտոնավարում էր այլ վայրում, Կարակոյունու Խականդարի արքունիքում բարձր դիրքի արժանացած («Գերափառ բարձրիշխան, հոչակատոր, մերձատրագուցն մեծին փառիշխանի, բարձրապաշտոն մեծ վեզիրն, զիսաւոր արքունի խորհրդական»¹⁸) Ամիր Ռուստամը, որը Օրբելյան իշխանական տոհմից էր, օգտվելով իրեն ընձեռված հնարավորություններից, ձևակերպել է նշանակած գյուղերի վաճառքը և ապա գնող Գրիգոր Մակվեցու կողմից դրանք նվիրել Էջմիածնի վանքին: Պետք է ենթադրել, որ Ռուստամ Օրբելյանը ցանկություն է ունեցել Այրարատյան աշխարհում ստեղծել հայկական վասալ իշխանություն, ինչպես նաև ամուր նյութական հենարան ստեղծել եկեղեցական համագովային կենտրոնի համար:

Ընդհանուր առմամբ Գր. Մակվեցին ևս ամկարող գտնվեց տիրապետելու իրադրությունը: Ավելին, նա չկարողացավ նոյնիսկ օգտվել Զիանշահի՝ նեափ կաթողիկոսական Աթոռն ունեցած մեղմ վերաբերմունքից: Կաթողիկոսի միապետական իշխանությունը վերացավ այն բանից բետոն, երբ վերջինիս կարգադրությամբ Արիստակես վարդապետը նշանակվեց փոխանորդ. «... նեղեալ ի բոնութիւնէ այլազգեաց՝ որը պահանջէին բազում հարկս ի հայրապետանոցէ, եւ ոչ կարելով առանձին տանի զվիշտս ազգի տառապանաց՝ ընտրեաց իդ գործակից զոմն ի վարդապետաց Արիստակես անուն, յանձն արարեալ ի ձեռն նորա գիոզ արտաքին կառավարութեամ՝ կարգեաց զնա փոխանորդ եւ երկրորդ իւր»¹⁹: Նման պատճառաբանությունը դարձալ խոսում է կաթողիկոսի անվճուականության մասին: Փորձելով ար-

¹⁶ Տե՛ս Մ. Չամշյան, ԱշՎ. աշխ., էջ 491:

¹⁷ Լեռ, Հայոց պատմութիւն, Բ Գ, գ. 1, էջ 137: Նույն սխալմամբ կրկնում է Հար. Արրահամյամը, տե՛ս «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների մասին արխիվալին վավերագրեր», կազմեց Հար. Արրահամյամը, Երևան, 1941, էջ 12 (այսուհետև՝ Կալվածագրեր):

¹⁸ Կալվածագրեր, էջ 12:

¹⁹ Տե՛ս Մ. Չամշյան, ԱշՎ. աշխ., էջ 501:

դարացնել Գր. Մակվեցու ալս որոշումը՝ Մ. Օրմանյանը գրում է. «Այս կացութեան բուն նպատակն էր զանազան ազդեցիկ եկեղեցականներու փառափրութիւնը շահիլ. իսկ օգտակար կողմին եղան Աթոռոյ յաջորդութիւնը ապահովել»²⁰. Թե ինչպես ապահովվեց Աթոռի հաջորդությունը, ցուց տվեցին նևուազս դեպքերու: Օգտվեռով կաթողիկոսի ամկարողությունից, Կարապետ Եվդոկացի եպիսկոպոսը, որն ուներ Ամենայն Հայոց Կաթողիկոսության հավակնություն, չնաճաշեղով Էջմիածնի գերագահությունը, 1446 թ. Սիս քաղաքում հիմնադրում է Մեծի Տաճան Կիլիկիո Կաթողիկոսությունը, որը նշանակում էր Հայոց Եկեղեցու պառակտում: Գր. Մակվեցու անկարողությունը հասցրեց այն բաժին, որ 1460 թ. կաթողիկոսական փոխանորդ Արիստակես Վարդապետը ըմբռատանում է Արա դեմ և գրկում լիազորություններից. «... մինչև զօրացաւ Արիստակես, և ինքնին Վարդէ զիշխանութիւն հայրապետութեամ»²¹: Իր մերժին, Սարգիս Վարդապետը, որին Գր. Մակվեցին նշանակել էր աշատարի պաշտոնում, գողանալով Լուսավորչի Աշը, աճապարում է Թավորից՝ նպատակ ունենալով տեսակցել Զհանշաբի հետ ու ստանալ Արանից Կաթողիկոսական Աթոռում հաստատվելու աջակցություն: Աղթամարի Զաքարիա Կաթողիկոսը, սակայն, կարողանում է ավելի շուրջ տեսակցել Զհանշաբի հետ և, ունենալով վերջինիս կառշ Բեկում Խաթունի աջակցությունը, 1461 թ. հաստատվում է Հայոց Կաթողիկոսական Աթոռին: Զհանշաբի ցանկությամբ Սարգիս Վարդապետը օծվում է եպիսկոպոս ու նշանակվում փոխանորդ: Նոյն թվականին Զհանշաբը 12000-անց բնծեղազորով շարժվում է Բաղեշ՝ ճնշելու Միջազգետքում և Արևմտյան Հայաստանում ըմբռատացած Ակ-կրունու բուրքմեններին ու քրդերին. «Ըստ այն ժամանակին, - գրում է Առաքել Դավիթիթեցին, - եղել ցասմով փատշաբին ի վերայ ամիրային Բաղեշու և բարկութեամբ առաքեաց Դ զորագուխս երկուտասան հազար բնծեղազօրօք ի վերայ քաղաքին Խլաթայ, և գնացեալ աւարեալ քանդեցին զնա և բազում աւար ի մի ժողովեալ նստամ ի վերայ քերդին և Անդէին յառնուց զնա զնոյն հանդերձեալ էին առնել ի Բաղեշ, և ի Մուշ, ի Խութ և ի Սատունը և յամենայն գաւառուն նոցա»²²: Արշավանքի ըմբռացքում առաջին բերժին կոտորվելու ու գերեվարվելու էր տեղի հայ բնակչությունը, որն էլ գիտակցելով՝ Զաքարիա Կաթողիկոսը աճապարում է միջնորդի դեր խաղալ Զհանշաբի ու Բաղեշի ամիրայի միջն, ինչը որ Արան հաջողվում է: Զգալով, որ Զաքարիան վայերում է Զհանշաբի վստահությունը, և օգտվելով այն հանգամանքից, որ վերջինս զրադված է Ծիրազում իր որդու՝ Փիր-Բուրաղի ապատամբռությունը ճնշելով, Գրիգոր Մակվեցին և Արիստակես աթոռակալը, իրենց հետ ունենալով մի քանի հայ երևելիների, մեծաքանակ նվերներով 1462 թ. ուղևորվում են Նախիջևան, տեղի կուսակալ, Զհանշաբի մյուս որդի Հասան-Ալու մոտ: Խոստանալով հարկերի պարբերաբար վճարում,

²⁰ Մ. Օրմանեան, Հայոց Եկեղեցին, Կ. Պոլիս, 1911, էջ 98:

²¹ Տե՛ս Մ. Զամշան, Աշշ. աշխ., էջ 503:

²² Առաքել Դավիթիթեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 421:

Գր. Մակվեցին հասնում է այն բանին, որ Հասան-Ալին ուղևորվում է Արարատյան երկիր՝ Զաքարիային հեռացնելու, ինչպես նաև կաթողիկոսության ունեցվածքը կողոպտելու նպատակով։ Տեղեկանալով այդ մասին, Զաքարիան վերցնելով Լուսավորչի Աջն ու հարատությունները՝ աճապարում է Աղթամար։ Կաթողիկոսությունը կրկին ստանձնում է Գրիգոր Մակվեցին։ Վերջինիս մահից հետո, 1465 թվականից կաթողիկոսության տեղապահի կարգավիճակով հովանական Արիատակես աթոռակալը՝ տեղապահ ունենալով Սարգիս վարդապետին։

Արիստակեսի աթոռակալության տարիներին կրկին սրբեց հակամարտությունը Կարա-կոյունու և Ակ-կոյունու ցեղախմբերի միջև։ 1467 թ. մայիսին Զհանշաբը մի խոշոր բանակով արշավեց դեպի Ամիդ, որը Ակ-կոյունուների աթոռամիսատն էր։ Վեց ամիս շարունակ ասպատակելով Վասպորական աշխարհում ու Տարոնում, Կարա-կոյունուները այնտեղ միայն ավերածություններ ու կոտորածներ էին սղփում։ Ժամանակի ձեռագրերից մեկը այդ մասին հայտնում է. «Արդ, գրեցաւ ի թվին հայոց Զ և Ժէ (1468) ի դառն եւ ի դժուար ժամանակի, զի յայս ամի եղ Զհանշաբ դան ի քաղաքէն շահատանայ, որ է Թավորէզ. բազում հենի զարաք եւ կամէր երթալ ի վերայ քաղաքին Ամթայ. եւ ի յերթալն ի ճանապարհին բազումք դողային ի յանէ, զի այս Զհանշաբս բազում գաւառաց եւ ի քաղաքաց տիրէր։ ... Եւ արեւելք եւ արևմուտք ի յանէ սրոյ սրոյ դողային. եւ մնամ թէ հիւան եւ հարաւ ի հարկապահանջութիւն էր սրոյ։ ... Արդ, ի չուել ճանապարհ սրոյ բազում գաւառք աւերեցան եւ բնակիչք գաւառացն փախչէին ի յայրս եւ ի ծերպան վիմաց հովալլուկ մեռանին։ Եւ եկեալ ենաս ի գաւառն Տարաւանոյ ի դաշտն Մշոյ. եւ անդ բազում աւերս արարին զարքն նորա, զի բազում էին եւ անհամար եւ ոչ ճանաչէին զԱստուծ, եւ ասէին, թէ ինչ է քրիստոնեայն, եւ քրիստոնեայն աչք եւ բերան կայ։ Եւ դիմացին ի վաճրն Ղազարու եւ զլուարարն խորովեցին ի կրակն եւ նահատակեցին անցին գնացին»²³։ Աղբյուրների լույսունը Արիատակեսի գործունեության մասին բացատրվում է Արանով, որ Վերջինս ոչինչ չի ձեռնարկել հայ բնակչության կյանքը ապահովելու համար, ինչպես դա կատարեց Զաքարիա Կաթողիկոսը։ 1467 թ. Այնուների 10-ին Ժապաղուր գետի մոտ, Սանչախ կոչված վայրում, Ակ-կոյունու Ուզուն-Հասմանի գորքերը պարտության են մատնում Զհանշաբին, սպանում Արան, իսկ հաշորդ տարում հաղթելով նաև Կարա-կոյունու վերջին տիրակալ Հասան-Ալուն՝ Հայատանի թե՛ արևելյան, և թե՛ արևմտյան մասերում հաստատում են իրենց տիրապետությունը²⁴։

Ակ-կոյունու Ուզուն Հասանի իշխանության հենց առաջին տարում Էջմիածնի հովանապետությունը ստանձնած Սարգիս Բ Աշտարը (1469-1474 թթ.) իր գործունեությունը սահմանափակեց միայն Լուսավորչի Աջը Աղթամարից Էջմիածնի տե-

²³ Մանր ժամանակագրություններ, հ. 2, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 171-172:

²⁴ Գ. Կիրակոսյան, Հայատանը Լամկ-Թամուրի և թուրքեր ցեղերի արշավամբների շրջանում, Երևան, 1997, էջ 114-117։

դափոյիսներով խնդրով: Դա հաջողվեց իրականացնել միայն 1477 թ., երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն էր Հովհաննես Է աշակիրը (1474-1484 թթ.): Մինչ այդ Հայոց երկիրը կրկին և մթարկվեց դաժան փորձության: 1472 թ. փորձելով կանխել օսմանյան թուրքերի օրեցօր աճող հզորությունը և պահել իր հեգեմոն դերը Առաջավոր Ասիայում, Ռոգուն-Հասանը 100.000-ամոց բանակով Դերջանի ու Երզնկայի վրայով շարժվեց Թոխաթ-Եվլուկիա ուղղությամբ: Պատերազմական գործողությունները ուղեկցվում էին բնակավայրերի ավերմամբ, ինչ բնակչության մասայական կոտորածով ու կողոպուտով: Այդ մասին ուղղակի վկայություն ունի Ռոգուն-Հասանի մոտ Վենտիկի դեսպան Կատերին Չենոն: Նա գրում է. «Պարսկական բանակը (իմա Ռոգուն-Հասանի - Հ. Թ.) մտավ Դերջան սեպտեմբեր ամսին, հուր ու սուր տարածեց այդ երկրում, մոտ ու հեռու, կողոպտելով ու կոտորելով ժողովրդին, ահարենկելով բնակչությանը, այնպես որ ամեն որ փախազ այդ փոթորկից: Եվ անցնելով Երզնկա ու Թոքատ, նոյն կատարությամբ ամեն տեղ այրեց քաղաքներն ու զյուղերը»²⁵: Չնայած ունեցած մասնակի հաջողություններին, Ռոգուն-Հասանի ճակատագիրը վճռվեց 1473 թ. օգոստոսի 12-ին օսմանյան թուրքերի հետ Դերջանի դաշտում տեղի ունեցած երկրորդ ճակատամարտում, որ նա ծանր պարտություն կրելով՝ նահանջեց Թավորից: Օսմանյան թուրքերին անցավ Մեծ Հայքի Էրզրումի, Կամայի, Դերջանի ու Բաբերի շրջանները: Ռոգուն-Հասանի մահից հետո (1478 թ.) նրա ստեղծած հսկայածավալ պետությունը ապրեց ցացումներով լեցուն մի ժամանակաշրջան, երբ նրա հինգ դոդիմերի միջև ծավալվեցին գահակալական կոփակները²⁶: Կարճ ժամանակահատվածով հսկամարտ տիրակալները փոխարինեցին միմյանց և 15-րդ դ. վերջին Ակ-կոյունլուների իշխանությունը վերջնականապես կործանվեց: Այս ընթացքում Էջմիածնի հովվապետական Աթոռին բազմած Սարգս Գ-ն (1484-1515 թթ.) իր գործունեությամբ ոչնչով աչքի չընկավ: Ավելին, ինչպես վկայում է 1499 թ. Արծկեռու գրված հիշատակարանում Հակոբ գրիչը, Սարգս Կաթողիկոսը հալածանքներից խուսափելով ապաստանեց Հաղպատի վանքում²⁷:



²⁵ Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ռուսօքություններ, Բ. Ա., Երևան, 1932, էջ 165:

²⁶ Տե՛ս ԺԵ դարի հայերն և ծովագրերի հիշատակարաններ, մաս Գ., կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 56, 60, 96, 99, Մամր ժամանակագրություններ, Բ.1, էջ 194:

²⁷ ԺԵ դարի հիշատակարաններ, մաս Գ, էջ 276:

ԲԵԼՑԻՒ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական դառը համգամանքների բերումով աշխարհի տարբեր ծագերում հայտնված հայ ժողովրդի խյակները դրսարեցին զարմանալի կենսունակություն և հարատևելու անօրինակ կամք: Ամենուրեք կառուցում էին եկեղեցիներ, ստեղծուական մշակութային հաստատություններ, հասարակական կազմակերպություններ, որոնք կոչված էին սատար լինելու ազգային հճանության և դիմագծի պահպանությանը: Պատմական այս էջերը հայ ժողովրդի պատմության անքակտելի մասն են և ամբողջացնում են մեր պատկերացումները հայուններից մեռու ապրող հայության մասին:

Հաս տեղեկությունների, հայերը Մոլորավիա են գաղթել Ղրիմից և հաստատվել են այնտեղ դեռևս միշնադարում:

1401 թ. Սուչավայում հիմնվում է հայկական եպիսկոպոսություն, իսկ 1812 թ. երբ Բեսարարիան անցնում է Ռուսաստանին, Քիշնում, որ արդեն կային հայկական երկու եկեղեցիներ, հաստատվում է Բեսարարիայի հայոց հոգևոր առաջնորդությունը: Թեմակալ առաջնորդներից Վերջինը Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանն էր, որն ազգանվեր գործունեություն էր ծավալում Բեսարարիայի նահանգում, նպաստում հայաշատ քաղաքներում հայկական եկեղեցիներ կառուցելուն: Նահանգի հյուսափական մասում, որտեղ մեծ թվով հայեր էին բնակվում, չունեին իրենց ազգային եկեղեցին, և շատերն անգամ պատկերացում չունեին եկեղեցու մասին, երբևէ Պատարագ չէին լսել: Այդպիսի մի քաղաք էր Ռեսուտ գետի ափին գտնվող Բելցի քաղաքը, որտեղ ապրող հայերը եկեղեցի չունեին: Տեղի արժանավոր այրերը մի քանի անգամ փորձեր են արել եկեղեցի կառուցելու, բայց դրամ չունեմալու պատճառով պահանջանարկ մնացել է ամկատար: 1901 թ. Նոր Նախարարական և Բեսարարիայի հայոց վիճակային կոնսիստորիայի թեմակալ առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը օգնություն ստանալու ակնկալիքով դիմում է Սամկո-Դեսերտությունի հայոց եկեղեցական խորհրդին, մի քարեպաշտ հիմնարկի, որը քազմաթիվ անգամներ էր օգնության ձեռք մենակ դիմող բոլոր կազմակերպություններին և անհատ անձանց, բայց այդ ընթացքում խորհրդությունը ի վիճակի չէր օգնություն ցուց տալու, և Բելցի եկեղեցու կառուցման մասին երկար ժամանակ չխոսվեց:

Տարիներ են անցնում: Բելցիում հայ եկեղեցի կառուցելու կարիքը գնալով ավելի է զգացվում: 1908 թ. Ակզրին քաղաքում մահանում է Մարիա Փոքշանյանը՝ թողմելով մի կտակ, ըստ որի Բելցի քաղաքի իրեն պատկանող մի հողամասը, այն է՝ Բուշարդի և Խոստինակու փողոցների ամկյունում գտնվող հատվածը տրամադրում է առաջնորդարանին՝ հայկական եկեղեցի կառուցելու նպատակով՝ պայմանով մի-

այն, որ եթե հիմք տարում եկեղեցի չկառուցվի, ապա փոխարենը կառուցվի հայկական դպրոց:

